«… Կառավարության գործունեության բազմաբնույթ դրսևորումների առանցքում ընկած կլինի երկրի տնտեսության զարգացումը, որի արդյունքում պետք է ապահովվի մեր օրերի թերևս համազգային կարևորագույն գաղափարը՝ ապահովել հայ մարդու, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու արժանապատիվ կյանքն ու կենցաղը: Վերջին հաշվով մենք, իբրև կառավարություն, պարտավոր ենք գործել, ելակետ ունենալով մարդկային և ազգային արժանապատվության գիտակցումը...»

**ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության

# Ծ Ր Ա Գ Ի Ր Ը

- Գնահատականներ
- Վերլուծություններ
- Միջոցառումներ

ՀՀ կառավարության «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն»

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

## Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55 հոդվածի 4-րդ կետով՝ որոշում եմ.

1. Անդրանիկ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության վարչապետ:
2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ — Ռ.Քոչարյան

Երևան
12 մայիսի, 2000թ.
ՆՀ-572

### ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ծնվել է 1951 թվականի հունիսի 12-ին, Երևան քաղաքում, ուսուցիչների ընտանիքում: Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը՝ հաշվիչ մեքենաների ինժեների որակավորմամբ: Մինչ 1990 թ. աշխատել է Երևանի տարբեր գիտահետազոտական ինստիտուտներում և հաշվիչ կենտրոններում՝ Գազի արդյունաբերության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղում, էներգետիկայի ինստիտուտում, Առևտրի նախարարության հաշվիչ կենտրոնում, այնուհետև՝ Հատուկ ծրագրերի պետական վարչությունում: 1995-99թթ. եղել է Ազգային ժողովի առաջին գումարման պատգամավոր: 1999թ. կրկին ընտրվել է ԱԺ պատգամավոր: «Միասնություն» խմբակցության ղեկավարն է: Քաղաքական գործունեությամբ զբաղվում է 1965 թվականից: 1968-ից եղել է ընդհատակյա Ազգային միացյալ կուսակցության անդամ: 1974 թվականին քաղաքական գործունեության համար դատապարտվել է երկու տարի ազատազրկման: 1992 թվականից Հանրապետական կուսակցության անդամ է, ՀՀԿ խորհրդի անդամ: Նույն թվականի հունվարից Հանրապետական կուսակցության խորհրդի նախագահն է: Ամուսնացած է, ունի երեք երեխա:



ՀՀ ներկա կառավարությունը ձևավորվեց հանրապետության համար քաղաքական և տնտեսական բարդ իրավիճակում, երբ իշխանությունների միջև չկար միասնականություն, համագործակցված աշխատանք: Քաղաքական գերլարված մթնոլորտը, բյուջեի մուտքերի ապահովման բավականին ցածր մակարդակը, միջազգային կազմակերպություններից ակնկալվող ֆինանսական միջոցների ձգձգումները, հոկտեմբերի 27-ի ողբերգության նախաքննության ոչ միարժեք արձագանքները այնպիսի իրավիճակ էին ստեղծել երկրում, երբ իշխանություններից ցանկացածի կամ քաղաքական ուժերի անշրջահայաց կես քայլն անգամ ծանր հետևանքների կարող էր հանգեցնել:

Այս իրավիճակում ՀՀԿ-ն ստանձնեց գործադիր իշխանության գործունեության պատասխանատվությունը: Իշխանության 3 թևերը հայտարարեցին երկիրն ստեղծված վիճակից դուրս բերելու գործում ջանքերը համատեղելու մասին: Ի սկզբանե պարզ էր աշխատանքի ծանրությունն ու չափազանց մեծ պատասխանատվության աստիճանը, պարզ էր նաև, որ հոկտեմբերի 27-ին նահատակված առաջնորդների սկսած գործը պետք է շարունակվեր, շարունակվեր նույն քաղաքականությունը, տնտեսական նույն ուղին:

Անցած երեք ամիսները, բնական է, որ տնտեսության մեջ միանգամից բեկում մտցնել չէին կարող, սակայն քայլ առ քայլ անհրաժեշտ էր առաջ գնալ: Տարեսկզբի համեմատ բյուջետային մուտքերի հավաքագրման մակարդակը բարձրացավ, հնարավոր դարձավ տարիներով կուտակված սոցիալական վճարների պարտքերի՝ աշխատավարձերի, կենսաթոշակների վճարումներ սկսել, մանրակրկիտ մշակվեցին և հաստատվեցին ՀՀ կառավարության գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումները, ակտիվ աշխատանք սկսվեց Մեղրիի տարածաշրջանի՝ իբրև երկրի համար ռազմավարական նշանակության տարածքի, ծրագրի իրագործման ուղղությամբ, զուգահեռաբար մշակվեց սահմանամերձ Տավուշի մարզի ծրագիրը, որում ընդգրկված միջոցառումների իրագործումը ևս սկսված է: Այս բոլոր ծրագրերը, ինչպես խոստացել էինք, հրապարակվեցին՝ թափանցիկ և վերահսկելի դարձնելով կառավարության աշխատանքը:

Իհարկե, կառավարության 100-օրյա աշխատանքը չի կարող լիարժեք պատկերացում ձևավորել գործադիր իշխանության գործունեության մասին, սակայն, դրա ամփոփումն ինչ-որ չափով հասականալի է դարձնում, թե այդ ընթացքում ինչ հիմքեր են դրվել հետագայի համար: Իսկ նման հիմքեր, կարծում եմ, կան:

Կարևորը երկրի կայուն վիճակն է, որից է մեծապես կախված նաև տնտեսական դաշտում դրական տեղաշարժերի հասնելը: Այդ հարցում կառավարությունը վճռական է տրամադրված և հետևողական է լինելու իր ծրագրի ցանկացած դրույթի իրագործման համար:





**Ռ.Քոչարյան** - «…Ես ամբողջությամբ աջակցելու եմ վարչապետին, նոր նշանակված կառավարությանը, որովհետև որոշ սկզբունքների մասին մենք պայմանավորվել ենք Անդրանիկ Մարգարյանի հետ: Այն բոլոր մեկնաբանությունները, որ այս կառավարությունը ժամանակավոր է, ես չեմ ընդունում: Համոզված եմ, որ այս դեպքում կառավարությունը կաշխատի երկարատև, արդյունավետ ու լուրջ արդյունքներով …»

**Ա.Մարգարյան** - «… Իշխանությունները, այդ թվում և կառավարությունը, պետք է անեն ամեն ինչ, որպեսզի համագործակցված, միասնական ուժերով երկիրը ստեղծված իրավիճակից դուրս բերեն: Այլևս պետք է բացառենք հանրապետության նախագահ- կառավարություն - ԱԺ հակասությունները, որոնք խարխլում են պետականության հիմքերը: Կառավարությունը՝ նախագահի հետ համատեղ պետք է վաղվա օրվա պատասխանատուն դառնա …»

## ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի խոսքը վարչապետ Անդրանիկ Մարգարյանին ՀՀ կառավարության նիստում ներկայացնելու ժամանակ.

«Վարչապետը նշանակված է, այս վերջին մեկ-երկու շաբաթվա ընթացքում հանրապետությունում քննարկված թեման համարում եմ սպառված: Եվ հիմա շատ ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնենք տնտեսական խնդիրների լուծմանը, վարենք ակտիվ, նույնիսկ՝ ագրեսիվ տնտեսական քաղաքականություն:

Քաղաքական ուժերի հետ հանդիպման ժամանակ ես առաջարկում էի վարչապետի թեկնածուի երկու տարբերակ: Մեկը, որ վարչապետը լինի մեծամասնության թեկնածու՝ բայց իր առաջնորդով: Տվյալ դեպքում խոսքը գնում է Հանրապետական կուսակցության ղեկավարի թեկնածության մասին, քանի որ մեկ տարի առաջ ընտրության արդյունքում ձևավորված էր ստատուս-քվո և անհրաժեշտ էր այդ ստատուս-քվոն պահպանել: Կար նաև մեկ այլ կարևոր խնդիր՝ ներքաղաքական կայունությունը պահպանելը, ինչը կնշանակեր, որ բոլորի առջև կուսակցությունը պատասխանատվություն է ստանձնում կառավարության աշխատանքի համար, և կառավարությունը հնարավորություն է ունենում աշխատել ԱԺ-ի հետ: Երկրորդ տարբերակը հետևյալն էր, եթե կուսակցությունը այդ պատասխանատվությունից խուսափի, չցանկանա ստանձնել այն, ապա կգործի տեխնոկրատ վարչապետի տարբերակը, որից հետո ես՝ որպես նախագահ, պետք է փորձեի ԱԺ-ում տարբեր կուսակցությունների հետ ձևավորել այն մեծամասնությունը, որը կապահովեր արդյունավետ աշխատանք: Մեկ շաբաթ առաջ կուսակցությունների ղեկավարների հետ մեր հանդիպման ժամանակ այս 2 մոտեցումներն էին առաջարկվել: ՀՀԿ-ն պատասխանատվություն ստանձնելու որոշում կայացրեց: Այդ պատասխանատվությունը, ըստ էության, ստանձնել ենք միասին՝ և ՀՀ նախագահը, և տվյալ դեպքում կուսակցությունը: Բայց թեկնածուի վերաբերյալ դաշինքի մյուս թևի մոտեցումներն այլ էին. նրանք պատրաստ են աջակցել և կառուցողական մասնակցություն ունենալ, բայց պատասխանատվությունը կիսելու հարցում պատրաստակամ չեն: Կարծում եմ առաջիկա մեկ շաբաթվա ընթացքում նոր նշանակված վարչապետը պետք է ԱԺ-ի խմբակցությունների հետ շատ ակտիվ աշխատի: Ես էլ եմ պատրաստ մասնակցել այդ աշխատանքին, որ ԱԺ-ում ձևավորվի մեծամասնություն, միգուցե դա կլինի կոալիցիոն սկզբունքներով մեծամասնություն, բայց այնպիսին, որը կապահովի կառավարության լիարժեք աշխատանքը ԱԺ-ի հետ:

Շատ է խոսվում ուժեղ կառավարության և ուժեղ վարչապետի մասին: Շատ դեպքում դրա տակ հասկացվում են խարիզմատիկ ընդունակություններ կամ տնտեսագիտական գիտելիքներ, բայց կարծում եմ ամենաուժեղն այն կառավարությունն է, որն ի վիճակի է աշխատել ԱԺ-ի հետ: Կարելի է ունենալ շատ խոր, շատ լայն տնտեսական գիտելիքներ, բայց դրանք ԱԺ-ում հավանություն չստանան, մնան ուղղակի թղթի վրա, լինեն զուտ պետքական գիտելիքներ, որոնք հետո չեն վերածվելու գործնական

քայլերի: Վարչապետի առաջին խնդիրը ԱԺ-ի հետ սերտ համագործակցություն ունենալն է: Վարչապետի պաշտոնը զուտ տնտեսական չէ, այլ քաղաքական պաշտոն է: Անդրանիկ Մարգարյանն ունի քաղաքական փորձ, համոզված եմ, որ շատ կարճ ժամանակահատվածում ձեռք կբերի նաև այդ պաշտոնում աշխատելու համապատասխան փորձ:

Մեկ շաբաթ առաջ ձեզ հետ հանդիպման ժամանակ պայմանավորվել էինք, որ բոլորդ շարունակելու եք ձեր աշխատանքը, մինչև նոր կառավարության ձևավորումը: Կառավարության անդամների զգալի մասը կշարունակի իր աշխատանքը, քանզի 2-3 ամիսը մեկ նախարար փոխելը սխալ է, բայց և նորանշանակ վարչապետն ու նախագահը պետք է բանակցությունների արդյունքում ձևավորեն այնպիսի կառավարություն, որը ԱԺ-ի հետ արդյունավետ կաշխատի: Շատ բան կախված է նաև կուսակցությունների դիրքորոշումներից՝ ՀՀԿ-ի հետ պատասխանատվությունը կիսելու կառավարության աշխատանքների համար պատասխանատու լինելու որոշման մասին է խոսքը:

Ես ամբողջությամբ աջակցելու եմ վարչապետին, նոր նշանակված կառավարությանը, դիտորդի կարգավիճակ չեմ ստանձնելու, որովհետև որոշ սկզբունքների մասին մենք պայմանավորվել ենք Անդրանիկ Մարգարյանի հետ: Համոզված եմ, որ միայն համատեղ նպատակաուղղված աշխատանքով ենք ի վիճակի հաջողության հասնել: Այն բոլոր մեկնաբանությունները, որ այս կառավարությունը ժամանակավոր է, չեմ ընդունում: Մենք ունեցել ենք բազմաթիվ վարչապետներ և ամեն անգամ թվում էր, թե աշխատանքը երկարատև է լինելու, բայց տարբեր հանգամանքների պատճառով միշտ հակառակն է եղել: Եթե այժմ կա տրամադրվածություն, թե կառավարությունը ժամանակավոր է, ապա, կարծում եմ, ճիշտ հակառակ արդյունքն ենք ունենալու: Այո, ճիշտ հակառակ արդյունքն ենք ունենալու, եթե կառավարությունը միասնական աշխատի, կառավարության անդամները քաղաքական տարբեր խաղերի մեջ չմտնեն: Համոզված եմ, որ այս դեպքում կառավարությունը կաշխատի երկարատև, արդյունավետ ու լուրջ արդյունքով: Շնորհավորում եմ նոր նշանակված վարչապետին, հաջողություն ցանկանում հետագա աշխատանքներում, ինչպես նաև մոտակա մեկ շաբաթվա ընթացքում կառավարության ձևավորման գործում»:

## Վարչապետ Անդրանիկ Մարգարյանի պատասխան խոսքը.

«Շնորհակալ եմ ՀՀ նախագահին՝ վստահության համար: Շնորհակալ եմ Հանրապետական կուսակցությանը, որ այս դժվարին ժամանակներում՝ ինձ համար անչափ պատասխանատու պահին՝ ինձ անվերապահ սատարելու պատրաստակամություն դրսևորեց:

Պետք է փորձենք այսուհետ հաշվի նստել առկա իրողությունների հետ, չթերագնահատել ստեղծված իրավիճակի բարդություններն ու հնարավոր հետևանքները: Իսկ իրողությունն այն է, որ բոլորը վաղուց արդեն հոգնել են ամիսներ շարունակվող ներիշխանական խարդավանքներից և ազգակործան պառակտումներից, ինչը սպառնում է երկրի անվտանգությանը և չի բխում պետականության շահերից: Ստեղծված անվստահության մթնոլորտը ստիպում է լուրջ հետևություններ անել:

Իշխանությունները, այդ թվում և կառավարությունը պետք է անեն ամեն ինչ, որպեսզի համագործակցված, միասնական ուժերով երկիրը ստեղծված իրավիճակից դուրս բերեն: Այլևս պետք է բացառենք հանրապետության նախագահ-կառավարություն-ԱԺ հակասությունները, որոնք խարխլում են պետականության հիմքերը:

Մեր կուսակցության որոշումն է՝ ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժերի համագործակցությամբ՝ բոլոր հնարավոր ջանքերը գործադրենք երկիրը այս վիճակից դուրս բերելու համար: Կառավարությունը՝ նախագահի հետ համատեղ պետք է վաղվա օրվա պատասխանատուն դառնա: Մենք շարունակելու ենք այն գործը, որն արդեն սկսված է, բոլոր ջանքերը ուղղելու ենք և տնտեսական, և քաղաքական ճգնաժամի հաղթահարմանը, ինչի երաշխիքը անմնացորդ աշխատանքն է: Այս կառավարությունը լինելու է Վազգեն Սարգսյանի և Արամ Սարգսյանի կառավարությունների ժառանգորդը, որն իրագործելու է «Միասնություն» դաշինքի ծրագիրը:

Վստահության այն մթնոլորտը, որը կար Վազգեն Սարգսյանի և Կարեն Դեմիրճյանի օրոք, պետք է կարողանանք վերականգնել: Ըստ արժանվույն պետք է գնահատել Արամ Սարգսյանի գլխավորած կառավարության վեց ամիսների գործունեությունը, որի արդյունքում հնարավոր եղավ երկիրը զերծ պահել աղետալի առճակատումներից և թույլ չտալ տնտեսության անկում:

Կառավարության հաճախակի փոփոխությունները չեն նպաստում պետության և տնտեսության առաջընթացին: Կառավարության անդամի աշխատանքը պետք է գնահատվի ոչ թե նրա կուսակցական պատկանելիությամբ, այլ ընդունված որոշումների հստակ կատարմամբ, պատասխանատվության բարձր գիտակցմամբ և, իհարկե, կատարողական կարգապահությամբ:

Դժվարին ճանապարհը միասին ենք անցնելու: Կցանկանայի, որ հավատով լցվեինք մեր գործի հանդեպ, վստահ լինենք մեր ուժերի նկատմամբ և փորձենք կրել այն հոգսը, որն ունի ժողովուրդը : Նա մեզ է վստահել և պարտավոր ենք արդարացնել նրա հույսերը: Ուստի պետք է հստակեցնենք և այսօրվա, և ապագա մեր բոլոր անելիքները:

Վաղվա օրը մերն է լինելու, այսօրվանից դառնանք այդ օրվա երաշխավորը»:

## «ՊԻՏԻ ԳՈՐԾԵՆՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ»

ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը նոր կառավարության աշխատանքային առաջին օրը նշանավորեց նաև լրագրողներին ճեպազրույցի հրավիրելով: Իր խոսքում վարչապետն ասաց.

- Առաջին հանդիպմանը ձեզ հրավիրել եմ զուտ կառավարության կառուցվածքի հաստատման և կազմավորման կապակցությամբ: Մեր հանգամանալից զրույցը կկայանա փոքր-ինչ ուշ՝ կառավարության ծրագրի ներկայացման առիթով: Նախ՝ կառավարության կառուցվածքի վերաբերյալ:

Ինչպես արդեն գիտեք, փոփոխությունները նվազագույն են: Նախկինում էլ կային կարծիքներ, որ թեև առողջապահությունն ու սոցիալական ապահովությունը շատ սերտորեն կապված են, սակայն այդ ոլորտներում առկա բազմաթիվ խնդիրները և դրանցից յուրաքանչյուրում սկսված բարեփոխումների շարունակելիության անհրաժեշտությունն աննպատակահարմար նախադրյալներ են նախարարությունների միավորման համար: Մի քանի նախարարությունների միաձուլման մասին փետրվարի 28-ի ՀՀ նախագահի հրամանագրից հետո անցած երեք ամիսները հաստատեցին այդ մտավախությունները: Կառավարության ու այդ ոլորտների գործունեության արդյունավետությունն ապահովելու համար որոշվեց վերականգնել առողջապահության և սոցիալական ապահովության նախարարությունների ինքնուրույն գործունեությունը: Գուցե հետագայում, երբ առողջապահության նախարարությունն ավելի շատ վերապահվի սոցիալական խնդիրների լուծմամբ զբաղվելու առաքելություն ու ոլորտի ընդհանուր քաղաքականության մշակում, արդարացված լինի սոցիալական ապահովության նախարարության հետ միանալը, ինչպես մի շարք երկրներում է: Սակայն մեր իրականության մեջ այդ երկու ընդգրկուն և բազմաթիվ խնդիրներ ունեցող նախարարությունների ներառումը մեկ նախարարության մեջ այսօր արդյունավետ աշխատանք ապահովել չի կարող: Վերջին ամիսները ցույց տվեցին, որ լուրջ բարդություններ կարող են առաջանալ նաև բնապահպանության ոլորտում: Գյուղատնտեսության և բնապահպանության նախարարությունների միաձուլմամբ ոչ պարզեցվում էր ոլորտի կառավարումը, ոչ էլ կրճատվում էր կառավարման ապարատը: Ավելին. անհրաժեշտություն էր առաջանում կառավարությանն առընթեր ստեղծել առանձին հինգ վարչություններ: Այդ պատճառով որոշվեց վերականգնել բնապահպանության նախարարությունը՝ մի փոքր այլ կառուցվածքով և ֆունկցիաներով, ինչը, հուսով եմ, հնարավորություն կտա թե՛ խուսափել նոր խնդիրների առաջացումից, թե՛ լուծել նախկինում եղածները:

Այժմ՝ կառավարության կազմի մասին: Այն ձևավորվել է հանրապետության նախագահի և խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի հետ խորհրդակցությունների արդյունքում՝ հաշվի առնելով նաև անկախությունից ի վեր այս հարցում հաստատված ավանդույթները: Ես համոզված եմ, որ երկիրն այս բարդ վիճակից դուրս բերելու գլխավոր նախադրյալներից մե-

կը հանրապետության նախագահի, կառավարության և Ազգային ժողովի սերտ համագործակցությունն է: Կարծում եմ՝ այն հանգամանքը, որ կառավարության գործունեության համար լիարժեք պատասխանատվություն են ստանձնել հանրապետության նախագահը, Հանրապետական կուսակցությունը և ԱԺ «Կայունություն» խումբը, աջակցության և լուրջ համագործակցության վերաբերյալ պայմանավորվածությունները կառավարությունում իրենց ներկայացուցիչներն ունեցող այլ կուսակցությունների հետ, ինչպես նաև մեր պատրաստակամությունը՝ համագործակցելու մյուս քաղաքական ուժերի հետ, հիմքեր են տալիս պնդելու, որ կառավարություն-Ազգային ժողով հարաբերությունները կարող են ստանալ նոր որակ: Եթե ավելացնենք նաև այն, որ մենք շատ լավ պատկերացնում ենք պահի լրջությունը, առկա բարդ խնդիրները ու դրանց լուծման ուղիները, պարզ կդառնա, որ հիմնավոր է կառավարության երկարատև ու արդյունավետ աշխատանքի վճռականությունը: Համոզված եմ, որ միայն նման աշխատանքի արդյունքում հնարավոր կլինի ոչ միայն երկիրը դուրս բերել ծանր վիճակից, այլև անհրաժեշտ մթնոլորտ ստեղծել մեր ժողովրդի ուշադրության կենտրոնում գտնվող հոկտեմբերի 27-ի ողբերգական իրադարձությունների անաչառ քննության և մեղավորների բացահայտման համար:

Եվ վերջապես, մի քանի խոսք մեր գործունեության սկզբունքների մասին:

Ամենակարևորը երկրում օրենքի գերակայության հաստատումն է: Օրենքի առաջ պետք է բոլորը հավասար լինեն՝ սկսած բարձրաստիճան պաշտոնյայից մինչև գործարարն ու սպառողը: Պետական կառավարման և առաջին հերթին կառավարության աշխատակազմում անհրաժեշտ է հաստատել խստագույն կարգապահություն և պատասխանատվություն: Յուրաքանչյուր պետական պաշտոնյայի գործունեությունը պետք է գնահատվի բացառապես նրա աշխատանքի արդյունավետությամբ: Մենք ծավալելու ենք անողոք պայքար կոռուպցիայի՝ կաշառակերության, հովանավորչության և պետական ունեցվածքի յուրացման դեմ: Բարեփոխումները պետք է դառնան տնտեսական բարեփոխումների ոչ թե մեխանիկորեն արված թարգմանությունը, այլ բովանդակությունը: Եվ սրանք սոսկ դեկլարատիվ հայտարարությունների ու բարի ցանկությունների արձանագրում չեն: Կառավարության գործունեության և տնտեսական քաղաքականության մանրամասներին կանդրադառնամ մի փոքր ուշ՝ ծրագիրը ներկայացնելիս, որն արմատապես չի տարբերվելու Վազգեն Սարգսյանի և Արամ Սարգսյանի կառավարությունների ծրագրերից և ունենալու է դրանցում ընդգրկված դրույթների օգտագործման հստակ և գործուն մեխանիզմներ:

# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը մայիսի 20-ին հրամանագիր է ստորագրել Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքում փոփոխություններ կատարելու մասին: Հրամանագրի համաձայն, բաժանման ձևով վերակազմավորվում են՝

ա) Հայաստանի Հանրապետության առողջապահության և սոցիալական ապահովության նախարարությունը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության

բ) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և բնօգտագործման նախարարությունը՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության:

Հրամանով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հետևյալ կառուցվածքը.

Ազգային անվտանգության նախարարություն
Առողջապահության նախարարություն
Արդարադատության նախարարություն
Արդյունաբերության և առևտրի նախարարություն
Արտադրական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար
Արտաքին գործերի նախարարություն
Բնապահպանության նախարարություն
Գյուղատնտեսության նախարարություն
Էներգետիկայի նախարարություն
Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Կրթության և գիտության նախարարություն
Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն
Ներքին գործերի նախարարություն
Պաշտպանության նախարարություն
Պետական գույքի կառավարման նախարարություն
Պետական եկամուտների նախարարություն
Սոցիալական ապահովության նախարարություն
Տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն
Տրանսպորտի և կապի նախարարություն
Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն

# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

Ղեկավարվելով Սահմանադրության 55 հոդվածի 4 կետով նախագահ Ռոբերտ Քոչարյանը մայիսի 20-ին հրամանագիր է ստորագրել Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներ նշանակելու մասին:

ՀՀ կառավարության անդամներ են նշանակվել.

Կարլոս ՊԵՏՐՈՍՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նախարար
Արարատ ՄԿՐՏՉՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար
Դավիթ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար
Կարեն ՃՇՄԱՐԻՏՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարար
Դավիթ ԶԱԴՈՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար
Վարդան ՕՍԿԱՆՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար
Մուրադ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար
Զավեն ԳԵՎՈՐԳՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար
Կարեն ԳԱԼՈՒՍՏՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարար
Անդրանիկ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Էդուարդ ՂԱԶԱՐՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար
Ռոլանդ ՇԱՌՈՅԱՆԸ - մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար
Հայկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար
Սերժ ՍԱՐԳՍՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար
Դավիթ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման նախարար
Գագիկ ՊՈՂՈՍՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարար
Ռազմիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարար
Լեոնիդ ՀԱԿՈԲՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարար
Էդուարդ ՄԱԴԱԹՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարար
Լևոն ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԸ - Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարար

«…Համոզված եմ, որ կառավարությունը կստանա խորհրդարանի զորակցությունը, վստահությունը՝ այն բանի գիտակցմամբ, որ երկրի ծանր վիճակը պարտադրում է Հայաստանի Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի և  կառավարության միջև լիակատար փոխըմբռնման և արդյունավետ փոխհամագործակցության մթնոլորտի ստեղծում, որի նախադրյալներն այսօր ակնհայտ են… »

**Անդրանիկ Մարգարյան**







# ՎԱՐՉԱՊԵՏ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏՈՒՄ



Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծարգո նախագահ, հարգելի պատգամավորներ.

Կառավարությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված ժամկետում Ազգային ժողով է ներկայացրել իր գործունեության ծրագիրը՝ Սահմանադրության 74 հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստում դնելով կառավարության վստահության հարցը:

Կարծում եմ, դուք արդեն ծանոթ եք փաստաթղթի մանրամասներին: Ուստի , նպատակահարմար եմ գտնում ձեր ուշադրությունը սևեռել կառավարության գործունեության ծրագրի գաղափարախոսության վրա:

Պետությունն ի զորու է լիակատար և ներդաշնակ իրագործել հասարակական կյանքն ուղղորդելու իր գործառույթը, եթե պետական մեքենան ունի պարզորոշ արտահայտված, ժողովրդի կողմից զորակցության և վստահության արժանացած նպատակներ ու խնդիրներ:

Ի շարս այլ բազում հիմնախնդիրների, կամենում եմ կարևորել հանրապետությունում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը: Մեր ժողովուրդն ամենից առաջ և ամենից առավել կարոտ է  բարոյահոգեբանական միջավայրի արմատական բարելավման:

Պետական բոլոր ծրագրերը, դրանց իրագործմանն ուղղված ցանկացած միջոցառում անհրաժեշտ է դիտարկել մեր ժողովրդին բնորոշ ու նրան բնութագրող բարոյական արժեքների համակարգի վերականգնման, վերահաստատման տեսանկյունից:

Սակայն հոկտեմբերի 27-ի ողբերգությունից հետո ապագայի նկատմամբ մարդկանց հավատի ու վստահության վերականգնման համար պակաս կարևոր չեն քաղաքական կյանքի առողջացումը, սոցիալ-տնտեսական վիճակի նկատելի բարելավումը:

Կառավարության գործունեության բազմաբնույթ դրսևորումների առանցքում ընկած կլինի երկրի տնտեսության զարգացումը, որի արդյունքում պետք է ապահովվի մեր օրերի թերևս համազգային կարևորագույն գաղափարը, այն է՝ ապահովել հայ մարդու, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու արժանապատիվ կյանքն ու կենցաղը: Վերջին հաշվով մենք,

իբրև կառավարություն, պարտավոր ենք գործել, ելակետ ունենալով մարդկային և ազգային արժանապատվության գիտակցումը:

Համազգային նպատակների և խնդիրների գերակայության անտեսումը, թերևս, այսօրվա իրավիճակի գլխավոր պատճառներից մեկն է, որի հաղթահարումն այն բարեփոխիչ ուժն է, ինչն ի վիճակի կլինի հեռաշրջել մեր ներկա ծանր կացությունը:

Մեր որդեգրած կողմնորոշիչների համակարգում առավել քան սկզբունքային է օրենքի գերակայության ապահովումը, երբ պետական մարմինները և պաշտոնատար անձինք գործում են Սահմանադրությամբ ու օրենքներով իրենց վերապահված իրավասության շրջանակներում, բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով:

Մենք անվերապահորեն ձգտելու ենք մեզանում արմատավորել և զարգացնել այն բոլոր ինստիտուտները և սկզբունքները, որոնք հատուկ են քաղաքացիական հասարակությանը:

Պետության ամբողջ հույսը նրանց վրա է, ովքեր կարող են բարիքներ ստեղծել իրենց ու նաև այլոց համար: Արարող մարդկանց սատարելը, նրանց գործին անհարկի և ապօրինի չմիջամտելը պետական մեքենայի գերակա պարտքն է:

Այժմ ծրագրի մասին: Դրա հիմքում ընկած են ՀՀ նախագահի և «Միասնություն» դաշինքի նախընտրական ծրագրերը:

Ծրագիրը մեր տնտեսության տարբեր ոլորտների խնդիրներն ու դրանց լուծման ուղիներն ամփոփող փաստաթուղթ է, որի իրագործմանն ուղղված կոնկրետ միջոցառումներն ու ժամկետներն առավել հանգամանորեն կշարադրվեն և հունիսի վերջին կհաստատվեն կառավարությունում:

Այժմ համառոտ անդրադառնամ կառավարության գործունեության ծրագրի առավել հանգուցային գաղափարներին:

Այսօր Հայաստանը հայտնվել է չափազանց բարդ սոցիալական խնդիրների լուծման անհրաժեշտության առաջ, որոնք ներկայացված են ծրագրում, որոնց մասին մենք բազմիցս խոսել ենք այս ամբիոնից: Իրավիճակն անմխիթար է նաև տնտեսությունում: Ժամկետանց պարտավորությունները 2000թվականի ապրիլի 1-ի դրությամբ հասել է 124 մլրդ դրամի: Ներմուծման ծավալները շարունակում են ավելի քան 3 անգամ գերազանցել արտահանումը:

Տնտեսական աճը 1999 թվականին իրական արտահայտությամբ կազմեց ընդամենը 3,3 տոկոս, 2000 թվականի տարեսկզբին գրեթե զրոյական տնտեսական աճ (տարվա առաջին հինգ ամիսների արդյունքներով այն, ըստ նախնական գնահատականների, կազմում է 0.3 տոկոս):

Բյուջետային եկամուտների թերհավաքումը (առկա միտումների պահպանման դեպքում՝ տարեկան 20.4 մլրդ դրամ), նախորդ տարիներին կուտակված պարտքերի մեծ ծավալը (շուրջ 26.7 մլրդ դրամ, որից միայն շուրջ 7 մլրդ դրամի մարումն է նախատեսված պետական բյուջեում), արտաքին ֆինանսավորման ակնկալվող թերստացումը (շուրջ 4.9 մլրդ դրամի չափով) հանգեցրել են տարեկան պետական բյուջեում զգալի ճեղքի (շուրջ 45 մլրդ դրամի չափով) առաջացման:

Կառավարությունը գիտակցում է այս հիմնախնդիրների լուծման ուղղությամբ վճռական քայլերի ձեռնարկման անհրաժեշտությունը և նախատեսում է անցած տարիներին կուտակված բյուջետային պարտքերի աստիճանական (2000-2001 թվականների ընթացքում) մարման ժամանակացույցի հաստատում՝ բնականաբար առաջնայնությունը տալով սոցիալական ծախսերի գծով պարտքերի մարմանը:

Պետական բյուջեի հետ ուղղակիորեն կապված՝ պարբերաբար բյուջեի սուղ միջոցներից զգալի բաժիններ կլանող ոլորտներց յուրաքանչյուրի (ոռոգում, խմելու ջուր և կոյուղի, ջեռուցում, «Նաիրիտ» ընկերություն) առողջացման, անուղղակի սուբսիդավորմանը վերջ տալու և այդ միջոցները սոցիալական խնդիրների լուծմանն ուղղելու նպատակով կառավարությունն արդեն իսկ նախաձեռնել է հիմնականում ներքին ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանն ուղղված ծրագրերի մշակումը: Հիշեցնեմ, որ 1999 թվականի բյուջեի միջոցներից այդ ոլորտների պարտքերի մարման համար մենք հատկացրել ենք մոտ 17 մլրդ դրամ:

Կենսաթոշակների վճարումը ևս հեռու է բավարար լինելուց. 2000 թվականի հունիսի 1-ի դրությամբ կենսաթոշակների գծով պարտքը կազմում է շուրջ 5.2 մլրդ դրամ, մարզերում չեն վճարվել մի քանի ամսվա թոշակներ:

Ստեղծված բարդ իրավիճակում անհապաղ լուծում են պահանջում երկու հիմնախնդիր՝ տնտեսական բարեփոխումների շեշտադրման փոխադրում տնտեսության իրական հատված, կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ուղենիշների սահմանում և դրանց անվերապահ կատարում. պետական կառավարման համակարգի արմատական բարելավում, մասնավորապես կոռուպցիայի և կլանայնության դեմ անողոք պայքար՝ իրատեսական և ընդգրկուն ծրագրի իրագործմամբ:

Այդ հիմնախնդիրների լուծմամբ է միայն հնարավոր տնտեսությունը դուրս բերել իրական զարգացման ուղի, վերականգնել վստահությունը պետության և վաղվա օրվա նկատմամբ:

Ծրագրի իրականացման արդյունքում հնարավոր կլինի 2001-2003 թվականների ընթացքում՝ կենսաթոշակների և նպաստների կրկնապատկում, բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձերի կրկնապատկում, արտահանման ծավալների տարեկան առնվազն 25 տոկոս աճ:

Միաժամանակ, կառավարության գործունեությունն ուղղված կլինի 7-8 տարիների ընթացքում համախառն ներքին արդյունքի կրկնապատկմանը, գների շարունակական կայունության ապահովմանը:

Կոռուպցիայի դեմ պայքարը կառավարությունը դիտելու է իբրև իր գործունեության առանցքային հիմնահարցերից մեկը, ցուցաբերելու է ամենայն վճռականություն և անզիջողականություն:

Օրերս Ազգային ժողով կներկայացվի «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի նախագիծը, որի ընդունումն ու կիրառումը էապես կբարելավի արդյունավետ և կշռադատված կադրային քաղաքականության իրականացումը, պետական ծառայողների սոցիալական և իրավական պաշտպանության պետական երաշխիքների ապահովումը:

Առանձնակի կարևորվում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց ե-

կամուտների հայտարարագրումը և այս առնչությամբ շուտով Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվելու համապատասխան օրենքի նախագիծ:

Կոռուպցիայի ամենատարածված դրսևորումներից մեկի՝ պետական գույքի յուրացումների դեմ պայքարի կարևոր լծակներից մեկը կարող է դառնալ «Պետական գնումների մասին» օրենքի կիրառումը:

Զգալիորեն կրճատվելու են լիցենզավորման ենթակա տնտեսական գործունեության տեսակները, լիցենզավորման պահանջներն ու պայմանները, հստակեցվելու՝ լիցենզավորման գործընթացը, պարզեցվելու՝ կազմակերպությունների պետական գրանցման ընթացակարգը:

Տնտեսական քաղաքականության նպատակ է համարվում տնտեսական աճի ուղղորդումը աղքատության կրճատմանը:

Որպես հիմնախնդրի լուծման կարևորագույն միջոց՝ առաջնային է համարվելու աշխատատեղերի ստեղծումն ու այդ նպատակով ներդրումների խթանումն ու գործարարությանն աջակցումը:

Տնտեսության զարգացման գլխավոր նախապայմանը արտահանման խրախուսումն է: Մենք վճռական ենք տրամադրված արտաքին շուկաներում հայրենական արտադրանքի մրցունակության և ներքին շուկայում ազատ մրցակցության ապահովման գործում:

Արտահանման խթանման ու ներդրումների ներգրավման նպատակով կառավարությունը խորհրդարան կներկայացնի «Ներդրումների մասին» նոր օրենքի նախագիծ և կապահովի արտասահմանում հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեության ընդլայնում՝ տնտեսական ուղղվածության շեշտադրմամբ:

Խոշոր ներդրումային ու զբաղվածություն ապահովող ծրագրերը կգտնվեն կառավարության առանձնահատուկ վերահսկողության և պաշտպանության ներքո:

Օտարերկրյա ներդրումների ներգրավման կարևորագույն նախապայման է անցումը հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին, որը նախատեսվում է ավարտել ընթացիկ տարում:

Արդեն ավարտին է մոտենում մի շարք կարևոր ներդրումային նախագծերի մշակումը, որոնք Լոնդոնում կայանալիք գործարար համաժողովում Համաշխարհային բանկի հետ համատեղ պետք է ներկայացվեն համաշխարհային ֆինանսական հանրության ուշադրությանը: Այդ միջոցառումը կարևորագույն նշանակություն կունենա օտարերկրյա ներդրումների ներգրավման գործում:

Խոշոր համապետական միջոցառում է 2001 թվականին Հայաստանում մարդահամարի անցկացումը:

Կընդլայնվի ֆինանսապես անառողջ վիճակում գտնվող ձեռնարկությունների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման՝ ընթացակարգերի կիրառման պրակտիկան, ինչը կապահովի տնտեսությունում չվճարումների (մասնավորապես՝ կուտակված հարկային պարտավորությունների) հիմնախնդրի արմատական լուծումը:

Հատուկ վերաբերմունք է դրսևորվելու փոքր և միջին ձեռնարկատիրու-

թյան զարգացմանը, որը ոչ միայն առանցքային դեր ունի տնտեսությունում, այլև մեծապես կարող է նպաստել աշխատատեղերի ստեղծմանն ու միջին խավի, քաղաքացիական հասարակության ձևավորմանը:

Տնտեսության զարգացման և աշխատատեղերի ստեղծման նպատակով մենք կարևորում ենք զբոսաշրջիկության զարգացման համար բարենպաստ իրավական դաշտի ձևավորումը, ընդհանուր և տարածաշրջանային հեռանկարային ծրագրի մշակումը, զբոսաշրջիկության խթանման միջոցառումների իրականացումը:

Կառավարությունը, որպես ֆինանսական, մասնավորապես, բանկային համակարգի կայունության երաշխիք, վճռորոշ է համարում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի անկախության պահպանումը: Բանկային համակարգի զարգացման նպատակով նախատեսվում է Խնայբանկի մասնավորեցումը:

Ներդրողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, արժեթղթերի շուկայի թափանցելիության ապահովման նպատակով կառավարությունը հրատապ է համարում «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» օրենքի ընդունումն ու դրա լիարժեք կիրառումը:

Տնտեսության արդյունավետ գործունեության և ռազմավարության իրագործման երաշխիքը հստակ բյուջետային քաղաքականության իրագործումն է և պետական բյուջեի անվերապահ կատարումը:

Բոլոր ջանքերը կգործադրվեն պետական ծախսերի գծով պարտքերի կուտակումը բացառելու համար:

Հարկային համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում են հարկային և մաքսային ոլորտի արմատական բարեփոխումներ: Արդեն ավարտին է մոտենում ծրագրի մշակումն ու գործարար շրջանակների ու խորհրդարանի հետ համակողմանի քննարկումների ծավալումը:

Մինչև տարեվերջ հարկային բարեփոխումների իրականացումը հիմնականում կբնութագրվի՝

ա) հարկային համակարգի պարզեցմամբ ու արդյունավետության բարձրացմամբ.

բ) հիմնական հարկատեսակների գծով հարկային բեռի թեթևացմամբ՝ միաժամանակ հարկման ծանրությունը տեղափոխելով առավել արդյունավետ հարկատեսակներ.

գ) արտոնությունների առավելագույն կրճատմամբ.

դ) արտահանման և աշխատատեղերի ստեղծման խթանմամբ:

Կառավարությունը առաջարկելու է նաև արդիական մաքսային համակարգի ձևավորման համար կոնկրետ միջոցառումների իրականացում՝ ուղղված մաքսանենգության դեմ պայքարին, մաքսային ընթացակարգերի պարզեցմանն ու դրանց համալիր վերափոխմանը, մաքսային ստուգումների կանոնակարգմանը, մաքսային արժեքի որոշման օրենքով սահմանված մեխանիզմների լիարժեք կիրառմանը:

Կարևորելով պետության կարգավորիչ դերը ազատ տնտեսական հարա-

բերությունների ձևավորման գործում, մենք հատկապես առանձնացնում ենք պետական գույքի կառավարման սկզբունքների վերանայման խնդիրը: Առաջնային է համարվելու մասնավորեցվող ձեռնարկության ճակատագիրը մասնավորեցումից հետո: Մասնավորեցման նպատակը պետք է դառնա ձեռնարկության արդյունավետ գործունեությունը:

Մշակվում է հողերի, շենքերի և շինությունների գնահատման և հարկման նոր, առավել իրատեսական համակարգ, որը կնպաստի անշարժ գույքի քաղաքացիական շրջանառության և մասնավորապես գրավադրման զարգացմանը:

Հանրապետությունում մեծ նշանակություն են տրվելու քիմիական և լեռնամետալուրգիական համալիրների համակարգային զարգացման ծրագրերին: Միաժամանակ, պատշաճ ուշադրություն է դարձվելու թեթև, ոսկերչական, ակնագործական և շինանյութերի արդյունաբերության զարգացմանը: Սրանք այն ոլորտներն են, որոնց վերաբերյալ արդեն կան կոնկրետ ծրագրեր: Պարզ է, որ կառավարությունը կարևորում է նաև մեքենաշինության և էլեկտրոնային արդյունաբերությունը, որոնց վերաբերյալ ծրագրերը դեռևս մշակվում են:

Լուրջ ուշադրություն է դարձվելու ինֆորմացիոն տեխնոլոգիաների արդյունաբերությանը, նկատի ունենալով դրա աճող դերն համաշխարհային արդի տնտեսության մեջ, ինչպես նաև Հայաստանում առկա համապատասխան գիտական ներուժը:

Գյուղատնտեսության ոլորտում ռազմավարության նպատակը երկրի պարենային անվտանգության ապահովումն է: Այդ առումով մեծապես կարևորվում են գյուղատնտեսական մթերքների տեղական արտադրողների և վերամշակողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումները, գյուղմթերքների արտահանման օժանդակությունը:

Կառավարությունը կշարունակի օժանդակել գյուղատնտեսությունում կատարվող ներդրումներին ու վարկավորմանը, ոռոգման համակարգի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրի իրականացմանը՝ բարձրացնելով ոռոգման համակարգերի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը:

Բնապահպանության բնագավառում վերափոխումների հիմնական ուղղությունները կլինեն բնական պաշարների ուսումնասիրության, պահպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում ամբողջական ու համակարգված պետական քաղաքականության իրականացման ապահովումը, բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության ուժեղացումը:

Վառելիքաէներգետիկ համակարգի բարեփոխումների շրջանակներում հիմնական շեշտադրումը կարվի էներգահամակարգի հուսալի և անվտանգ շահագործման, վերազինման, համակարգի արդյունավետ գործունեության, առկա կորուստների կրճատման, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ նաև էներգակիրների ու դրանց մատակարարման այլընտրանքային ուղիների ապահովման վրա: Մասնավորեցման գործընթացում հրատապ կդիտվի խնդրի որակական կողմը, և այդ նպատակով ռազմավարական նշանակության ընկե-

րությունների (մասնավորապես՝ բաշխիչ ցանցերի) մասնավորեցումը կիրականացվի հրապարակայնորեն՝ համակողմանի քննարկումների միջոցով ստանալով հասարակության լայն խավերի աջակցությունը: Կոնկրետ ծրագրերից կառանձնացնենք բնակչությանը գազամատակարարման վերականգնման հարցը, Իրան-Հայաստան գազամուղը, Մեղրու ՀԷԿ-ի նախագծման և կառուցման աշխատանքները:

Հատուկ ուշադրության է արժանի սակագների ձևավորման սկզբունքների ուսումնասիրությունը:

Կառավարությունը հետամուտ կլինի հեռահաղորդակցության ոլորտում ներդրումային ծրագրերի լիարժեք օգտագործմանը, որակյալ կապի և մատչելի ինտերնետային ծառայությունների ապահովմանը: Կմշակվեն այլընտրանքային համակարգերի կիրառման հնարավորություններ ապահովող ծրագրեր՝ հետագայում բացառելով որևէ ընկերության մենաշնորհային դիրք:

Իրականացվելու են աշխատանքներ առողջապահական համակարգում պետական գույքի (առողջապահական հաստատությունների) մասնավորեցմանը նպաստելու և այդ գործընթացը խթանող նախադրյալների ստեղծման ուղղությամբ:

Իրականացվելու է բնակչությանը մատուցվող բժշկական օգնության փոխհատուցման բազմաձևություն (պետական պատվեր, համավճար, բժշկական ապահովագրություն, վճարովի ծառայություններ և այլն), բժշկական օգնությունը բնակչության բոլոր խավերի համար մատչելի դարձնելու նպատակով:

Բժշկական ապահովագրության կենսունակ համակարգի ներդրումը, որպես առողջապահության բնագավառի բաղկացուցիչ տարր, ոչ միայն առողջապահության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ ներգրավելու միջոց է, այլ նաև բնակչության համար բժշկական օգնությունը առավել մատչելի դարձնելու, սոցիալական արդարության սկզբունքների լայն կիրառման և ռեսուրսների նպատակային օգտագործումն ու բժշկական ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու երաշխիք:

Սոցիալական ոլորտում բարեփոխումները պետք է ուղղվեն երկու հիմնախնդիրների լուծմանը՝ սոցիալապես խոցելի ընտանիքների առավել արդյունավետ պաշտպանություն անցումային շրջանի բացասական ազդեցություններից՝ նրանց համար ապահովելով նվազագույն սոցիալական ծառայությունների մատչելիություն. աշխատող բնակչության համար իրենց եկամուտների հաշվին ապահովել սոցիալական ծառայությունների առավել լայն հնարավորություններ՝ միաժամանակ անուղղակի պայմաններ ստեղծելով նաև կարիքավոր ընտանիքների սոցիալական պաշտպանության համար:

Կառավարությունը կապահովի կենսաթոշակների և նպաստների վճարումը սահմանված ժամկետներում և դրանց հետևողական բարձրացումը:

Սոցիալական խնդիրների լուծմանը կնպաստի նաև աշխատանքային նոր օրենսգրքի ընդունումը:

Կմշակվի կրթության զարգացման պետական ծրագիր, որի հիմքում կլինի ոչ միայն ուսուցիչների աշխատավարձի զգալի բարձրացումը, կրթական բոլոր հաստատությունների համար հավասար պայմանների ստեղծումն ու կրթո-

ջախների բազմազանության ապահովումը, այլ նաև կադրերի վերապատրաստման և վերապրոֆիլավորման ինստիտուտների ձևավորումը՝ հիմնված միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի վրա:

Կառավարությունը նախատեսում է Համահայկական համալսարանի ստեղծում, ինչը հնարավորություն կտա հայ և օտարերկրյա լավագույն մասնագետների կարողություններն օգտագործել կրթական բնագավառում բեկում մտցնելու համար, ձևավորել ազգային և համամարդկային խնդիրների շուրջ հայ մտավորականների համախմբման միջավայր:

Գիտության բնագավառի հիմնախնդիրների լուծման հարցում քաղաքականությունը նպատակաուղղվելու է գիտական ներուժի զարգացման ռազմավարության շրջանակներում պետական հովանավորության արդյունավետ համակարգի ձևավորմանը զուգահեռ գիտության ֆինանսավորման մասնավոր աղբյուրների խթանմանը:

Պետության մշակութային քաղաքականության զարգացման հիմնական ուղին ազգային մշակութային արժեքների պահպանմանը, զարգացմանը և համաշխարհային հանրությանը պատշաճ ներկայացնելուն ուղղված ծրագրերի իրագործումն է:

Առաջնային է Սփյուռքի հետ կապերի զարգացումը, մասնավորապես համահայկական ինստիտուտների, Հայաստան-Սփյուռք միասնական տեղեկատվական դաշտի ձևավորումը, երկրի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում սփյուռքահայության ներգրավումը, Հայաստանում սփյուռքահայ երեխաների հանգստի կազմակերպումը, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստումը: Կառավարությունը կխրախուսի նաև մշակութային օջախներում հովանավորների և հոգաբարձուների ինստիտուտի ներդրումը:

Կառավարությունը կհստակեցնի Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հետ կնքված մտադրությունների հուշագրից բխող գործնական ծրագիրն ու դրա կենսագործման մեխանիզմները:

Առավելագույն ջանքեր կգործադրվեն քրիստոնեության 1700-ամյակի հետ կապված տոնակատարությունները պատշաճ մակարդակով իրականացնելու ուղղությամբ:

Շարունակում է առաջնահերթ խնդիր մնալ աղետի գոտու վերականգնումը: Աղետի գոտում կշարունակվեն ցուցաբերվել առանձնահատուկ մոտեցումներ՝ համաֆինանսավորման հիմունքներով պետական միջոցների օգտագործում, բաժնետիրական հիմունքներով բնակարանային շինարարության խրախուսմամբ բնակչության միջոցների ներգրավման արդյունավետ բարձրացում, անհատական բնակարանային շինարարությանն աջակցելու համար վարկային միջոցների տրամադրում և, որ ամենակարևորն է, տնտեսական գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում:

Ավարտելով ելույթս, համոզված եմ, որ կառավարությունը կստանա խորհրդարանի զորակցությունը, վստահությունը՝ այն բանի գիտակցմամբ, որ երկրի ծանր վիճակը պարտադրում է Հայաստանի Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի և կառավարության միջև լիակատար փոխըմբռման և արդյունավետ փոխհամագործակցության մթնոլորտի ստեղծում, որի նախադրյալներն այսօր ակնհայտ են:

Մենք պատրաստ ենք համատեղ կառուցողական աշխատանքի:
Շնորհակալություն ուշադրության համար:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

## 1. Նախաբան

Կառավարության գործունեության ծրագիրը մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի և «Միասնություն» դաշինքի նախընտրական ծրագրերի հիման վրա և օրգանական շարունակությունն է վարչապետներ Վազգեն և Արամ Սարգսյանների կառավարությունների ծրագրերի:

Կառավարությունն իր գործունեությունը սկսում է չափազանց բարդ իրավիճակում: 1999 թվականի մայիսի 30-ի խորհրդարանական ընտրություններից հետո ստեղծվել էր կայունության և վստահության աննախադեպ իրավիճակ: Հոկտեմբերի 27-ի ողբերգական իրադարձությունների արդյունքում ոչ միայն քաղաքական ասպարեզից հեռացվեցին չափազանց մեծ ազդեցություն ունեցող և հասարակության անվերապահ վստահությունը վայելող վառ անհատականություններ, այլև կտրուկ վատթարացավ բարոյահոգեբանական իրավիճակը և էապես աճեց ներքաղաքական լարվածությունը: Թեև հաջորդ վեց ամիսների ըն թացքում հնարավոր եղավ երկիրը զերծ պահել վտանգավոր առճակատումներից և խոր ցնցումներից, սակայն անցած տարիների ընթացքում երկրի սոցիալ-տնտեսական կյանքում կուտակված խնդիրների լուծման ուղղությամբ տեղաշարժեր չնկատվեցին:

Անկասկած, երկրի բարոյահոգեբանական միջավայրի առողջացման առումով բացառիկ նշանակություն ունեն հոկտեմբերի 27-ի գործի քննության բնականոն ընթացքը, ոճրագործության բոլոր կազմակերպիչների ու կատարողների բացահայտումը: Սակայն երկրի ապագայի ու նաև այդ գործի քննության անաչառ և արդարացի ընթացքի համար պակաս կարևոր չեն քաղաքական կյանքի առողջացումը, սոցիալ-տնտեսական վիճակի նկատելի բարելավումը: Այդ նպատակների իրագործման համար անհրաժեշտ է ոչ միայն լիարժեք փոխըմբռնում և սերտ համագործակցություն հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի և կառավարության միջև, այլև պահանջվում են իրատեսական, կոնկրետ նպատակներ մատնանշող, արդյունավետ ծրագրեր, արագ և վճռական քայլեր՝ դրանց իրագործման համար:

## 2. Սոցիալ-տնտեսական իրավիճակը

Այսօր Հայաստանը հայտնվել է չափազանց բարդ սոցիալական խնդիրների լուծման անհրաժեշտության առաջ՝

- բնակչության ճնշող մեծամասնությունը գտնվում է ծանր սոցիալական վիճակում.
- անշեղորեն մեծանում է բնակչության բևեռացումը՝ ըստ եկամուտների, իսկ բնակչության գերակշռող մասի եկամուտները չափազանց ցածր են յուրաքանչյուր ամուր հասարակության առանցքի՝ միջին խավի

ձևավորման համար.
- ծայրահեղ անբավարար է աշխատատեղերի թիվը.
- պետությունը պարբերաբար չի կատարում իր պարտականությունը հասարակության նկատմամբ՝ զգալի ուշացումներով է վճարում կենսաթոշակները, նպաստները, բյուջետային հիմնարկների աշխատավարձերը.
- օրինազանցությունը, կառավարման համակարգում խորացող կոռուպցիան, ամեն քայլափոխի հանդիպող անարդարությունն ու պետական պաշտոնյաների կամայականությունները հուսախաբ են անում ժողովրդին.
- մեծ չափերի է հասել բնակչության արտագաղթը:

Բարեփոխումների իրագործման ճանապարհին թույլ տրված արմատական սխալների արդյունքում իրավիճակն աննախանձելի է նաև տնտեսական հատվածում՝
- մշտապես թերի են հավաքագրվում բյուջետային եկամուտները՝ ժամկետանց հարկային պարտավորությունները 2000 թվականի ապրիլի 1-ի դրությամբ հասել են 124 մլրդ դրամի.
- կուտակվել են մի քանի տարվա բյուջետային պարտքեր.
- ներմուծման ծավալները շարունակում են ավելի քան 3 անգամ գերազանցել արտահանումը.
- ապահովված չեն արդար մրցակցության լիարժեք պայմաններ.
- ներդրումները մնում են անթույլատրելի ցածր մակարդակի վրա.
- տնտեսության զգալի հատվածը դարձել է անարդյունավետ՝ ի դեմս վնասով աշխատող և մասնավորեցված, բայց պարապուրդի մեջ գտնվող ձեռնարկությունների.
- բանկային համակարգում կուտակվել են ընդհանուր կապիտալի կեսից ավելի չափով երկարաձգված և ժամկետանց վարկեր.
- իրական տոկոսադրույքները դեռևս մնում են բարձր.
- պարբերաբար բյուջեի սուղ միջոցները հատկացվում են պետական բյուջեի հետ ուղղակիորեն կապված ոլորտներում (ոռոգում, խմելու ջուր և կոյուղի, ջեռուցում, «Նաիրիտ» ընկերություն) կուտակված խնդիրների լուծմանը.
- մասնավորեցման գործընթացը չի ծառայում իր հիմնական նպատակին՝ տնտեսության զարգացմանը.
- մեծ չափերի են հասել տնտեսության «ստվերայնացումն» ու «քրեականացումը».
- ցածր է տնտեսական բարեփոխումների արդյունավետությունը:

Որպես հետևանք, 1999 թվականին տնտեսական աճն իրական արտահայտությամբ կազմեց ընդամենը 3.3 տոկոս, զգալիորեն շեղվելով ծրագրային ցուցանիշներից՝ հիմնականում պայմանավորված չորրորդ եռամսյակում տնտեսությունում արձանագրված անսպասելի կտրուկ անկմամբ, որին հետևեց 2000 թվականի տարեսկզբին գրեթե զրոյական տնտեսական աճ (տարվա առաջին չորս ամիսների արդյունքներով այն, ըստ նախնական գնահատականների, կազմում է 0.3 տոկոս): Թեև նախորդ տարվա արդյունքներով տեղի ունեցավ տնտեսության արտաքին հատվածը բնութագրող ցուցանիշների (մաս-

նավորապես՝ առևտրային հաշվեկշռի) զգալի բարելավում (արտահանման շուրջ 6 տոկոս աճի և ներկրման ավելի քան 11 տոկոս նվազման արդյունքում էապես կրճատվեց առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը՝ կազմելով համախառն ներքին արդյունքի շուրջ 30 տոկոս), այնուամենայնիվ, այդ ցուցանիշները դեռևս մնում են անհանգստացնող:

Բյուջետային եկամուտների թերհավաքագրումը (առկա միտումների պահպանման դեպքում՝ տարեկան շուրջ 20.4 մլրդ դրամ), նախորդ տարիների կուտակված պարտքերի մեծ ծավալը (շուրջ 26.7 մլրդ դրամ, որից միայն շուրջ 7 մլրդ դրամի մարումն է նախատեսված պետական բյուջեում), արտաքին ֆինանսավորման ակնկալվող թերստացումը (շուրջ 4.9 մլրդ դրամի չափով) հանգեցրել են տարեկան պետական բյուջեում զգալի ճեղքի (շուրջ 45 մլրդ դրամի չափով) առաջացման:

Կառավարությունը գիտակցում է այս հիմնախնդիրների լուծման ուղղությամբ վճռական քայլերի ձեռնարկման անհրաժեշտությունը և նախատեսում է կուտակված բյուջետային պարտքերի աստիճանական (2000-2001 թվականների ընթացքում) մարման ժամանակացույցի հաստատում՝ բնականաբար առաջնայնությունը տալով սոցիալական ծախսերի գծով պարտքերի մարմանը: Միևնույն ժամանակ, կառավարությունը կնախաձեռնի եկամուտների ավելացմանն ուղղված միջոցառումներ, մասնավորապես սահմանամերձ առևտրի մաքսային վերահսկողության բարելավում և ակցիզային հարկով հարկվող ապրանքների մասով հարկային վարչարարության արդյունավետության բարձրացում: Այդուհանդերձ, առաջիկա մի քանի ամիսների ընթացքում պետական բյուջեի կատարման ընթացքում որակական փոփոխությունների բացակայությունը կառավարությանը կպարտադրի խորհրդարանում հանդես գալ տարեկան պետական բյուջեում համապատասխան ճշգրտումների առաջարկությամբ:

Պետական բյուջեի հետ ուղղակիորեն կապված ոլորտներից յուրաքանչյուրում (ոռոգում, խմելու ջուր և կոյուղի, ջեռուցում, «Նաիրիտ» ընկերություն) կուտակված խնդիրների վերջնական լուծման նպատակով կառավարությունն արդեն իսկ նախաձեռնել է հիմնականում ներքին ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանն ուղղված ծրագրերի մշակումը: Նման ծրագրերի կենսագործումը կապահովի այս ոլորտներում վերջնական նպատակը՝ լրիվ ֆինանսական առողջացումը մինչև 2003 թվականը:

Կենսաթոշակների վճարումը ևս հեռու է բավարար լինելուց. 2000 թվականի հունիսի 1-ի դրությամբ կենսաթոշակների գծով պարտքը կազմում է շուրջ 5.2 մլրդ դրամ՝ էլ ավելի վատթարացնելով հասարակության ամենազգայուն խավի՝ կենսաթոշակառուների վիճակը: Դա համարելով անհանդուրժելի, կառավարությունն խորհրդարանի քննարկմանն է ներկայացրել պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների չափերի փոփոխման վերաբերյալ առաջարկություն, որի ընդունումը, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հավաքագրման բարելավմանն ուղղված վարչարարական միջոցառումներին զուգահեռ, թույլ կտա մինչև տարեվերջ բացառել կենսաթոշակների վճարումների որևէ ուշացում:

Ստեղծված բարդ իրավիճակում կառավարությունը տեսնում է անհապաղ լուծման ենթակա երկու հիմնախնդիր՝

1. տնտեսական բարեփոխումների շեշտադրման փոխադրում տնտեսության իրական հատված, կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ուղենիշների սահմանում և դրանց անվերապահ կատարում.

2. պետական կառավարման համակարգի արմատական բարելավում, մասնավորապես կոռուպցիայի և կլանայնության դեմ անողոք պայքար՝ իրատեսական և ընդգրկուն ծրագրի իրագործմամբ:

Այդ հիմնախնդիրների լուծմամբ է միայն հնարավոր տնտեսությունը դուրս բերել իրական զարգացման ուղի, հասարակության համար ապահովել պաշտպանված և արժանապատիվ կյանք, վստահություն պետության և վաղվա օրվա նկատմամբ:

### 3. Կառավարության գործունեության ակնկալվող հիմնական արդյունքները

Սույն ծրագրի իրականացման արդյունքում կառավարությունը երաշխավորում է 2001-2003 թվականների ընթացքում՝

- ♦ կենսաթոշակների և նպաստների կրկնապատկում.
- ♦ բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձերի կրկնապատկում.
- ♦ արտահանման ծավալների տարեկան առնվազն 25 տոկոս աճ:

Միաժամանակ, կառավարության գործունեությունն ուղղված կլինի 7-8 տարիների ընթացքում համախառն ներքին արդյունքի կրկնապատկմանը, գների շարունակական կայունության ապահովմանը:

### 4. Կառավարության գործունեության հիմնական ուղղությունները

4.1 Քաղաքացիական ծառայության բարեփոխումներ և կոռուպցիայի դեմ պայքար

Պետության, մասնավորապես տնտեսության զարգացման ամենամեծ խոչընդոտը պետական կառավարման գործող անարդյունավետ համակարգն է և վերջինիս անբաժան ուղեկիցը՝ կոռուպցիան, իր ամենատարբեր դրսևորումներով՝ կաշառակերություն, հովանավորչություն, պետական գույքի յուրացումներ և այլն: Կոռուպցիան էապես արգելակում է ազատ տնտեսական մրցակցությունը, խոչընդոտում է ներքին և արտաքին ներդրումներին, նվազեցնում է պետական եկամուտները, խորացնում աղքատությունը, խարխլում իշխանությունների և պետականության նկատմամբ հավատը:

Կոռուպցիայի դեմ պայքարը կառավարությունը դիտելու է իբրև իր գործունեության առանցքային հիմնահարցերից մեկը, ցուցաբերելու է ամենայն վճռականություն և անզիջողականություն: Կառավարությունը մշակում է և սկսելու է կենսագործել պետական կառավարման համակարգի արմատական բարեփոխումների և կոռուպցիայի դեմ պայքարի համապարփակ ծրագրեր: Կառավարությունը գործադրելու է անհրաժեշտ ջանքեր, որպեսզի հասարակության համար առավել թափանցիկ և հրապարակային դառնա գործադիր իշխանության մարմինների գործունեությունը, համախմբելու է պետական բոլոր

մարմինների ուժերն ու հնարավորությունները կոռուպցիայի դեմ պայքարի պետական ծրագրերն իրականացնելիս: Ընդսմին, կարևորվելու են քաղաքական, տնտեսական և բարոյահոգեբանական լծակների և գործոնների լայնամասշտաբ կիրառումը:

Նախապատրաստվում է և շուտով Ազգային ժողով կներկայացվի «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի նախագիծը, որի ընդունումն ու կիրառումը էապես կբարելավի արդյունավետ և կշռադատված կադրային քաղաքականության իրականացումը, պետական ապարատը որակյալ, բանիմաց և բարոյական բարձր հատկանիշներով օժտված կադրերով համալրումը, պետական ծառայողների սոցիալական և իրավական պաշտպանության պետական երաշխիքների ապահովումը:

Երկրում պետք է հաստատվի օրենքի գերակայություն, սահմանվի խստագույն կարգապահություն, պաշտոնատար անձանց պատասխանատվություն՝ աշխատանքում տեղ գտած թերությունների համար: Պաշտոնատար անձանց կողմից թույլ տրված յուրաքանչյուր թերացում պետք է ստանա արժանի գնահատական: Միաժամանակ կառավարությունը ձեռնարկելու է անհրաժեշտ միջոցներ հստակ սահմանազատելու և հստակեցնելու պետական մարմինների և պաշտոնատար անձանց լիազորությունների շրջանակը, բացառելու է պետական ծառայության և ձեռնարկատիրական գործունեության համատեղումը:

Կառավարությունը առանձնակի կարևորում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց եկամուտների հայտարարագրումը և այս առնչությամբ շուտով Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվելու համապատասխան օրենքի նախագիծ: Միաժամանակ կոռուպցիայի դեմ պայքարում որպես ամենազործուն միջոցներից մեկը օգտագործվելու է պետական ծառայողների պատշաճ դրամական վարձատրությունը:

Կոռուպցիայի ամենատարածված դրսևորումներից մեկի՝ պետական գույքի յուրացումների դեմ պայքարի կարևոր լծակներից մեկը կարող է դառնալ «Պետական գնումների մասին» օրենքի կիրառումը՝ ապահովելով պետական բյուջեի միջոցների շուրջ 60 տոկոսի արդյունավետ օգտագործումը:

Գործադրվելու են վճռական և անհապաղ միջոցներ արգելակելու գործարարության նկատմամբ անհարկի և ապօրինի միջամտությունը, համակարգելու պետական վերահսկողական ծառայությունների գործունեությունը, ապահովելու բյուջետային ծախսերի, վարկային և դրամաշնորհային միջոցների նկատմամբ խստագույն վերահսկողությունը, բարելավելու հարկային և մաքսային վարչարարությունը, անվերապահորեն կատարելու պետական բյուջեն:

Զգալիորեն կրճատվելու են լիցենզավորման ենթակա տնտեսական գործունեության տեսակները, լիցենզավորման պահանջներն ու պայմանները, հստակեցնելու լիցենզավորման բուն գործընթացը, պարզեցնելու կազմակերպությունների պետական գրանցման ընթացակարգը:

Ըստ ամենայնի պաշտպանվելու են սեփականատիրոջ իրավունքները և օրինական շահերը պաշտոնատար անձանց կամայականություններից և ոտնձգություններից:

Կոռուպցիայի դեմ պայքարը պետք է լինի առավելագույնս հրապարա-

կային՝ հասարակության իրազեկելով և կոռուպցիայի հետևանքների, և կիրառված պատժամիջոցների մասին, ինչը կօգնի վերականգնել վստահությունն ու հավատն արդարացի և ազնիվ պետական ծառայության նկատմամբ:

4.2 Ընդհանուր տնտեսական քաղաքականություն

Կառավարությունը տնտեսական քաղաքականության նպատակ է համարում տնտեսական աճի ուղղորդումը աղքատության կրճատմանը: Այս առումով անհրաժեշտ է ոչ միայն մակրոտնտեսական կայունության պահպանում և դրան ուղղված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության կենսագործում, այլ նաև տնտեսական բարեփոխումների արժեվորում ըստ դրանց սոցիալական հետևանքների:

Որպես աղքատության հիմնախնդրի լուծման կարևորագույն միջոց, կառավարությունն առաջնային է համարում աշխատատեղերի ստեղծումը և այդ նպատակով ներդրումների խթանումն ու գործարարությանն աջակցումը: Այս բնագավառում համակարգված բարեփոխումների իրականացման նպատակով կստեղծվի գործարարության աջակցման ու ներդրումների խրախուսման խորհուրդ, որը կներկայացնի ներդրումային միջավայրի բարելավման համակողմանի ծրագիր՝ հատկապես կարևորելով օրենքների միարժեք կիրառումը՝ որպես ներդրողների վստահության ձեռքբերման երաշխիք:

Տնտեսության զարգացման գլխավոր նախապայմանը ընդգծված արտահանման ուղղվածության հաղորդումն է: Արտահանման կտրուկ աճի կարևոր գործոն է Հայաստանի արտաքին մրցունակության բարձրացումը, որի նպատակով կառավարությունը կպաշտպանի լողացող փոխարժեքի քաղաքականության իրականացումը:

Կառավարությունը վճռական է տրամադրված արտաքին շուկաներում հայրենական արտադրանքի մրցունակության, իսկ ներքին շուկայում ազատ մրցակցության ապահովման նպատակով ազատական փոխանակային ու առևտրային ռեժիմի հետևողական կենսագործման և այդ առումով, մասնավորապես, առևտրի նկատմամբ վարչական լծակների կամ միջամտությունների բացառման հարցում: Արտաքին տնտեսական գործունեության բնագավառում կառավարությունը ձգտելու է համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի առավելագույն ինտեգրացման, արտահանման խթանման, ներդրումների ներգրավման, միջազգային առևտրատնտեսական կազմակերպությունների հետ համագործակցության խորացման, արտերկրի հետ միջպետական տնտեսական համագործակցության ընդլայնման, արտաքին առևտրատնտեսական գործունեության արդյունավետությունը բարձրացնող համապատասխան ենթակառուցվածքների զարգացման:

Կառավարությունը միջազգային տնտեսությանը Հայաստանի ինտեգրացումն ընդլայնելու, արտաքին շուկաներ գործարարների ազատ մուտք ու կայուն մրցակցային հնարավորություն ապահովելու կարևոր գործոն է համարում Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունը:

Վերջին տարիներին արտահանումը Հայաստանում մեծապես պայմանավորված է եղել թանկարժեք քարերի, մետաղների և դրանցից պատրաստ-

ված իրերի արտադրությամբ (2000թ. առաջին եռամսյակում՝ արտահանման ավելի քան 51 տոկոսը) և հանքահումքային նյութերի արտահանմամբ: Բնական է, որ նման իրավիճակում թե՛ արտահանումը և թե՛ ողջ տնտեսությունը խոցելի են դարձել մեկ ոլորտում արտահանման ծավալների տատանումներից: Ակնհայտ է, որ առողջ տնտեսության մասին կարելի է խոսել միայն ներմուծման ծավալների հետ արտահանման ծավալների համադրելիության դեպքում:

Կառավարությունում արդեն ավարտին է մոտենում մի շարք կարևոր ներդրումային նախագծերի մշակումը, որոնք Լոնդոնում կայանալիք գործարար համաժողովում Համաշխարհային բանկի հետ համատեղ պետք է ներկայացվեն համաշխարհային ֆինանսական հանրության ուշադրությանը: Այդ միջոցառումը կարևորագույն նշանակություն կունենա օտարերկրյա ներդրումների ներգրավման գործում:

Տնտեսական զարգացման ասպարեզում կառավարությունը հատկապես կարևորում է սփյուռքահայության հետ համագործակցության հնարավորությունները. խոշոր ներդրումային ու զբաղվածություն ապահովող ծրագրերը կգտնվեն կառավարության առանձնահատուկ հսկողության և պաշտպանության ներքո: Նպատակային ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ է նաև տարածքային տնտեսական զարգացման ծրագրերի (ներառյալ աղետի գոտու համար) մշակում՝ բացահայտելով կոնկրետ տարածաշրջանների մասնագիտացումն ու առանձնահատկությունները:

Կառավարությունը կարևորում է 2001 թվականին Հայաստանում մարդահամարի անցկացումը և այն որակում որպես համապետական միջոցառում:

4.3 Ձեռնարկատիրության զարգացում

Կառավարության գործունեության առանցքային ուղղություններից է լինելու ներքին շուկայում տնտեսավարման մրցակցային դաշտի զարգացումը, ստվերային տնտեսության դեմ պայքարի ներգործուն մեխանիզմների մշակումն ու իրագործումը, հանրապետությունում տնտեսական մրցակցությունը կարգավորող օրենսդրական դաշտի ձևավորումը, անբարեխիղճ մրցակցության կանխումը:

Արտահանման խթանման ու ներդրումների ներգրավման նպատակով կառավարությունը խորհրդարան կներկայացնի «Ներդրումների մասին» նոր օրենքի նախագիծ և կապահովի արտերկրում հանրապետության դեսպանատների գործունեության ընդլայնում՝ տնտեսական ուղղվածության շեշտադրմամբ:

Ձեռնարկությունների ֆինանսական առողջացման նպատակով կառավարությունը կընդլայնի ֆինանսապես անառողջ վիճակում գտնվող ձեռնարկությունների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման՝ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի կիրառման պրակտիկան, ինչը կապահովի տնտեսությունում չվճարումների (մասնավորապես՝ կուտակված հարկային պարտավորությունների) հիմնախնդրի արմատական լուծումը: Հաշվի առնելով ընկերությունների ֆինանսական առողջացման և անվճարունակության (սնանկացման) մեխանիզմների լիարժեք և անվերա-

պահ գործադրման անհրաժեշտությունը, այս ասպարեզում առկա իրավական արգելքների հաղթահարման նպատակով կառավարությունը խորհրդարան կներկայացնի համապատասխան օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկություն: Միևնույն ժամանակ, ինչպես այս, այնպես էլ մյուս ասպարեզներում օրենսդրության կիրառման միարժեքության ապահովումը պահանջում է դատաիրավական բարեփոխումների շարունակում և խորացում, դատական և պետական այլ մարմինների պատասխանատվության բարձրացում:

Ձեռնարկատիրության խրախուսման առումով լուրջ փոփոխություններ են նախատեսված հարկային քաղաքականության ոլորտում՝ հարկային օրենսդրության պարզեցման և կայունացման, հարկային բեռի թեթևացման առումով:

Կառավարությունը հատուկ վերաբերմունք է ունենալու փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը, որը ոչ միայն առանցքային դեր ունի տնտեսությունում, այլև մեծապես կարող է նպաստել աշխատատեղերի ստեղծմանն ու միջին խավի, քաղաքացիական հասարակության ձևավորմանը: Անցած տարիների ընթացքում այս ոլորտի զարգացման աշխատանքները կրել են տարերային բնույթ: Անհետաձգելի է դարձել համակարգված մոտեցումների կիրառումը, փոքր և միջին ձեռնարկատիրության համար խորհրդատվական ծառայությունների մատչելիության ապահովումը, բիզնես-ծրագրերի մշակմանը լիարժեք աջակցությունը, ֆինանսական միջոցների նպատակային ուղղորդումը:

2000 թվականի ընթացքում էականորեն կպարզեցվի ընկերությունների գրանցման գործընթացը, այն հաշվով, որ Հայաստանում հնարավոր լինի 1-2 օրում ընկերություն գրանցել: Կառավարությունը նախատեսում է գրանցման պարզ ընթացակարգերի սահմանում և միասնական համակարգի ձևավորում, որը հնարավորություն կտա ձեռնարկությունների գրանցման բոլոր փուլերն իրականացնել մեկ «պատուհանից»: Կմեղմացվեն լիցենզավորման պահանջները և կկրճատվի լիցենզավորման ենթակա գործունեության ցանկը՝ այդ նպատակով խորհրդարանի քննարկմանը ներկայացնելով համապատասխան օրենքի նախագիծ:

Հանրապետության տնտեսավարող սուբյեկտների՝ միջազգային շուկայում ինտեգրացման, մասնավորապես, օտարերկրյա ներդրումների ներգրավման կարևորագույն նախապայման է հանդիսանում հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին անցումը, որը կառավարությունը նախատեսում է ավարտել ընթացիկ տարում: Միաժամանակ, հայրենական արտադրանքի արտահանման խթանման ցանկացած փորձ կարող է անհաջողության մատնվել առանց որակի միջազգային ստանդարտներին ապրանքների համապատասխանեցման:

Տնտեսության զարգացման և աշխատատեղերի ստեղծման նպատակով կառավարությունը կարևորում է զբոսաշրջիկության զարգացման համար բարենպաստ իրավական դաշտի ձևավորումը, ընդհանուր և տարածաշրջանային հեռանկարային ծրագրի մշակումը, զբոսաշրջիկության խթանման միջոցառումների իրականացումը:

## 4.4 Ֆինանսական համակարգ և կապիտալի շուկա

Կառավարությունը, որպես ֆինանսական, մասնավորապես բանկային համակարգի կայունության երաշխիք, վճռորոշ է համարում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի անկախության պահպանումը: Բանկային համակարգում պետական մասնակցությունը նվազագույնի հասցնելու նպատակով կառավարությունը, որպես ռազմավարական նպատակ, նախատեսում է Խնայբանկի մասնավորեցումը, որի ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների իրականացման համար կառավարությունը կհաստատի բանկի վերակառուցման և մասնավորեցման ծրագիրը:

Ներդրողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, արժեթղթերի շուկայի թափանցելիության ապահովման նպատակով կառավարությունը կարևորում է «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» օրենքի ընդունումն ու դրա լիարժեք կիրառումը:

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների նկատելի նվազումը վկայում է պետական արժեթղթերի շուկայի կայունացման մասին: Զուգահեռաբար, բանկային համակարգը թևակոխում է զարգացման մի նոր փուլ, սակայն առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի դեռևս ծայրահեղ փոքր մեծությունը էապես սահմանափակում է տնտեսության վարկավորման հնարավորությունները: Հիմնախնդրի լուծումը պահանջում է բանկային կապիտալի զգալի մեծացում և բանկերի միաձուլում:

Կառավարությունը ֆինանսական ոլորտի լիարժեք կայացման անվերապահ պայման համարում է ապահովագրական համակարգի զարգացումը, ֆինանսական շուկայի ոչ բանկային ինստիտուցիոնալ մասնակիցների շրջանակի ընդլայնումը:

## 4.5 Բյուջետային համակարգ

Կառավարության արդյունավետ գործունեության և ռազմավարության իրագործման երաշխիքը հստակ բյուջետային քաղաքականության իրագործումն է և պետական բյուջեի անվերապահ կատարումը: Լիարժեք պետք է օգտագործվեն բյուջեի եկամուտների ընդլայնման բոլոր հնարավորությունները: Պետական բյուջեի եկամտային մասի իրագործումը հնարավոր կարող է դառնալ միայն տարիների ընթացքում ձևավորված չվճարումների արատավոր «համակարգի» վերացմամբ: Թեև տնտեսական բարեփոխումների հենց սկզբից մերժվում էին բյուջետային սուբսիդիաները, սակայն փաստորեն դրանք այսօր էլ են մնացել՝ քողարկված ձևով:

Բյուջետային ծախսերի արդյունավետության մեծացման համար էական նշանակություն կունենա «Պետական գնումների մասին» օրենքի ընդունումն ու լիակատար կիրառումը, ինչպես նաև գանձապետարանի գործունեության կատարելագործումը:

Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրած վարկային ու դրամաշնորհային միջոցների և մարդասիրական օգնության հաշվին իրականացվող համապետական նշանակություն ունեցող ծրագրերի արդյունավետ ու նպատակային իրագործման ապահովման նպատակով կառավարությունը կզարգացնի վարկային և դրամաշնորհային միջոցների օգտագործման վերաբերյալ տվյալների միասնական բազայի ստեղծ-

ման, պարբերական մոնիտորինգի ապահովման և կառավարման ու վերահսկողության ուժեղացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Բյուջետային միջոցների առավել արդյունավետ օգտագործման համար կարևոր նշանակություն կունենա պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը: Կառավարությունը նախատեսում է, որ մասնավորեցումից ստացված միջոցները, լինելով մեկանգամյա մուտքեր, յուրաքանչյուր տարի կուղղվեն կապիտալ ծախսերի իրականացմանն ու արտաքին ոչ արտոնյալ պարտքի մարմանը, ինչը կապահովի նման միջոցների առավել արդյունավետ օգտագործումը: Միաժամանակ, այդ միջոցների ծախսումը հատկապես կապիտալ ծախսերի ուղղությամբ առավել նպատակային դարձնելու և հնարավոր չարաշահումները բացառելու նպատակով կվարձվեն աուդիտորական ծառայություններ, որոնք ոչ միայն կհաստատեն ֆինանսական միջոցների հոսքերի պատշաճ արտացոլումը, այլ նաև կատարված ծախսերի համապատասխանությունը նախանշված նպատակներին:

Կառավարությունը կշարունակի պետական ծախսերի կառավարման բնագավառում պետությանն առնչվող բոլոր դրամական հոսքերի ներառման, դրանց արդյունավետ օգտագործման և թափանցելիության ապահովման աշխատանքները, մասնավորապես նյութական խրախուսման նպատակով պետական կառավարման տարբեր մարմինների համար ստեղծված արտաբյուջետային ֆոնդերը փոխարինելով բյուջետային ուղղակի հատկացումներով:

Կառավարությունը բոլոր ջանքերը կգործադրի պետական ծախսերի գծով պարտքերի կուտակումը բացառելու համար: Պետական կառավարման մարմինների գործողությունների վերահսկման մեխանիզմների ներդրումը, մասնավորապես, պետական բյուջեի, սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի, համայնքների բյուջեների գործառնությունների համախմբումն ու գործող բոլոր ճյուղային արտաբյուջետային ֆոնդերի մոնիտորինգի իրականացումը կապահովեն կառավարության գործունեության թափանցիկություն ու վերահսկելիություն ոչ միայն Ազգային ժողովի, այլ նաև ամբողջ հասարակության համար:

4.6 Հարկային համակարգ

Հարկային համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով կառավարությունը նախատեսում է հարկային և մաքսային արմատական բարեփոխումների իրականացում, որի սկիզբը կլինի դրա վերաբերյալ ծրագրի մշակումն ու գործարար շրջանների ու խորհրդարանի հետ դրա շուրջ համակողմանի քննարկումների ծավալումը:

Մինչև տարեվերջ հարկային բարեփոխումների իրականացումը կապահովի մրցունակ, արդյունավետ և միջնաժամկետ հեռանկարում կայուն հարկային համակարգ, որը հաշվի կառնի առկա սահմանափակումները (տարածաշրջանային մեկուսացում, պետական կառավարման և հարկային վարչարարության անարդյունավետ համակարգ և այլն) և հիմնականում կընութագրվի՝

ա) հարկային համակարգի պարզեցմամբ ու արդյունավետության բարձրացմամբ.

բ) հիմնական հարկատեսակների գծով հարկային բեռի թեթևացմամբ՝ միաժամանակ հարկման ծանրությունը տեղափոխելով առավել արդյունավետ

հարկատեսակներ.

գ) արտոնությունների առավելագույն կրճատմամբ, առանձին ոլորտների, գործունեության առանձին տեսակների, առանձին ձեռնարկությունների համար որևէ բնույթի հարկային արտոնությունների բացառմամբ.

դ) արտահանման և աշխատատեղերի ավելացման խթանմամբ:

Կառավարությունը մեծ նշանակություն է տալիս նաև հարկատուների շահերի պաշտպանությանը և այդ նպատակով նախատեսում է հարկային ստուգումների մեխանիզմների պարզեցմանը զուգահեռ մեծապես բարձրացնել հարկատուների իրազեկման աշխատանքների ծավալն ու որակը: Զուգահեռաբար, հարկային վարչարարության ասպարեզում կառավարությունը նախատեսում է հարկային կարգապահության բարձրացման նպատակով զանգվածային քարոզարշավի նախաձեռնում` ներառյալ, մասնավորապես, ինչպես բարեխիղճ, այնպես էլ անբարեխիղճ (ժամկետանց խոշոր հարկային պարտավորություններ ունեցող կամ հարկային օրենսդրության կոպիտ խախտումներ թույլ տված) հարկատուների ցանկի ամենամսյա հրապարակում: Կառավարությունը վճռորոշ է համարում հարկային ապառքների կտրուկ նվազեցումը և նոր ապառքների կուտակման բացառումը և այդ նպատակով, ի լրումն ձեռնարկությունների ֆինանսական առողջացման և անվճարունակության (սնանկացման) ընթացակարգերի կիրառման, կիրականացնի նաև ապառքների կուտակման պատճառների ուսումնասիրում և դրանց վերացմանն ուղղված աշխատանքների իրականացում:

Կառավարությունը նախատեսում է նաև արդիական մաքսային համակարգի ձևավորման ուղղությամբ համակարգված միջոցառումների իրականացում` ուղղված, մասնավորապես, մաքսային ընթացակարգերի պարզեցմանն ու դրանց համալիր վերափոխմանը, մաքսային ստուգումների հստակ կանոնակարգմանը, մաքսային արժեքի որոշման օրենքով սահմանված մեխանիզմների միարժեք կիրառմանը:

### 4.7 Պետական գույքի կառավարում և մասնավորեցում

Կարևորելով պետության կարգավորիչ դերը ազատ տնտեսական հարաբերությունների ձևավորման գործում, կառավարությունը հատկապես առանձնացնում է պետական գույքի կառավարման սկզբունքների վերանայման խնդիրը: Կառավարությունը առաջնային է համարում մասնավորեցվող ձեռնարկության ճակատագիրը մասնավորեցումից հետո: Մասնավորեցման գլխավոր նպատակը պետք է դառնա ձեռնարկության արդյունավետ գործունեությունը: Մասնավորեցման 2001-2003 եռամյա ծրագրի մշակման առանցքը կլինի այդ մոտեցումը` որպես արդյունավետ զբաղվածության խթանման և դրանով իսկ ինչպես սոցիալական կուտակված հիմնահարցերի լուծման, այնպես էլ տնտեսական աճի ապահովման ուղի:

Պետական գույքի մասնավորեցմանը զուգընթաց կառավարությունը նախատեսում է մշակել և իրագործել պետական մասնակցությամբ կամ զուտ պետական սեփականություն հանդիսացող ընկերությունների ու ձեռնարկությունների վերակազմավորման ծրագրեր` ապահովելու համար դրանց հետագա արդյունավետ գործունեությունը: Ոչ եկամտաբեր և ոչ կենսունակ ընկերությունների համար կառավարությունը վճռականորեն կիրառելու է սնանկաց-

ման միջոցով վերակազմավորման ուղին: Զուգահեռաբար, կառավարությունը կապահովի պետական սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ պետության՝ որպես սեփականատիրոջ, իրավունքների լիարժեք իրացումը, դրա օգտագործման արդյունավետության բարձրացումը, պետական մասնակցությամբ ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության մոնիտորինգի իրականացումը:

Մասնավորեցման գործընթացի տնտեսական արդյունավետության հիմնական երաշխիքներից մեկը կառավարությունը համարում է այդ գործընթացի լիարժեք թափանցիկությունն ու հրապարակայնությունը: Այդ գործընթացի իրականացման այս կամ այն մոտեցման ընտրությունը պետք է բացառապես պայմանավորված լինի տնտեսական արդյունավետությամբ:

4.8 Անշարժ գույքի շուկա

Կառավարության կողմից արդեն իսկ քայլեր են ձեռնարկվում պետական սեփականության հողերի՝ գյուղատնտեսական և քաղաքաշինական նպատակներով տրամադրման պարզ, թափանցիկ մեխանիզմների ներդրման և օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Ընթացիկ տարվանից սկսած կկանոնակարգվի մասնավորեցված և մասնավորեցվող հասարակական և արտադրական օբյեկտների պահպանման ու սպասարկման համար հողի սեփականության և օգտագործման իրավունքի փոխանցումը՝ ստեղծելով նպաստավոր պայմաններ այդ ձեռնարկություններում ներդրումների իրականացման համար:

Կշարունակվի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման գործընթացը, որի արդյունքում սեփականատերերին անվճար կտրամադրեն սեփականության վկայականներ:

Մշակվում է հողերի, շենքերի և շինությունների գնահատման և հարկման նոր, առավել իրատեսական համակարգ, որը կնպաստի անշարժ գույքի քաղաքացիական շրջանառության և մասնավորապես գրավադրման զարգացմանը:

4.9 Տնտեսության հիմնական ճյուղեր

4.9.1 Արդյունաբերություն

Արդյունաբերական քաղաքականության բնագավառում կառավարությունը որպես ելակետ ընդունում է այն իրողությունը, որ տնտեսության համամասնական զարգացման անհրաժեշտությունը պարզապես ստիպում է հաշվի առնել և արդյունավետ օգտագործել տնտեսական, մարդկային, բնաաշխարհագրական ողջ ներուժը:

Արդյունաբերական արտադրության ռազմավարությունն առաջիկայում կառուցվելու է տեխնոլոգիական և կառավարման նորամուծությունների արմատավորման հիման վրա: Ընդ որում, առաջնային են համարվելու ներքին ռեսուրսների վերամշակման հետ կապված մրցունակ արտադրությունների հիմնումն ու զարգացումը:

Հանրապետությունում առկա տեխնոլոգիական հնարավորությունների, բնական պաշարների առավել նպատակային օգտագործման տեսանկյունից հատկապես կարևորվում են քիմիական և լեռնամետալուրգիական համալիր-

ների համակարգային զարգացման ծրագրերը, որոնց իրագործմանն առկա հնարավորությունների սահմաններում կառավարությունն աջակցելու է ըստ ամենայնի: Միաժամանակ, պատշաճ ուշադրություն է դարձվելու թեթև, ռսկերչական, ակնագործական և շինանյութերի արդյունաբերության զարգացմանը:

Կառավարության ուշադրության կենտրոնում կլինի ինֆորմացիոն տեխնոլոգիաների արդյունաբերությունը, նկատի ունենալով դրա աճող դերն համաշխարհային արդի տնտեսության մեջ, ինչպես նաև Հայաստանում առկա համապատասխան գիտական ներուժը:

4.9.2 Գյուղատնտեսություն և բնապահպանություն

**Գյուղատնտեսության** ոլորտում հիմնախնդիրների ձևակերպման և լուծման ռազմավարության նպատակը երկրի պարենային անվտանգության ապահովումն է: Այդ առումով կառավարությունը մեծապես կարևորում է գյուղատնտեսական մթերքների տեղական արտադրողների և վերամշակողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումները, գյուղմթերքների արտահանման օժանդակությունը:

Առանձնակի ուշադրություն կդարձվի հողի շուկայի ձևավորմանը՝ բոլոր հողատերերին հանձնելով հողի սեփականության իրավունքի վկայականներ: Միջոցներ կձեռնարկվեն պետական պահուստային ֆոնդի հողերի օտարման ուղղությամբ և պայմաններ կստեղծվեն դրանց արդյունավետ օգտագործման համար, կկազմվեն հանրապետության մարզերի և համայնքների հողերի օգտագործման սխեմաները:

Կառավարությունը կշարունակի օժանդակել գյուղատնտեսությունում կատարվող ներդրումներին ու վարկավորմանը: Ոլորտում ներդրումների գերակա ուղղությունները կլինեն ոռոգման համակարգերի վերականգնումը և դրանց անխափան ու անվթար շահագործումը, հողերի բարելավման և մելիորացման աշխատանքները, սերմնաբուծության և տոհմային գործի զարգացման, բույսերի պաշտպանության և հակահամաճարակային միջոցառումները: Կձեռնարկվեն միջոցներ գյուղատնտեսության վարկավորման բնագավառում առաջացած խոչընդոտների վերացման ուղղությամբ, հատկապես գրավադրման մեխանիզմներում հողի լիարժեք օգտագործման հիման վրա: Միաժամանակ քայլեր կձեռնարկվեն գյուղատնտեսության մեջ ապահովագրական համակարգի ներդրման, կոոպերացիայի զարգացման, գյուղացիական միավորումների ձևավորման ուղղությամբ:

Կառավարությունը կշարունակի ոռոգման համակարգի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրի իրականացումը՝ բարձրացնելով ոռոգման համակարգերի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը, կրճատելով ջրի կորուստները, կարգավորելով ոռոգման ջրի հատկացման և ջրի վարձի գանձման փոխհարաբերությունները: Կշարունակվեն և կավարտվեն Որոտանի հիդրոհանգույցի հորատանցումն ու շինարարությունը, Արփա-Սևան թունելի հիմնանորոգումը, ջրամբարների պատվարների ամրապնդման ու վերանորոգման աշխատանքները և կապահովվի դրանց անվտանգ ու անխափան շահագործումը:

**Բնապահպանության** ոլորտում կշարունակվեն բնական պաշարների վերականգնելիության ուղղված բնապահպանական համակարգի ներդրման աշխատանքները (Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման, անապատացման դեմ պայքարի, շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների և այլ ծրագրեր): Հայաստանի ջրային ռեսուրսները համարելով պետության կարևորագույն հարստություն, կառավարությունը կմշակի ջրային ռեսուրսների օգտագործման համալիր հայեցակարգ:

Բնապահպանության բնագավառում վերափոխումների հիմնական ուղղությունները կլինեն բնական պաշարների ուսումնասիրության, պահպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում ամբողջական ու համակարգված պետական քաղաքականության իրականացման ապահովումը, բնական պաշարների օգտագործման արտոնագրման ու վճարովի տրամադրման, բնությանը պատճառված վնասի փոխհատուցման համակարգերի զարգացումն ու կատարելագործումը, հանրապետությունում էռոզիոն գործընթացների աճի դադարեցմանը, հակասողանքային գործընթացների նվազեցմանն ու հողերի վերականգնմանն ուղղված ծրագրի մշակումը, անտառապատման և անտառվերականգնման ծավալների զգալի աճի ապահովումը, բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության ուժեղացումը և միջազգային կոնվենցիաներով Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովումը:

### 4.10 Արտադրական ենթակառուցվածքներ

**Վառելիքաէներգետիկ համակարգի** բարեփոխումների շրջանակներում հիմնական շեշտադրումը կարվի էներգահամակարգի հուսալի և անվտանգ շահագործման, վերազինման, համակարգի արդյունավետ գործունեության, համակարգում առկա կորուստների կրճատման, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ նաև էներգակիրների ու դրանց մատակարարման այլընտրանքային ուղիների ապահովման վրա: Մասնավորեցման գործընթացում կառավարությունը կարևորում է խնդրի որակական կողմը, և այդ նպատակով ռազմավարական նշանակության ընկերությունների (մասնավորապես՝ բաշխիչ ցանցերի) մասնավորեցումը կիրականացնի հրապարակայնորեն՝ համակողմանի քննարկումների միջոցով ստանալով հասարակության լայն խավերի աջակցությունը: Ընդ որում, մասնավորեցումը կառավարությունը դիտում է ոչ թե նպատակ, այլ միջոց՝ ապահովելու մասնավորեցվող ընկերությունների արդյունավետ գործունեությունը, համակարգում չարաշահումների վերացումը, ներդրումների ներգրավումը և ի վերջո՝ սպառողների շահերի պաշտպանությունը:

Էներգետիկայի ոլորտում կառավարությունը հետամուտ կլինի Հայկական ԱԷԿ-ի անվտանգության աստիճանի անընդհատ բարելավմանը, Իրան-Հայաստան գազամուղի կառուցմանը, Հայաստանի Հանրապետության բնակչության, այլ սպառողների գազամատակարարման վերականգնմանը և գազամատակարարման ցանցի ընդլայնմանը, Սյունիք-կենտրոն էլեկտրահաղորդման գծի ուժեղացմանը, սեփական էներգետիկ ռեսուրսների և առաջին հերթին տնտեսապես հիմնավորված հիդրոէներգետիկ պոտենցյալի հնա-

րավորինս օգտագործմանը, այդ թվում՝ Մեղրու ՀԷԿ-ի ներդրումների իրականացման համար ռազմավարական ներդրողի ներգրավմանը, Հրազդանի ՊԾԷԿ-ի 5-րդ բլոկի շինարարության ավարտի հետ կապված խնդրի համալիր լուծմանը, էլեկտրաէներգիայի, ջերմային էներգիայի և գազամատակարարման հաշվառման համակարգերի արդիականացմանը:

Հատուկ ուշադրության է արժանի սակագների ձևավորման սկզբունքների ուսումնասիրությունը:

Կառավարությունը **ջրամատակարարման և ջրահեռացման** աշխատանքների բարելավման գերակա ուղղություններ համարում է, մասնավորապես, համակարգի կառավարման մեխանիզմների կատարելագործումը (այդ թվում՝ բնագավառում գործունեության հարուստ փորձ ունեցող հայտնի ընկերությունների ներգրավման ճանապարհով), ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը, համակարգերի շահագործման տնտեսական արդյունավետության և հուսալիության բարձրացումը, մատուցված ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքագրման մակարդակի բարձրացման և ջրի կորուստների նվազեցման նպատակով հաշվառման համակարգի կազմակերպման համալիր ծրագրի ներդրումը: Համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կառավարությունը խորհրդարան կներկայացնի ջրային նոր օրենսգրքի, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի վերաբերյալ օրենքի նախագծերը:

**Տրանսպորտ և կապ.** Տնտեսության զարգացման, ներդրումների խրախուսման անհրաժեշտ պայման է կապի և տրանսպորտային ուղիների բարելավումը: Կառավարությունը հետամուտ կլինի հեռահաղորդակցության ոլորտում ներդրումային ծրագրերի լիարժեք իրագործմանը, որակյալ կապի և մատչելի ինտերնետային ծառայությունների ապահովմանը: Կառավարությունը կմշակի կապի այլընտրանքային համակարգերի կիրառման հնարավորություններ ապահովող ծրագրեր՝ հետագայում բացառելով որևէ ընկերության մենաշնորհային դիրք: Կշարունակվեն ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, հայկական երկաթուղու, նրա կապի համակարգի, «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նորոգման աշխատանքները: «Հայկական ավիաուղիներ» ՊՓԲ ընկերությունում եկամտաբեր գործունեության ապահովմանն ուղղված անհրաժեշտ կառուցվածքային փոփոխություններից հետո կառավարությունը կնախապատրաստի ընկերության մասնավորեցումը՝ որպես շուկայական մրցակցության պայմաններում ազգային ավիափոխադրողի արդյունավետ և երկարատև գործունեության երաշխիք: Կառավարությունը կարևորում է «Կավկազ» նավահանգստի երկաթգծալաստանավային անցման վերանորոգման աշխատանքների իրականացումը:

### 4.11 Սոցիալական համակարգ

<u>4.11.1 Առողջապահություն և սոցիալական ապահովություն</u>

Առողջապահության ոլորտում կառավարության առաջնահերթ խնդիրն է բարեփոխումների ավարտումը հնարավոր կարճ ժամանակահատվածում, բյուջետային հատկացումների ուշացման արատավոր «ավանդույթի» վերացումը, կուտակված պարտքերի վճարման ժամանակացույցի մշակումն ու ան-

վերապահ կատարումը, բնակչության համար անվճար բուժօգնության համակարգի ստեղծումը: Իրականացվելու են աշխատանքներ առողջապահական համակարգում պետական գույքի (առողջապահական հաստատությունների) մասնավորեցմանը նպաստելու և այդ գործընթացը խթանող նախադրյալների ստեղծման ուղղությամբ:

Իրականացվելու է բնակչությանը մատուցվող բժշկական օգնության փոխհատուցման բազմաձևություն (պետական պատվեր, համավճար, բժշկական ապահովագրություն, վճարովի ծառայություններ և այլն):

Բժշկական ապահովագրության կենսունակ համակարգի ներդրումը, որպես առողջապահության համակարգի բարեփոխումների կարևորագույն տարր, ոչ միայն առողջապահության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ ներգրավելու միջոց է, այլ նաև բնակչության համար բժշկական օգնությունը առավել մատչելի դարձնելու, սոցիալական արդարության սկզբունքներ սերմանելու և ռեսուրսների նպատակային օգտագործումն ու բժշկական ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու երաշխիք:

Առաջնային բուժօգնության կարևորագույն օղակը ներկայացնող ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգի զարգացման հիմնական ուղղություններն են ընտանեկան բժշկության համակարգի ձևավորումը, անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական օգնության բավարար ծավալի և որակի ապահովումը:

Բնակչության սոցիալական աջակցության հիմքում գերակշռող պետք է լինի հասցեավորված օգնությունը այն ընտանիքներին, որոնց փաստացի սպառումը ցածր է կենսապահովման նվազագույն չափից: Սոցիալական արտոնությունները պետք է սահմանվեն որպես դրամային վճարներ արտոնություն ստացողին: Էական բարելավման կարիք ունի կարիքավորության ստուգման և, դրանով պայմանավորված ընտանեկան նպաստների համակարգը:

Սոցիալական ոլորտում բարեփոխումները պետք է ուղղվեն երկու հիմնախնդիրների լուծմանը՝.

- ♦ սոցիալապես խոցելի ընտանիքների առավել արդյունավետ պաշտպանություն անցումային շրջանի բացասական ազդեցություններից՝ նրանց համար ապահովելով նվազագույն սոցիալական ծառայությունների մատչելիություն.
- ♦ աշխատող բնակչության համար իրենց եկամուտների հաշվին ապահովել սոցիալական ծառայությունների առավել լայն հնարավորություններ՝ միաժամանակ անուղղակի պայմաններ ստեղծելով նաև կարիքավոր ընտանիքների սոցիալական պաշտպանության համար:

Կառավարությունը կապահովի կենսաթոշակների և նպաստների վճարումը սահմանված ժամանակին և դրանց հետևողական բարձրացումը: Կատարելագործման կարիք ունեն կենսաթոշակային ապահովագրության գործող մեխանիզմները՝ կենսաթոշակառուների և այդ տարիքին մոտ գտնվողների համար պահպանելով կենսաթոշակային գործող մեխանիզմները, և աշխատող բնակչության համար կիրառելով կենսաթոշակների ֆինանսավորման կուտակային մեխանիզմներ:

Նպատակ ունենալով հանրապետությունում աղքատության առավելագույն կրճատումը և իրականացվող բարեփոխումներին համապատասխան ուղղվածության հաղորդումը, կառավարությունն արդեն իսկ ձեռնամուխ է եղել, խորհրդարանական հանձնաժողովների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համատեղ, աղքատության կրճատման ռազմավարական ծրագրի մշակմանը:

Սոցիալական խնդիրների լուծմանը կնպաստի նաև աշխատանքային նոր օրենսգրքի ընդունումը: Կառավարությունը հետևողական կլինի նաև հաշմանդամների և տարեցների, կանանց և երեխաների հիմնահարցերի լուծման գործում: Աշխատանքներ կտարվեն նաև զբաղվածության խնդրի ստիճանական լուծման ուղղությամբ:

Կառավարությունը կարևորում է միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգի, ազգամիջյան բախումներից տուժած անձանց բնակարանային ապահովման համալիր ծրագրի մշակումը, հասարակության մեջ փախստականներին ինտեգրացման գործընթացի շարունակումը՝ որպես դրա վերջնական փուլ համարելով նրանց կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ընդունումը:

4.11.2 Կրթություն, գիտություն, մշակույթ

Հանրակրթական համակարգի բարեփոխումները կշարունակվեն բոլոր հիմնական ուղղություններով՝ ներառելով համակարգի ռացիոնալացումը, հաստատությունների ինքնավարության աճը և անցումը ֆինանսավորման նոր՝ ըստ աշակերտների թվի, համակարգի: Ընդհանուր միջնակարգ կրթության համակարգի պահպանմանն ու զարգացմանը զուգահեռ քայլեր կձեռնարկվեն 6-օրյա և 11-ամյա ուսուցման կազմակերպման նախադրյալների ստեղծման ուղղությամբ:

Կառավարությունը կմշակի կրթության զարգացման պետական ծրագիր, որի հիմքում կլինի ոչ միայն ուսուցիչների աշխատավարձի զգալի բարձրացումը, կրթական բոլոր հաստատությունների համար հավասար պայմանների ստեղծումն ու կրթօջախների բազմազանության ապահովումը, այլ նաև կադրերի վերապատրաստման և վերապրոֆիլավորման ինստիտուտների ձևավորումը՝ հիմնված միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի վրա:

Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության ոլորտում կառավարությունն իր խնդիրների շարքում կարևորում է ուսումնական հաստատությունների արտոնագրման և հավատարմագրման պետական չափորոշիչների ամրագրումը, կրթօջախների ինքնավարության ընդլայնումն ու կրթության վերջնական արդյունքի նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը, պետական պատվերի ձևավորման և տեղաբաշխման կարգի արմատական վերափոխումը:

Կառավարությունը նախատեսում է Համահայկական համալսարանի ստեղծում, ինչը հնարավորություն կտա հայ և օտարերկրյա լավագույն մասնագետների կարողություններն օգտագործել կրթական բնագավառում բեկում մտցնելու համար, ձևավորել ազգային և համամարդկային խնդիրների շուրջ հայ մտավորականների համախմբման միջավայր:

Հատկապես կարևորելով ժամանակակից տեխնոլոգիաների օգտա-

գործման նպատակային ծրագրի իրագործումը կրթության, արտադրության և մշակույթի ոլորտներում, կառավարությունը նպատակադրված է մինչև 2002 թվականը բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատություններում ապահովել Ինտերնետային կապով համակարգչային սրահներ:

Կառավարությունը հանրապետության համակողմանի առաջընթացի համար գիտությունը դիտում է իբրև կարևորագույն գործոն: Կառավարությունը կձեռնարկի ոլորտի զարգացումն ապահովելու, խոչընդոտող հիմնախնդիրները լուծելու քայլեր, մասնավորապես գիտության կառավարման և ֆինանսավորման վերափոխման ու կառուցվածքային օպտիմալացման ուղղությամբ: Գիտության բնագավառի հիմնախնդիրների լուծման հարցում կառավարության քաղաքականությունը նպատակաուղղվելու է նաև գիտական ներուժի զարգացման ռազմավարության շրջանակներում պետական հովանավորության արդյունավետ համակարգի ձևավորմանը զուգահեռ գիտության ֆինանսավորման մասնավոր աղբյուրների խթանմանը, և այդ նպատակով շահագրգիռ գիտական կոլեկտիվների մասնակցությամբ կմշակի գիտության ոլորտի բարելավման հայեցակարգ:

Կառավարությունը պետության մշակութային քաղաքականության զարգացման հիմնական ուղին համարում է ազգային մշակութային արժեքների պահպանմանը, զարգացմանը և համաշխարհային հանրությանը պատշաճ ներկայացնելուն ուղղված ծրագրերի իրագործումը:

Կառավարությունն առաջնային է համարում սփյուռքի հետ կապերի զարգացումը, մասնավորապես համահայկական ինստիտուտների, Հայաստան-Սփյուռք միասնական տեղեկատվական դաշտի ձևավորումը, երկրի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում սփյուռքահայության ներգրավումը, Հայաստանում սփյուռքահայ երեխաների հանգստի կազմակերպումը, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստումը: Կառավարությունը կխրախուսի նաև մշակութային օջախներում հովանավորների և հոգաբարձուների ինստիտուտի ներդրումը:

Պետական երիտասարդական քաղաքականության գլխավոր նպատակն է՝ երիտասարդ մարդու սոցիալական կայացման, նրա ստեղծագործ ներուժը ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործման համար պայմաններ ու երաշխիքներ ստեղծելը:

Կառավարությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հայեցակարգի հիման վրա Ազգային ժողով կներկայացնի համապատասխան օրենքի նախագիծ, որով կսահմանվեն այս բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն ու ուղղությունները, ֆիզիկական կուլտուրային և սպորտին աջակցության ձևերը:

Զուգահեռաբար, կառավարությունը կհստակեցնի Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հետ կնքված մտադրությունների հուշագրից բխող գործնական ծրագիրն ու դրա կենսագործման մեխանիզմները: Կառավարությունը քայլեր կձեռնարկի նաև «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառման ապահովման, իրավական դաշտի հետագա կատարելագործման ուղղությամբ:

Կառավարությունը նաև առավելագույն ջանքեր կգործադրի քրիստոնեության 1700-ամյակի հետ կապված տոնակատարությունները պատշաճ մակարդակով իրականացնելու ուղղությամբ:

Լեզվաքաղաքականության ասպարեզում կառավարությունը կապահովի հայերենի՝ որպես պետական լեզվի, պատշաճ կիրառությունը:

### 4.12 Քաղաքաշինություն և տարածքային կառավարում

Քաղաքաշինության բնագավառում կառավարության քաղաքականությունն առաջնահերթ ուղղված կլինի քաղաքաշինության և ճարտարապետության զարգացման հիմնական ուղղությունների, տարաբնակեցման գլխավոր ուրվագծի սկզբունքների հիման վրա հանրապետության տարածքային զարգացման ուրվագծի, առանձին մարզերի զարգացման ծրագրերի մշակմանը, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից ելնելով՝ հանրապետության տարածքում քաղաքաշինական գործունեության կարգավորմանը, ապօրինի և անորակ շինարարության վերացմանը:

Համապատասխան միջոցներ կձեռնարկվեն Երևանի Դավիթաշենի կամուրջը 2000 թվականի ընթացքում շահագործման նվազագույն ծախսերով հանձնելու համար:

Կառավարության տեսադաշտում կլինեն նաև շենքերի և կառուցվածքների (հատկապես՝ կամուրջների) տեխնիկական վիճակի ուսումնասիրությունը, սեյսմակայունության, անվտանգ շահագործման ապահովման համալիր միջոցառումների ներդրումը, քաղաքաշինական կադաստրի ձևավորումը, չափագիտական ծառայության ստեղծումը:

Շարունակում է առաջնահերթ խնդիր մնալ աղետի գոտու վերականգնումը, և այդ նպատակով կառավարությունը հետամուտ կլինի հաստատված ծրագրի լիարժեք իրականացմանը: Աղետի գոտում կշարունակվեն ցուցաբերվել առանձնահատուկ մոտեցումներ. համաֆինանսավորման հիմունքներով պետական միջոցների օգտագործում, բաժնետիրական հիմունքներով բնակարանային շինարարության խրախուսմամբ բնակչության միջոցների ներգրավման արդյունավետության բարձրացում, ինչպես նաև անհատական բնակարանային շինարարությանն աջակցելու համար վարկային միջոցների տրամադրում:

Բնակարանային ոլորտում տարվող քաղաքականությունը նպատակաուղղված կլինի գոյություն ունեցող բնակարանային ֆոնդի պահպանման, սպասարկման և շահագործման խնդիրների ապակենտրոնացմանը, պետական անմիջական կառավարման մեխանիզմների՝ ոչ պետականով փոխարինմանը, պետական պարտավորությունների իրականացման քայլերի հստակեցմանը և բնակարանային շինարարությունից բացի բնակարանային ապահովման այլընտրանքային ձևերի ներդրմանը, օրենսդրական դաշտի կատարելագործմանը: Ոլորտում տնտեսական բարեփոխումների հետագա շարունակման հիմնախնդիրներն են սահմանամերձ բնակավայրերում վնասված տների վերականգնումն ու համատիրությունների, ինչպես նաև բնակֆոնդն սպասարկող ընկերությունների ստեղծմանն ու կայացմանը պետական օժանդակության ցուցաբերումը:

Տարածքային կառավարման համակարգի զարգացումը նպատակաուղղվելու է հանրապետության վարչատարածքային միավորների սոցիալտնտեսական ներդաշնակ զարգացմանը, պետական կառավարման ապակենտրոնացմանը, տեղական ինքնակառավարման դերի և արդյունավետության բարձրացմանը, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների հստակեցմանը և ֆինանսական հնարավորություններին դրանց համապատասխանության ապահովմանը: Այդ խնդիրների լուծման համար կարևոր նշանակություն կունենա «Տարածքային կառավարման մասին» օրենքի ընդունումը:

Երևան քաղաքի ներդաշնակ զարգացումը պահանջում է քաղաքի կառավարման նոր մոդելի մշակումը, որի նպատակով կներկայացվի «Երևանի մասին» օրենքի նախագիծը:

Կառավարությունը տնտեսական զարգացման իր ծրագրերում, գյուղում ծագած սոցիալական հարցերը լուծելու և հանրապետության ժողովրդագրական իրավիճակը կայունացնելու նպատակով, առանձնահատուկ ուշադրություն կդարձնի հեռավոր, սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի առաջանցիկ զարգացումն ապահովելու պետական օժանդակությանը՝ այդ նպատակով հետամուտ լինելով արդեն իսկ հաստատված ծրագրերի լիարժեք կենսագործմանը:

# ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԱԽԱՆՇՎԱԾ ՔԱՅԼԵՐԸ ԹԵԼԱԴՐՎԱԾ ԵՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

**Հարցազրույց ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Լևոն Բարխուդարյանի հետ**
(«ԱԶԳ» 13 հունիսի 2000թ.)

- Պրն Բարխուդարյան, հայտարարվել է, որ ներկայացված ծրագիրը հայեցակարգային է, և առաջիկայում մշակվելու է գործողությունների ծրագիր ըստ բնագավառների: Ի՞նչ մանրամասնությամբ մշակված կլինեն այդ ծրագրերը և որքանո՞վ կապահովվի դրանց հրապարակայնությունը:

- Նախ և առաջ համաձայն չեմ, որ ներկայացված ծրագիրը հայեցակարգային է. այստեղ շատ են կոնկրետությունները: Ծրագիրը կառավարության ընդհանուր հայտարարությունն է, ռազմավարությունը՝ թե որ ոլորտներում ինչ պետք է անի և ինչպես: Դրան կհետևեն արդեն աշխատանքային ծրագրերը, որտեղ նշված կլինեն կոնկրետ միջոցառումները, կատարողները, կատարման ժամկետները: Դրանցում կլինեն նաև ամենառաջնային կարճաժամկետ անելիքներ, որոնք ենթադրում են աշխատանքների իսկայական ծավալ:

Ինչ խոսք, այդ ծրագրերի հրապարակայնությունը ևս ապահովված կլինի. կառավարության որոշումներն առնվազն հրապարակվում են տեղեկագրերում:

- Կառավարությունը ծրագրում է բյուջեի ճեղքվածքի կրճատում: Կարելի՞ է այսօր կոնկրետ ժամկետներ նախանշել:

- Առաջիկա երեք ամիսը լինելու է շատ լարված, քանի որ տարվա առաջին հինգ ամիսներն արդեն անցել են, իսկ ակնկալիքները երկրից, ֆինանսավորման հետ կապված, ավելի քիչ են, քան առաջ: Հարցը շատ գործոններով է պայմանավորված, բայց ամենակարևորն այն է, որ պետք է աշխատենք ապահովել այն եկամուտները, որոնք նախանշված են 2000թ. բյուջեում: Ամռան ամիսներին բյուջեի կատարման ընթացքն ու դինամիկան ցույց կտան, թե որքանով է հնարավոր լավատես լինել և որքանով բյուջեի մեջ ավել կամ պակաս չափով փոփոխություններ կլինեն: Եթե կարողանանք հաջող և բարձր տեմպով կատարման ընթացք ապահովել, իսկ դրա համար ամեն ինչ արվում է, ապա շատ մեծ վերափոխումների, փոփոխությունների կարիք չի լինի: Եթե ոչ՝ արդեն հարկ կլինի մտածել լրացուցիչ միջոցառումների մասին:

- Նշեցիք, որ որոշակի պայմանների դեպքում կառավարությունը փոփոխություններ կառաջարկի ընթացիկ բյուջեում: Ո՞ր բնագավառներում կլինի սեկվեստոր:

- Այդ առումով վաղ է որևէ հստակ բան ասել: Կրկնում եմ, առաջիկա 2-3 ամսվա կատարման ընթացքը որոշիչ է լինելու: Հնարավոր է որոշակի փոփո-

խություններ և վերաբաշխումներ լինեն բյուջեում, բայց ինչպիսի բնույթ և ծավալ կկրեն՝ կախված կլինի մեր ռեալ ծրագրերի կատարումից և ընթացքից: Այստեղ դեր ունեին կառուցվածքային այն բարեփոխումների ծրագրերը, որոնք մենք իրագործում ենք Համաշխարհային բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների հետ: Եթե հաջողվի դրանք իրագործել, ապա փոքր փոփոխություններով բավարարվելու հավանականությունն ավելի մեծ կլինի:

- Ծրագրով նախատեսվում է 2001-2003թթ. ընթացքում կրկնապատկել կենսաթոշակները, նպաստները, բյուջետային հիմնարկների աշխատավարձերը: Որքանո՞վ է հիմնավորված դրա գործնական իրականացումը:

- Բավական հիմքեր կան. մասնավորապես նախատեսվում է արտահանման աճ, խոշոր ներդրումների ներգրավում: Կարծում եմ, որ նշված ժամկետի ներսում հիմքեր կունենանք այդ կրկնապատկումներն անելու, եթե այսօր ոչ միայն չխոչընդոտենք դրսից եկող ներդրումներին, որոնք արտահայտվում են նաև սեփականաշնորհման ձևով, այլև ինքներս ավելի լայն բացենք դռները, առանց զիջելու ազգային շահերը, որոնք երբեմն տնտեսական դաշտում ոտնահարվում են: Մենք պետք է կարողանանք շատ ակտիվ աշխատել ներդրողների հետ: Ֆինանսական միջոցներ արտերկրում մի քանի անգամ ավելի կա, քան երկրի ներսում, և այնտեղից շատ արագ կարող ենք լուրջ և հսկայածավալ ներդրումների ակնկալիքներ ունենալ: Միջազգային բիզնեսին պետք է քաղաքական կայունություն, նախատեսելի ապագա և շատ թե քիչ ձևավորված տնտեսական դաշտ: Վերջինն ունենք, իսկ առաջին երկուսը պետք է ապահովենք: Այդ առումով վարչապետ Անդրանիկ Մարգարյանն ԱԺ-ում ունեցած իր ելույթում առաջնային տեղ տվեց հակակոռուպցիոն քաղաքականությանը: Ըստ իս, բյուրոկրատական քաշքշուկները, տարբեր մակարդակներում ռեկետը դարձել է առաջին խոչընդոտներից մեկը: Դրանք տեղ-տեղ գործարարության համար ստեղծել են անընդունելի պայմաններ: Եթե կարողանանք այդ ֆոնը վերացնել, եթե յուրաքանչյուր մարդ կարողանա իրեն շատ թե քիչ անկաշկանդ զգալով այստեղ թեկուզ փոքր գումարներ ներդնել, դա արդեն կլինի մեր հաջողությունը: Դրան կարող են հաջորդել խոշոր ներդրումները, որոնք ինքնըստինքյան ենթադրում են նաև հարակից բիզնեսների ինֆրակառուցվածքների ստեղծում:

- Պրն նախարար, ծրագրով ենթադրվում է երեք տարում արտահանման ծավալների տարեկան 25 % աճ: Արդյոք սա ռիսկային հայտարարություն չէ՞:

- Կարծում եմ՝ ոչ: Դրա համար մենք որոշակի հիմքեր ունենք, հատկապես առաջիկա երկու տարվա համար: Արդեն մի քանի որոշակի գործարքներ կան, որոնք նշված աճի հիմք տալիս են: Համենայն դեպս, այդ ցուցանիշի ապահովումը մեզ համար կարևորագույն նպատակ է: Եթե այն չիրագործվի, ավելորդ կլինի խոսել վճարային հաշվեկշռի, լրացուցիչ արժութային ռեզերվների, հարկերի մասին: Երկրում կատարված ցանկացած խոշոր ներդրում մեծ մասամբ ուղղված է լինելու արտահանմանը, քանի որ ներքին շուկան տարողունակ չէ: Մեր շուկայի համեմատ ունենք մեծ ներուժ: Հետևապես պետք է ակնկալենք նման աճի տեմպեր: Դա կլինի ակտիվ և դրական իմաստով հավակնոտ ծրագիր:

- Կարելի՞ է ասել, որ կառավարությունը զիտակցված իր առջև դրել է կոշտ

խնդիր:

- Այո: Բոլոր թվերը, որ ներառված են ծրագրում, բավական կոշտ են: Այսուհանդերձ, որոշեցինք դնել նման խնդիրներ, քանի որ դրանք թելադրվում են իրականությամբ:

- Կառավարությունը պատրաստվում է տնտեսական զարգացման շեշտը դնել իրական հատվածի վրա: Հատկապես ո՞ր ոլորտներն են նկատի առնվում:

- Ճիշտ չի լինի, եթե նշենք մի քանի ոլորտ և ասենք, որ այդ ոլորտներով ենք զբաղվելու: Ընդհանուր ներդրումային դաշտը պետք է բարելավվի: Գործարար ակտիվությունը բոլոր ուղղություններով էլ պետք է լինի: Ըստ իս, պետք է ընդգծված լինի բարձր տեխնոլոգիաների բնագավառը, որը մեր արտահանման ու մասնագիտացման լավագույն տարրերից է և որի հիմքերն արդեն կան: Ընդգծված բնագավառներից լինելու են նաև ոսկերչությունը, ականագործությունը, էներգետիկան, մետալուրգիան, հանքարդյունաբերությունը, տուրիզմը: Վերջինս հատկապես Հայաստանում քրիստոնեության պետականորեն ճանաչման 1700-ամյակի կապակցությամբ պետք է որոշակի շարժ արձանագրի: Նկատի ունենանք, որ յուրաքանչյուր հազար զբոսաշրջիկ 1 մլն դոլար գումար է բերում հանրապետություն, իսկ ժամանակին մինչև 40 հազար զբոսաշրջիկ ենք ունեցել: Միայն ավանդույթներ ձևավորող այս ճյուղն իր հետ բերում է ծառայությունների, աշխատատեղերի զգալի ցանց: Կարծում եմ, Հայաստանի զբոսաշրջիկային ներուժին ոչ ոք չի կասկածում:

-Ծրագրով նախատեսվում է «Հայխնայբանկի» սեփականաշնորհում: Կարծիք կա, որ դրանով կառավարությունը խուսափում է ավանդատուների նկատմամբ ունեցած պարտավորություններից:

- Այստեղ երկու տարբեր հարց խառնում են: Ավանդների ինդեքսացիայի հարցը կապ չունի կոնկրետ «Հայխնայբանկի» հետ: Պետությունն է, որ ժամանակին ավանդներ է վերցրել և ԽՍՀՄ փլուզումն է, որ արժեզրկել է մեր բոլորի խնայողությունները: Բուն բանկը, որպես կառույց, այս ամենի հետ որևէ առնչություն չունի:

Սեփականաշնորհում ասելով մենք նկատի ունենք մի հետաքրքիր կառույցի ստեղծում, որին զուգահեռ կգործի փոստային ծառայություն: Այն կտարածվի հանրապետությունով մեկ, կհասնի մինչև համայնքներ, ինչը որակապես կբարձրացնի սպասարկումը տեղերում: Այս ծրագիրը դեռևս հայեցակարգային, մշակման փուլում է: Այն իրականացնելու համար որոշակի ներդրումներ են պետք: Գուցե ներգրավվեն եվրոպական այնպիսի բանկեր, որոնք այդ ուղղությամբ փորձ ունեն և շատ արդյունավետ աշխատում են:

Իսկ ավանդների ինդեքսավորումը բյուջեի հետ է կապված, հնարավորության դեպքում կառավարությունը պետք է գումար հատկացնի և մարման մեխանիզմ մշակի, սակայն սա այլ հարց է: Իմ անձնական կարծիքով ռեսուրսները կարելի է շատ ավելի արդյունավետ օգտագործել:

- Վարչապետը խորհրդարանում ունեցած ելույթում նշեց, որ առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու ներդրումային ծրագրերին: Ներդրումային քաղաքականության մեջ նոր մոտեցումներ լինելո՞ւ են:

- Այդ ուղղությամբ բավականին աշխատանքներ են տարվում: Մեծ տեղ է վերապահված Հայկական զարգացման գործակալությանը, որը կատարելու է «Մեկ կանգառի» կենտրոնի դերը, ուր յուրաքանչյուր ներդրողի հետ անհատական աշխատանք կտարվի, կներկայացվեն բոլոր հնարավոր ծրագրերը: Կպարզեցվեն ամբողջական համակարգեր, հնարավորինս կսահմանափակվի լիցենզավորվող գործունեությունը, կպարզեցվեն գրանցման և փաստաթղթային այլ արարողակարգերը, օրենսդրությունը պարզ և մատչելի կլինի պոտենցիալ ներդրողների համար: Հսկայածավալ աշխատանք կա անելու համակարգչային Web-site-ը պատրաստելու համար, որը ցանկացած ներդրողի հնարավորություն կտա ծանոթանալ Հայաստանին, նրա տնտեսական և իրավական դաշտերին, հնարավոր ներդրումային ծրագրերին՝ ամենայն մանրամասնությամբ, հավանական գործընկերներին:

Շատ է խոսվել համապատասխան օրենսդրական դաշտի անհրաժեշտության մասին: Նշենք, որ այդ դաշտը շատ ավելի բարվոք է, քան դրա իրական կիրառումը կյանքում: Հարցերի հարցը մնում է դատաիրավական համակարգում այն օրենսդրության իրագործումը, որն այսօր արդեն կա և որը բավականին բարձր մակարդակով պաշտպանում է ներդրողներին:

Զգալի աշխատանք կա կատարելու կադրային առումով, հատկապես մաքսային, հարկային վարչարարության ոլորտում: Մեր օրենքները բավական լիբերալ են, բայց վարչարարությունը շատ ցածր է: Վարչական աշխատողը պետք է ունենա համապատասխան մակարդակ, բարոյական նկարագիր, ձգտում՝ օրենքի տառը պաշտպանելու:

- Կոռուպցիայի դեմ պայքարը հայտարարվել է ներկա կառավարության առաջնային խնդիրներից մեկը, ի՞նչ գործնական քայլեր են նախատեսվում իրականացնել:

- Այս ուղղությամբ ընդհանուր ծրագիրը նախապատրաստվում է արդեն մեկուկես տարի: Այն առհասարակ վերաբերում է քաղաքացիական ծառայության բարեփոխումներին: Անցյալ շաբաթ կառավարությունը հավանություն տվեց «Քաղաքացիական ծառայության» օրենքի նախագծին և ուղարկեց ԱԺ-ի քննարկմանը: Դրանով սահմանվում է պետական ծառայողի կարգավիճակը, որոշակի սոցիալական պաշտպանվածություն է տրվում, բացառվում, որ պետական ծառայողը դառնա բարձրաստիճան պաշտոնյայի քմահաճույքի առարկա: Սա թույլ կտա ծառայողներին ավելի անկաշկանդ լինել իրենց պահվածքում, վստահ լինել իրենց կարիերայի խնդրում:

Միաժամանակ, հավանություն է տրվել նաև պետական բարձրաստիճան պաշտոնյաների մի ստվար զանգվածի գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման մասին օրենքի նախագծին: Այս երկու օրենքներն էլ կոռուպցիայի դեմ պայքարի գործիքներ են: Իմ կարծիքով, պետք է անցնել եկամուտների համընդհանուր հայտարարագրման, երբ յուրաքանչյուր քաղաքացի տարեկան արդյունքներով պետությանը հայտարարում է իր եկամուտների մասին: Դա կերևակի զգալի ռեզերվներ, կնվազեցնի ստվերային շրջանառությունը, կհաստատի պատասխանատվության կուլտուրա:

Քաղաքացիական ծառայությունների բարեփոխումների արդյունքում պետական ապարատը կկրճատվի. պետք է վերջ դրվեն զուգահեռ և ուղղահա-

յաց կապերին, հստակեցվեն տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները և այլն: Կրճատումներից հետո հնարավոր կլինի նաև խոսել աշխատավարձերի բարձրացման մասին: Սա կարևորագույն խնդիր է, քանի որ եթե մենք ստեղծենք պետական ծառայողի ճիշտ դաշտ, բայց աշխատավարձերը չբարձրացնենք, պակաս արդյունավետություն կլինի: Վստահ եմ, որ պետական ծառայողի աշխատավարձի բարձրացումը մի քանի անգամ դրական կանդրադառնա ընդհանուր տնտեսական զարգացման վրա: Շատ երկրներ են անցել այդ ճանապարհով՝ հեծանիվ հորինելու կարիք չկա:

Կլինեն նաև առանձին որոշումներ, միջոցառումներ իրավապահ մարմինների կողմից, որոնք նույնպես ներգրավված են այս աշխատանքներում:

## Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների մասին

Օգոստոսի 3-ին կառավարությունը հաստատեց իր գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը: Դա կառավարության ծրագրից բխող պահանջ էր, որի ներկայացման անհրաժեշտության մասին ԱԺ-ում կառավարության գործունեության ծրագիրը ներկայացնելիս նշել էր վարչապետ Անդրանիկ Մարգարյանը: Այս ցանկում, ըստ ոլորտների, նախարարությունների առաջարկած շուրջ 300 միջոցառումներ են, որոնցից յուրաքանչյուրի համար սահմանված է նպատակ, կատարող, ժամկետ, ֆինանսական ապահովում: Այլ խոսքով, միջոցառումների ցանկը կառավարության գործունեության ծրագրի խիստ որոշակիացված, մանրամասնված, հասցեագրված տարբերակն է: Այն առավել վերահսկելի ու թափանցիկ է դարձնում կառավարության գործունեությունը՝ իրատեսական դարձնելով նրա ծրագրային հիմնադրույթների կատարումը:

### Ց Ա Ն Կ

Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների



| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| I. Քաղաքացիական ծառայության բարեփոխումներ – կոռուպցիայի դեմ պայքար | | | | |
| 1. Քաղաքացիական ծառայության բարեփոխումների հայեցակարգին համապատասխան միջոցառումների իրականացում | Պետական կառավարման համակարգի բարելավում | Պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով ՀՀ կառավարության աշխատակազմ | 2000թ. 4-րդ եռամսյակ | |
| 2. «Վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծ ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պետական վերահսկողական աշխատանքների կանոնակարգում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2000թ. դեկտեմբեր | |

* Նշումների բացակայություն նշանակում է, որ տվյալ միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներն ամբողջությամբ նախատեսված են ՀՀ պետական բյուջեով (կամ ենթակա են նախատեսման հաջորդ տարիների ՀՀ պետական բյուջեներով) կամ դրա համար լրացուցիչ ֆինանսական հատկացումներ անհրաժեշտ չեն

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 3. ՀՀ կառավարությունում «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի լրամշակված նախագծի քննարկումների ապահովում | Լիցենզավորման բնագավառում իրավա-հարաբերությունների հստակ և ամբողջական կանոնակարգում | ՀՀ կառավարության աշխատակազմ<br>ՀՀ արդարա-դատության նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 4. Կոռուպցիայի դեմ պայքարի պետական ծրագիր ՀՀ կառավարություն ներ-կայացնելը | Կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրի ընդունում | ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ արդարադատու-թյան նախարարություն<br>ՀՀ ազգային անվտան-գության նախարա-րություն<br>ՀՀ ֆինանսների և էկո-նոմիկայի նախարա-րություն<br>այլ մարմիններ | 2000թ. սեպտեմբեր | |
| 5. «Կառավարության աշխատակազմի կառուցվածքի բարեփոխումների մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծ ներկայացնելը | ՀՀ կառավարության աշխատակազմի կա-ռուցվածքի բարեփոխում, գործունեության արդյունավետության բարձրացում | ՀՀ կառավարության աշխատակազմ | 2000թ. հոկտեմբեր | |
| II. Տնտեսական ակտիվության բարձրացում և ձեռնարկատիրության զարգացում | | | | |
| 6. Ներդրումների խթանման ու գործարա-րությանն աջակցման բարձրաստիճան խորհրդի ստեղծման վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը | Ներդրումների և գործարարության մթնոլորտի բարելավում, վարչարարական խոչընդոտների վերացման աջակցում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. օգոստոս | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 7. Նյու Յորքում կայանալիք Հայաստանին նվիրված միջազգային գործարար համաժողովի պատշաճ նախապատրաստում | Ներդրումային ծրագրերը համաշխարհային ֆինանսական հանրությանը ներկայացնելը, օտարերկրյա ներդրումների ներգրավում<br>Ներկայացվող ծրագրերի քանակի, հնարավոր ներդրողների և ներդրումների ծավալների վերաբերյալ բանակցությունների կազմակերպման և անցկացման ընթացակարգի հստակեցում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. դեկտեմբեր | ՀՀ պետական բյուջե<br>Համաշխարհային բանկ,<br>այլ աղբյուրներ |
| 8. ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականության ազգային ծրագրի մշակում և արտաքին առևտրատնտեսական դոկտրինայի ու գերակայությունների սահմանում | ՀՀ արտաքին առևտրատնտեսական գործունեության հետևողական և միասնական վարման ապահովում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. դեկտեմբեր | |
| 9. «Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագրի իրականացում | ՀՀ և ԵՄ միջև առևտրատնտեսական հարաբերությունների խորացում և ՀՀ օրենսդրության մոտեցում եվրոպականին | ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | շարունակական | |
| 10. Տարածքային տնտեսական զարգացման ծրագրերի մշակման առաջնահերթությունների և ուղղությունների վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը | Նպատակային ներդրումների ներգրավում<br>Կոնկրետ տարածաշրջանների մասնագիտացման ու առանձնահատկությունների բացահայտում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 11. Ընկերությունների ֆինանսական առողջացման և անվճարունակության (սնանկացման) մեխանիզմների լիարժեք և անվերապահ գործադրման նպատակով առկա իրավական արգելքների համապատասխան օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը | Ձեռնարկությունների ֆինանսական առողջացում<br>Ֆինանսապես անառողջ վիճակում գտնվող ձեռնարկությունների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի կիրառման պրակտիկայի ընդլայնում<br>Տնտեսությունում չվճարումների հիմնախնդրի արմատական լուծում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |
| 12. Ընկերությունների գրանցման գործընթացի առավելագույն պարզեցման վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը | Ընկերությունների գրանցման գործընթացի պարզեցում<br>Գրանցման պարզ ընթացակարգերի սահմանում և միասնական համակարգի ձևավորում<br>Ձեռնարկությունների գրանցման բոլոր փուլերի (ներառյալ հարկային, սոցիալական ապահովագրության, ֆիրմային անվանումների և այլն) իրականացում մեկ «պատուհանից» | ՀՀ արդարադատության նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |
| 13. Աշխատանքի պայմանների և անվտանգության ապահովման հետ կապված գործող օրենսդրության կատարելագործման ուղղությունների, աշխատանքի տեսչության գործառույթների, իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության հստակեցման վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը | Աշխատանքային պայմանների բարելավում և անվտանգության ապահովում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն<br>ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն<br>(Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիայի հետ համատեղ) | 2000թ. օգոստոս | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 14. ««Նաիրիտ» ՓԲԸ-ի գործունեության կարգավորմանն ուղղված միջոցառումնե-րի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ ՀՀ կառավարություն ներկա-յացնելը | Ընկերության գործունեության արդյու-նավետության բարձրացում<br>Մինչև 2003 թվականը ընկերության վերջ-նական ֆինանսական առողջացում<br>700 լրացուցիչ աշխատատեղերի ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |
| 15. «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի կողմից արդյունահանվող հանքաքարի ծավալի մե-ծացում, պղնձի խտանյութում պղնձի պա-րունակության բարձրացում և մոլիբդենի օքսիդի արտադրության կազմակերպում | Ընկերության գործունեության արդյունավետության և շահութաբերության բարձրացում<br>50 լրացուցիչ աշխատատեղերի ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. դեկտեմբեր | |
| 16. «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ի կողմից ար-դյունահանվող հանքաքարի ծավալի մե-ծացում և պղնձի խտանյութում պղնձի պարունակության բարձրացում | Ընկերության վերագործարկում, գործունեության արդյունավետության և շահութաբերության բարձրացում<br>750 հիմնական և 50 լրացուցիչ աշխատա-տեղերի ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. դեկտեմբեր | |
| 17. «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ի Շահումյանի բազմամետաղային հանքավայրի շահա-գործման կազմակերպում և խտանյութի արդյունահանման ապահովում | Ընկերության վերագործարկում<br>850 հիմնական և 50 լրացուցիչ աշխատա-տեղերի ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2001թ. առաջին եռամսյակ | |
| 18. «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի առանց ի-րավաբանական անձի կազմավորման հա-մատեղ գործունեության իրականացման նպատակով ներդրողի որոնում, անհրա-ժեշտ փաստաթղթերի նախապատրաս-տում և ստորագրում | Ընկերության վերագործարկում<br>350 աշխատատեղի ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. դեկտեմբեր | |
| 19. Չարենցավանի «Թուջեցուլ» և «Կենտրոնաձուլ» ընկերությունների բա-զայի հիման վրա համալիրի ստեղծում | Ընկերության գործունեության արդյունավե-տության և շահութաբերության բարձրացում.<br>150 աշխատատեղի ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2001թ. երկրորդ եռամսյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 20. «Լույս» ՓԲԸ-ի ֆինանսական առողջացման նպատակով լուծարային գործընթացի նախաձեռնում | Մինչև 2002թ. ընկերության վերջնական ֆինանսական առողջացում, մասնակի վերագործարկում<br>500 աշխատատեղի ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |
| 21. «Մանես և Վալլեք» ԲԸ-ում ռաֆինաց-ված պղնձի արտադրության կազմակեր-պում | Ընկերության կողմից թողարկվող արտա-դրանքի ավելացված արժեքի տեսակարար կշռի և շահութաբերության բարձրացում<br>100 աշխատատեղի ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարության մասնակցությամբ | 2003թ. առաջին եռամսյակ | |
| 22. «Կանազ» ՓԲԸ-ի մասնակցությամբ ստեղծված «ԱրմենԱլ» ընկերության արտադրական ծրագրի ապահովում | Ամսական 2.200 տոննա փայլաթիթեղի արտադրություն<br>450 հիմնական և 300 լրացուցիչ աշխատատեղերի ստեղծում | «Կանազ» ՓԲԸ՝ ՀՀ ար-դյունաբերության և առևտրի նախարարու-թյան մասնակցությամբ | 2001թ. երրորդ եռամսյակ | |
| 23. Գյումրիի «Մանվածքային ֆաբրիկա» ՓԲԸ-ում և «Գյումրի-Տեքստիլ» ՓԲԸ-ում թուրքական «Մետեքս-Տեքստիլ» ընկերու-թյան հետ համատեղ ներդրումային ծրագրի իրականացում | Ընկերությունների վերագործարկում և նոր մրցունակ արտադրատեսակների թողարկում<br>1000 աշխատատեղի ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2001թ. չորրորդ եռամսյակ | Օտարերկրյա գործընկերոջ կողմից |
| 24. «Ծաղկոն» ՊՓԲԸ-ի մասնավորեցում | Մասնավորեցման արդյունքներով ընդուն-ված ծրագրի կատարում<br>1330 աշխատատեղի ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարու-թյուն՝ մասնակցությամբ | 2000թ. օգոստոս | |
| 25. Ակնագործական ընկերությունների հիմնադրում Գյումրիում (Շիրդայմոնդ) և Տավուշում (Թագազարդ) | Լրացուցիչ 100 աշխատատեղի ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 26. «Երևանի ոսկերչական գործարան» ՓԲԸ-ի մասնավորեցման աշխատանքների նախապատրաստում | Ներդրումների ներգրավում, թողարկվող արտադրանքի ծավալի աճ<br>300 աշխատատեղի ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2001թ. հունվար | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 27. «Դողագործ» ՓԲԸ-ի գործունեության կարգավորմանն ուղղված միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ձեռնարկության վերագործարկում, արտադրության ընդլայնում, արտադրատեսակների արտադրության կազմակերպում 700 աշխատատեղի ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2001թ. հունվար | |
| 28. «Պրոմեթեյ-Քիմպրոմ» ՓԲԸ-ի վերագործարկման ծրագրի իրականացում (ըստ պայմանագրով նախատեսված ժամանակացույցի) | Ձեռնարկության վերագործարկում արտադրության ընդլայնում, աշխատատեղերի ստեղծում 2500 աշխատատեղի ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2003թ. առաջին եռամսյակ | |
| 29. Մեքենաշինության, էլեկտրատեխնիկական համալիրի և սարքաշինական արդյունաբերության ոլորտի ընկերություններում ներդրումային ծրագրերի իրականացում՝ մասնավորեցման ճանապարհով | Ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացում, նոր աշխատատեղերի ստեղծում, լրացուցիչ 30 մլն ԱՄՆ-ի դոլարի պատվերների տեղադրում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2001թ. երրորդ եռամսյակ | |
| 30. Ներդրումային քաղաքականության հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ներդրումային քաղաքականության ձևավորում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 31. «Ներդրումների մասին» ՀՀ օրենքի լրամշակված նախագծի քննարկում ՀՀ կառավարությունում | Ներդրումային դաշտի կանոնակարգում և կատարելագործում, ներդրումների աճի համար նախապայմանների ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 32. «Առևտրաարդյունաբերական պալատների մասին» ՀՀ օրենքի լրամշակված նախագծի քննարկում ՀՀ կառավարությունում | Արտահանման խթանում, ձեռնարկատիրության աջակցում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. օգոստոս | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 33. «Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանը խանգարող վարչարարական խոչընդոտների համալիր հետազոտություն» ծրագրի հաշվետվության և առաջարկությունների փաթեթը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բյուրոկրատական վարչարարությանը և կաշառակերությանը նպաստող գործոնների հետազոտում, վերլուծություն և դրանց վերացմանն ուղղված միջոցառումների իրականացում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. օգոստոս | Նոու-Հաու հիմնադրամ, Նիդերլանդների Թագավորության կառավարություն և «Օտարերկրյա ներդրումների խորհրդատվական ծառայություն» |
| 34. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հայեցակարգի ու «Փոքր և միջին ձեռնարկատիրությանն պետական օժանդակության մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակված տարբերակների քննարկում ՀՀ կառավարությունում | Տնտեսական ակտիվության աճի ապահովում, փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի կանոնակարգում, զարգացման համար նախապայմանների ստեղծում, փոքր և միջին ձեռնարկությունների ու պետական մարմինների միջև հարաբերությունների պարզեցում և կանոնակարգում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 35. Արտահանման մարքեթինգային համակարգի ստեղծման աշխատանքների իրականացում | Հայաստանի արտադրողի տեղեկատվական ինտեգրացում համաշխարհային տնտեսության մեջ | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ | 2003թ. առաջին կիսամյակ | |
| 36. Ինտերնետային ցանցում Հայաստանի վերաբերյալ ամբողջական և մշտապես թարմացվող տեղեկությունների ապահովում և այդ նպատակով Gateway to Armenia ծրագրի կենսագործում | Ներդրումների ներգրավում, արտահանման շուկաների ուսումնասիրություն | ՀՀ արտադրական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ | 2000թ. չորրորդ եռամսյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 37. «Զարգացման հայկական գործակալությունում» ՓԲԸ-ում խոշոր օտարերկրյա ներդրողների հետ աշխատանքի կենտրոնացման ապահովում | Օտարերկրյա ներդրողների համար տեղեկատվական, խորհրդատվական և այլ ծառայությունների տրամադրում, կազմակերպչական աջակցության ապահովում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 38. Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման պետական ծրագրի քննարկում կառավարությունում | Զբոսաշրջության զարգացման քաղաքականության ձևավորում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 39. Արտահանման խրախուսման միջոցառումների ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Արտահանման խրախուսում, այդ ուղղությամբ կատարվող աշխատանքների համակարգում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 40. ԱՀԿ-ին անդամակցության հետ կապված միջոցառումների իրականացում | ԱՀԿ-ին անդամակցություն | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 41. ԱՀԿ-ին կից Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչության ստեղծում | ԱՀԿ-ին կից Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչության ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն | ԱՀԿ-ին անդամակցումից հետո մեկ ամսվա ընթացքում | |
| 42. «CERN-SESAME» ծրագրի շրջանակներում աշխատանքների կազմակերպում | Արագացուցչային ֆիզիկայի զարգացում և ֆիզիկայի ինստիտուտի բազայի վրա տարածաշրջանային կենտրոնի հիմնադրման նախագծի ստեղծում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |
| 43. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման ծրագրի մշակում | Ինֆորմացիոն տեխնոլոգիաների հիման վրա ստեղծվող արդյունաբերության զարգացում (տեխնոպարկերի ստեղծում) | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | Համաշխարհային բանկ |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 44. Բիզնես - ինկուբատորների հիմնադրում | Արդյունաբերության մեջ գիտատար ուղղությունների ներդրմանն օժանդակում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն (ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ) | 2000թ. չորրորդ եռամսյակ | Համաշխարհային բանկ |
| 45. Ընդերքի օգտագործման ռազմավարության ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ընդերքի օգտագործման կանոնակարգում | ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 46. Ընդերքի օգտագործման նպատակով օրենսդրական դաշտի զարգացում, համապատասխան իրավական ակտերի (մասնավորապես, «Կոնցեսիաների մասին» ՀՀ օրենքի նախագծի) քննարկում ՀՀ կառավարությունում | Ընդերքի օգտագործման կանոնակարգում | ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 47. Ֆիրմային անվանումների գրանցման հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ֆիրմային անվանումների հետ կապված իրավական դաշտի կատարելագործում | ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչություն | 2000թ. օգոստոս | |

III. Հարկաբյուջետային համակարգ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 48. Պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցների արդյունավետ օգտագործման միջնաժամկետ ռազմավարական ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցների նպատակային օգտագործում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 49. Խնայբանկի վերակառուցման և մասնավորեցման ծրագրի ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բանկային համակարգում պետական մասնակցության նվազագույն մակարդակի ապահովում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 50. Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին անցնելու համար իրավական դաշտի ձևավորման ապահովում | Միջազգային շուկային ինտեգրացում, օտարերկրյա ներդրումների ներգրավում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 51. Վարկային և դրամաշնորհային միջոցների օգտագործման վերաբերյալ տվյալների միասնական բազայի, պարբերական մոնիտորինգի ապահովման և կառավարման ու վերահսկողության կատարելագործման համար անհրաժեշտ աշխատանքների վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը | Վարկային, դրամաշնորհային և մարդասիրական օգնության միջոցների հաշվին իրականացվող համապետական նշանակություն ունեցող ծրագրերի արդյունավետ ու նպատակային իրագործման ապահովում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ կառավարության աշխատակազմ | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 52. «Գնումների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով անհրաժեշտ ակտերի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պետության և համայնքների կարիքների համար գնումների կատարման գործընթացի արդյունավետ կազմակերպում, հրապարակայնություն և թափանցիկություն Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գնումների ընթացակարգերի կազմակերպման միասնական կանոնների կիրառում Համապատասխան կառույցների ստեղծում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 53. «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բյուջետային համակարգի կառավարման մեխանիզմների հստակեցում, բյուջեների կատարման միասնական համակարգի ձևավորում, նախատեսելով, որ բյուջետային եկամուտների հավաքագրումը, ծախսերի կատարումն և բյուջեի դեֆիցիտի կառավարումը իրականացվեն մեկ մարմնի կողմից | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 54. «Չեկերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Չեկերով գործառնությունների կանոնակարգում, այդ թվում՝<br>ա) չեկերը օգտագործելու կարգը և պայմանները.<br>բ) չեկերով իրականացվող գործարքները,<br>գ) այդ գործարքների մասնակիցների իրավունքները, պարտավորությունները<br>դ) պատասխանատվությունը օրենքով նախատեսված պարտավորությունները կատարելու կամ ոչ պատշաճ կատա-րելու համար.<br>ե) չեկի ձևը, դրա լրացման կարգը<br>զ) այլ դրույթներ, որոնք կարգավորված չեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով | ՀՀ ֆինանսների և էկո-նոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ) | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 55. ՀՀ կառավարության կողմից իրականաց-վող ծրագրերի շրջանակներում օտարեր-կրյա պետությունների և միջազգային վար-կատու կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկային և դրամաշնորհա-յին միջոցների շրջանառման կարգի նախա-գիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պետության ֆինանսական միջոցների հա-մախմբում՝ միասնական դրամարկղի սկզբունքով դրանց շրջանառում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 56. «Հանրային հատվածի հաշվապահա-կան հաշվառման համակարգի վերափո-խումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի կատարելագոր-ծում (ստանդարտների մշակում) այն հա-մապատասխանեցնելով ընդունված միջազգային չափանիշներին Հանրային և ձեռնարկատիրական հատ-վածների հաշվապահական հաշվառման համակարգերի ներդաշնակության ապա-հովում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. օգոստոս | Քննարկման փուլում է այլ աղբյուրներից ֆինանսավորման հարցը |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 57. Բյուջետային հատվածի ենթակառուցվածքային վերափոխումների վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություններ ներկայացնելը | Պետության վարքագծի որոշակիացում` որպես շուկայի մասնակցի և սոցիալ-տնտեսական քաղաքականություն իրականացնողի | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 58. Բյուջետային հիմնարկների թվաքանակի կրճատման վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը | Բյուջետային հիմնարկների վերակազմակերպման կամ լուծարման միջոցով բյուջետային հատվածում ընդգրկված միավորների գործունեության բնույթի և դրանց կազմակերպաիրավական վիճակի համապատասխանեցում այն նկատառումով, որ բյուջետային հիմնարկներ պետք է հանդիսանան նախարարությունները, գերատեսչությունները, մարզպետարանները, ինչպես նաև պաշտպանական և ազգային անվտանգության պահպանության գործառույթներ իրականացնող հիմնարկները | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |
| 59. Բյուջետային հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի ցանկի և դրանք ուղղակի բյուջետային հատկացումներով փոխարինելու ժամանակացույցը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Վերակազմակերպման արդյունքում բյուջետային հատվածում ընդգրկված հիմնարկների ծախսերի ֆինանսավորում միայն համապատասխան բյուջեներով նախատեսված հատկացումների հաշվին բացառելով այլընտրանքային աղբյուրներից բյուջետային հիմնարկների ծախսերի ֆինանսավորման հնարավորությունը | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 60. Պետական պարտավորությունների հաշվառման և արդյունավետ կառավարման համակարգի ձևավորում | Վերակազմակերպման արդյունքում բյուջետային հատվածից դուրս եկած և իրավաբանական անձի կարգավիճակ ստացած կազմակերպություններին, բյուջետային հատկացումների տրամադրման համակարգի փոփոխություն, նախատեսելով բազիսային ֆինանսավորման համակարգից անցնել պայմանագրային հիմունքներով՝ սուբսիդավորման կամ պատվերի տեղադրման եղանակով ֆինանսավորման համակարգին | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 61. Հարկային և մաքսային բարեփոխումների ծրագրի լրամշակում և այն ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հարկային համակարգի պարզեցում և արդյունավետության բարձրացում Հիմնական հարկատեսակների գծով հարկային բեռի թեթևացում՝ հարկման ծանրությունը տեղափոխելով առավել արդյունավետ հարկատեսակներ Արտոնությունների առավելագույն կրճատում, առանձին ոլորտների, գործունեության առանձին տեսակների, առանձին ձեռնարկությունների համար որևէ բնույթի հարկային արտոնությունների բացառում Արտահանման և աշխատատեղերի ավելացման խթանում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |
| 62. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության սահմանած ձևով վերջինիս տվյալ ամսվան հաջորդող ամսվա համար ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքի գծով մուտքերի կանխատեսումների տրամադրում | ՀՀ պետական բյուջեի կատարման ընթացիկ ֆինանսական ծրագրերի իրատեսության ապահովում | ՀՀ պետական եկամուտների նախարարություն | ամենամսյա, մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 63. Հարկային կամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով ժամկետանց պարտավորություններ ունեցող կամ նոր ապառքներ կուտակող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ օրենքով սահմանված անվճարունակության ընթացակարգերի կիրառման հստակ կանոնակարգման վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը | Հարկային կարգապահության բարձրացում<br>Անվճարունակության (սնանկացման) օրենսդրության միարժեք կիրառման ապահովում | ՀՀ պետական եկամուտների նախարարություն<br>ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ | 2000թ. սեպտեմբեր | |
| 64. Խոշոր ապառքատեր հարկ վճարողների ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ պարբերաբար վերահսկողության իրականացում, ապառքների գանձման ուղղությամբ համակարգված քայլերի կատարում և դրանց մասին հաշվետվությունները ՀՀ վարչապետին ներկայացնելը | Ապառքների առաջացման պատճառների վերլուծություն, եկամուտների հավաքագրման գանձման աշխատանքների արդյունավետության բարձրացում | ՀՀ պետական եկամուտերի նախարարություն | յուրաքանչյուր եռամսյակ | |
| 65. Գործարքների պարտադիր փաստաթղթավորման պարտադրմանն ուղղված միջոցառումների իրականացում և դրա մասին հաշվետվությունները ՀՀ վարչապետին ներկայացնելը | Փաստաթղթավորման խնդրի լուծում<br>Ձեռնարկատիրական գործունեության առարկաների շարժի ամբողջ շղթայի «տեսանելության» ապահովում | ՀՀ պետական եկամուտերի նախարարություն | յուրաքանչյուր եռամսյակ | |
| 66. 20 մլն դրամից ավելի հարկային ապառքներ ունեցող հարկատուների ցանկի հրապարակում զանգվածային լրատվության միջոցներով | Հարկային կարգապահության բարձրացում | ՀՀ պետական եկամուտերի նախարարություն | յուրաքանչյուր եռամսյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 67. Ապառքների կուտակման պատճառների ուսումնասիրում, դրանց վերացմանն ուղղված միջոցառումների ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հարկային կարգապահության բարձրացում | ՀՀ պետական եկամուտների նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 68. Մաքսային նոր օրենսգրքից բխող միջոցառումների ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մաքսային նոր օրենսգրքի կիրառման համար անհրաժեշտ նորմատիվային դաշտի ապահովում | ՀՀ պետական եկամուտների նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 69. Մաքսային վարչարարության բարեփոխումների ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Արդիական մաքսային համակարգի ձևավորում<br>Մաքսային ընթացակարգերի պարզեցում<br>Մաքսային ստուգումների հստակ կանոնակարգում<br>Մաքսային արժեքի որոշման` օրենքով սահմանված մեխանիզմների միարժեք կիրառում | ՀՀ պետական եկամուտների նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | Բարեփոխումների ծրագրին նախատեսվում է ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության օժանդակությունը |
| IV. Պետական գույքի կառավարում և մասնավորեցում | | | | |
| 70. Պետական գույքի կառավարման մասնավորեցման մասով հայեցակարգի և դրանից բխող համապատասխան միջոցառումների ժամանակացույցը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պետական գույքի կառավարման սկզբունքների վերանայում և հստակեցում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 71. Պետական գույքի հաշվառման համակարգի ներդրումն ապահովող փաստաթղթերի հաստատում | Պետական սեփականության հաշվառման և վերահսկողության համակարգի ներդրում և վարում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 72. Պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, պետական բաժնեմասի արդյունավետ կառավարման միջոցառումների ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պետական բաժնեմասի օգտագործման արդյունավետության բարձրացում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ՀՀ շահագրգիռ նախարարություններ | 2000թ. հոկտեմբեր | |
| 73. Պետական գույքի տնօրինման ու կառավարման գործում պետության կողմից լիազորված անձանց գործունեության գնահատման չափանիշների մշակում, դրանց ոըակավորման համակարգի ներդրումն ապահովող միջոցառումներ ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պետության՝ որպես սեփականատիրոջ, իրավունքների լիարժեք իրացում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 74. Մասնավորեցվող պետական գույքի գնահատման ձևերի ընտրության կարգի մշակում | Մասնավորեցվող պետական գույքի շուկայական գնի որոշում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 75. Նոր բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերի թողարկմամբ ընկերությունների մասնավորեցման նպատակով համապատասխան կարգերի հաստատում | Մասնավորեցված ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 76. «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների վերաբերյալ առաջարկություն ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մասնավորեցումը չկայացած ընկերությունների ավելի վաղ լուծարման հնարավորություն, մասնավորեցվող ընկերությունների պարտքերի հիմնախնդիրների լուծում Ոչ կենսունակ ընկերությունների վերակազմակերպում, լուծարում, մասնավորեցումից հետո ընկերությունների ֆինանսական վիճակի բարելավում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն | 2000թ. օգոստոս | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 77. «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թթ. ծրագրի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մասնավորեցման գործընթացի շարունակականության ապահովում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 78. Լուծարման գործընթացը կանոնակարգող օրենքի նախագիծ ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ոչ կենսունակ ընկերությունների լուծարման գործընթացի կանոնակարգում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 79. Պետական գույքը մասնավորեցման նախապատրաստելու համար տեղեկություններ ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ներկայացնելը (ընդամենը 125 ընկերություն) | Ընկերությունների մասնավորեցման նախապատրաստում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2000թ. օգոստոս-դեկտեմբեր (ըստ ամիսների՝ համապատասխանաբար 29, 22, 23, 22, 22 և 7 ընկերություն) | |
| 80. Պետական գույքը մասնավորեցման նախապատրաստելու համար տեղեկությունները ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ներկայացնելը (ընդամենը 68 ընկերություն) | Ընկերությունների մասնավորեցման նախապատրաստում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2000թ. օգոստոս-նոյեմբեր (ըստ ամիսների՝ համապատասխանաբար 18, 15, 15, 10 և 10 ընկերություն) | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 81. Պետական գույքը մասնավորեցման նախապատրաստելու համար տեղեկությունները ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ներկայացնելը (ընդամենը 31 ընկերություն) | Ընկերությունների մասնավորեցման նախապատրաստում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն | 2000թ. օգոստոս-հոկտեմբեր (ըստ ամիսների` համապատասխանաբար 10, 8, 8, և 5 ընկերություն) | |
| 82. Պետական գույքը մասնավորեցման նախապատրաստելու համար տեղեկությունները ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ներկայացնելը (ընդամենը 37 ընկերություն) | Ընկերությունների մասնավորեցման նախապատրաստում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. օգոստոս-դեկտեմբեր (ըստ ամիսների` համապատասխանաբար 13, 5, 6, 5, 5 և 3 ընկերություն) | |
| 83. Պետական գույքը մասնավորեցման նախապատրաստելու համար տեղեկությունները ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ներկայացնելը (ընդամենը 13 ընկերություն) | Ընկերությունների մասնավորեցման նախապատրաստում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2000թ. օգոստոս-նոյեմբեր (ըստ ամիսների` համապատասխանաբար 3, 2, 3, 3 և 2 ընկերություն) | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 84. Պետական գույքը մասնավորեցման նախապատրաստելու համար տեղեկությունները ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ներկայացնելը (ընդամենը 14 ընկերություն) | Ընկերությունների մասնավորեցման նախապատրաստում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2000թ. օգոստոս-նոյեմբեր (ըստ ամիսների՝ համապատասխանաբար 6, 2, 2, 2 և 2 ընկերություն) | |
| 85. Պետական գույքը մասնավորեցման նախապատրաստելու համար տեղեկությունները ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ներկայացնելը (ընդամենը 35 ընկերություն) | Ընկերությունների մասնավորեցման նախապատրաստում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2000թ. օգոստոս-հոկտեմբեր (ըստ ամիսների՝ համապատասխանաբար 7, 10, 10, և 8 ընկերություն) | |
| 86. Պետական գույքը մասնավորեցման նախապատրաստելու համար տեղեկությունները ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ներկայացնելը (ընդամենը 7 ընկերություն) | Ընկերությունների մասնավորեցման նախապատրաստում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն | 2000թ. օգոստոս-սեպտեմբեր (ըստ ամիսների՝ համապատասխանաբար 2, 3 և 2 ընկերություն) | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 87. Պետական գույքը մասնավորեցման նախապատրաստելու համար տեղեկությունները ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ներկայացնելը (ընդամենը 31 ընկերություն) | Ընկերությունների մասնավորեցման նախապատրաստում | ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչություն | 2000թ. օգոստոս-հոկտեմբեր (ըստ ամիսների՝ համապատասխանաբար 8, 9, 7 և 7 ընկերություն) | |
| 88. Պետական գույքը մասնավորեցման նախապատրաստելու համար տեղեկությունները ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ներկայացնելը (ընդամենը 4 ընկերություն) | Ընկերությունների մասնավորեցման նախապատրաստում | Վայոց ձորի մարզպետարան | 2000թ. օգոստոս-սեպտեմբեր (ըստ ամիսների՝ համապատասխանաբար 1, 2 և 1 ընկերություն) | |
| 89. Պետական գույքը մասնավորեցման նախապատրաստելու համար տեղեկությունները ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ներկայացնելը (ընդամենը 4 ընկերություն) | Ընկերությունների մասնավորեցման նախապատրաստում | Արմավիրի մարզպետարան | 2000թ. օգոստոս-սեպտեմբեր (ըստ ամիսների՝ համապատասխանաբար 1, 2 և 1 ընկերություն) | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 90. Պետական գույքը մասնավորեցման նախապատրաստելու համար տեղեկությունները ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ներկայացնելը (ընդամենը 58 ընկերություն) | Ընկերությունների մասնավորեցման նախապատրաստում | Երևանի քաղաքապետարան | 2000թ. օգոստոս-նեյեմբեր (ըստ ամիսների՝ համապատասխանաբար 13, 10, 15, 10 և 10 ընկերություն) | |
| 91. Մասնավորեցման ենթակա «փոքր» օբյեկտների հաշվառման, դասակարգման և փաստացի վիճակի ուսումնասիրությունների հետ կապված աշխատանքների իրականացում | «Փոքր» օբյեկտների մասնավորեցման նախապատրաստում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն<br>ՀՀ ճյուղային նախարարություններ<br>ՀՀ մարզպետներ (Երևանի քաղաքապետ) | 2000թ. սեպտեմբերի 1 | |
| 92. Դասակարգումից և փաստացի վիճակի ուսումնասիրությունից հետո ստացված հաշվառման տվյալների ամփոփում և ՀՀ կառավարություն առաջարկություններ ներկայացնելը | «Փոքր» օբյեկտների մասնավորեցման նախապատրաստում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն<br>ՀՀ ճյուղային նախարարություններ<br>ՀՀ մարզպետներ (Երևանի քաղաքապետ) | 2000թ. սեպտեմբերի 10 | |
| 93. Մասնավորեցվող «փոքր» օբյեկտի վաճառքի գնի իջեցման վերաբերյալ առաջարկություններ ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Փոքր» օբյեկտների մասնավորեցման նախապատրաստում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն | 2000թ. սեպտեմբերի 10 | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 94. Մասնավորեցումը երեք անգամ չկայացած «փոքր» օբյեկտների համար՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող «փոքր» օբյեկտների լուծարման մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերը ներկայացնելը, իսկ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցողների համար՝ «փոքր» օբյեկտների գույքի և տարածքի հիման վրա ՓԲԸ-ների ստեղծում՝ հետագայում դրանց լուծարման մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծեր ներկայացնելու նպատակով (ընդամենը 992 օբյեկտի համար) | Մասնավորեցումը երեք անգամ չկայացած «փոքր» օբյեկտների լուծարման՝ օրենքով սահմանված ընթացակարգերի ապահովում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն<br>ՀՀ ճյուղային նախարարություններ<br>ՀՀ մարզպետներ (Երևանի քաղաքապետ) | 2000թ. օգոստոս-դեկտեմբեր (ըստ ամիսների՝ համապատասխանաբար 200, 250, 250, 200 և 92 ընկերություն) | |
| 95. Տարբեր պատճառներով գնահատման չներկայացված 247 «փոքր» օբյեկտի համար ուսումնասիրությունների կատարում և առաջարկություններ ներկայացնելը | «Փոքր» օբյեկտների մասնավորեցման նախապատրաստում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն<br>ՀՀ ճյուղային նախարարություններ<br>ՀՀ մարզպետներ (Երևանի քաղաքապետ) | 2000թ. օգոստոս-դեկտեմբեր (ըստ ամիսների՝ համապատասխանաբար 69, 50, 60, 50 և 18 ընկերություն) | |
| 96. Աշխատավորական կոլեկտիվին առաջարկված և նրանց կողմից հրաժարված աճուրդով վաճառքի ենթակա 168 «փոքր» օբյեկտի համար նախարարություններից համապատասխան գրությունների ստացում և մասնավորեցման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծեր ներկայացնելը | «Փոքր» օբյեկտների մասնավորեցման նախապատրաստում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն<br>ՀՀ ճյուղային նախարարություններ<br>ՀՀ մարզպետներ (Երևանի քաղաքապետ) | 2000թ. սեպտեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| V. Անշարժ գույքի շուկա | | | | |
| 97. «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի նախագծի հավելվածով նախատեսված` հողերի գնահատման կարգի լրամշակում և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնելը | Հողի հարկման բազայի համապատասխանեցում հողի շուկայական արժեքին | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | Հողային օրենսգրքի նախագծի ընդունումից հետո մեկամսյա ժամկետում | |
| 98. Պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարում և անհատույց տրամադրում գյուղատնտեսական գործունեություն ծավալելու և բնակելի շինարարության համար, այդ նպատակով աճուրդների և մրցույթների կազմակերպում և կատարված աշխատանքների մասին ՀՀ վարչապետին հաշվետվություններ ներկայացնելը | Օրենքով սահմանված սոցիալական որոշ խմբերի` հողամասը որպես սեփականություն անհատույց տրամադրում ՀՀ պետական բյուջեի եկամտային մասում նախատեսված մուտքերի ապահովում | Միջգերատեսչական հանձնաժողով (ստեղծվել է ՀՀ վարչապետի 2000թ. մայիսի 23-ի N 128 որոշմամբ) | յուրաքանչյուր եռամսյակ | |
| 99. Անշարժ գույքի շուկայի զարգացման հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Անշարժ գույքի շուկայի զարգացում Խնդիրների և լուծման ուղղությունների հստակեցում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2000թ. հոկտեմբեր | |
| 100. «Գնահատողների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Անշարժ գույքի շուկայում լիցենզավորված տնտեսավարող սուբյեկտների գործունեության կանոնակարգում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2000թ. հոկտեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 101. Անշարժ գույքի շուկայական գնահատման համակարգի մշակման և ներդրման նպատակով անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումների ծրագրի իրականացում | Անշարժ գույքի շուկայական գնահատման համակարգի ներդրման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |
| 102. Հանրապետության որոշ համայնքներում անշարժ գույքի հարկման նպատակով գնահատման փործնական ծրագրի իրականացում | Անշարժ գույքի շուկայական մեխանիզմներով հարկման համակարգի ներդրման հետ կապված խոչընդոտների և դժվարությունների վերհանում և դրանց լուծման մեխանիզմների մշակում | ՀՀ պետական եկամուտների նախարարություն | 2001թ. մայիսից (մեկ տարի) | |
| 103. «Անշարժ գույքի հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Անշարժ գույքի միասնական հարկի սահմանում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002թ. հոկտեմբեր | |
| 104. Անշարժ գույքի շուկայական գնահատման նոր համակարգի ներդրում | Անշարժ գույքի օգտագործման արդյունավետության բարձրացում<br>Անշարժ գույքի պակաս արդյունավետ օգտագործողից առավել արդյունավետ օգտագործողին փոխանցման մեխանիզմների ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002թ. հոկտեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| VI. Գյուղատնտեսություն | | | | |
| 105. «ՀՀ ագրոպարենային համակարգում մասնավորեցումն արագացնելու և մասնավոր հատվածին ցուցաբերվող աջակցության քաղաքականության ծրագրի» ժամանակացույցով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի մասին հաշվետվությունը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման գործընթացի արդյունավետ համակարգում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | Յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա երկրորդ տասնօրյակ | |
| 106. Մասնավորեցման ենթակա ընկերությունների գույքագրում և ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն դրանց տվյալների փաթեթների ներկայացման ժամանակացույցի հաստատում | Ոլորտի ընկերությունների մասնավորեցում և դրանց գործունեության արդյունավետության բարձրացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 107. Համակարգի կազմալուծված ընկերությունների լուծարում | Համակարգի կենսագործունեության բարելավում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 108. Գյուղական համայնքներում գյուղացիական միությունների, միավորումների և այլ կազմակերպական ձևերի ձևավորման համար նպաստավոր պայմանների ստեղծման վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկություններ ներկայացնելը | Արտադրության կազմակերպման, արտադրանքի իրացման, վերամշակման, մատակարարումների և սպասարկումների բարենպաստ պայմանների ստեղծում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ | 2000թ. հոկտեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 109. Լոռու և Շիրակի մարզերի գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային զուտ եկամտի և հողի արժեքի ճշգրտված տվյալները ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կադաստրային զուտ եկամտի և հողի արժեքի ճշգրտում<br>Հողի շուկայի զարգացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 110. Գյուղատնտեսական մեծածախ շուկաների համակարգի ստեղծման ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Գյուղատնտեսական մթերքների իրացման գործընթացի բարելավում, բերքի կորուստների կրճատում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 111. Ներմուծվող պարենային ապրանքները տեղական արտադրության ապրանքներով փոխարինելուն օժանդակելու միջոցառումների ՀՀ կառավարություն ներկայացնելը | Տեղական արտադրության պարենային ապրանքների ծավալների ավելացում, պարենային ինքնաապահովվածության մակարդակի բարձրացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 112. Գյուղացիական տնտեսություններին, սննդի և վերամշակող ձեռնարկություններին արտաքին և ներքին շուկաներում հումքի և պատրաստի արտադրանքի գների, պահանջարկի և առաջարկի վերաբերյալ տեղեկատվական նյութերի պարբերաբար տրամադրման հնարավորության ստեղծման վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը | Արտադրության ծավալների և շուկայի պահանջների առումով արագ կողմնորոշվելու հնարավորությունների զարգացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 113. Գյուղատնտեսության զարգացման աջակցության հիմնադրամի ստեղծման նպատակահարմարության և ֆինանսական աղբյուրների հարցը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը | Գյուղատնտեսությանն ուղղվող միջոցների համակարգում և արդյունավետ օգտագործում, նոր միջոցների ներգրավում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 114. Գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի զարգացման միջոցառումները ՀՀ կառավարության ներկայացնելը | Գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի զարգացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 115. Համայնքների ջրօգտագործողների սպառողական ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման և ոռոգման ջրի վարձավճարների գանձման մեխանիզմների կատարելագործման միջոցառումները ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ջրի օգտագործման արդյունավետության բարձրացում, վարձավճարի գանձումների ժամանակին ապահովում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 116. Ոռոգման համակարգի ֆինանսական առողջացման միջնաժամկետ ծրագրի, 2001-2005 թթ. զարգացման հիմնական ուղղությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ոռոգման համակարգի լիարժեք ֆինանսական առողջացում մինչև 2003 թվականը, ջրանցքների ջրի կորուստների նվազեցում, մատակարարվող ոռոգման ջրի ինքնարժեքի նվազեցում, կոլեկտորա-դրենաժային ցանցերի վերակառուցում, հողերի մելիորատիվ վիճակի բարելավում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 117. Փոքր ՀԷԿ-երին ոռոգման համակարգի կողմից երկրորդային ջրամատակարարման օրինակելի պայմանագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարություն որոշման նախագիծ ներկայացնելը | Փոքր ՀԷԿ-երին անխափան ջրամատակարարման ապահովում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ էներգետիկայի հանձնաժողով | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 118. Չոռոգվող գյուղատնտեսական հողատարածքների լիարժեք ոռոգումն ապահովելու համար անհրաժեշտ միջոցառումների ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բուսաբուծական մթերքների արտադրության և սեփական արտադրությամբ գյուղատնտեսական մթերքներով բնակչության ինքնաապահովվածության բարձրացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ մարզպետարաններ | 2000թ. հոկտեմբեր | |
| 119. Արփա-Սևան թունելի հիմնանորոգման և անխափան շահագործման ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Թունելի անվտանգ շահագործում Սևանա լճի մակարդակի բարձրացում, ոռոգման խնդիրների լուծում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 120. Ջրամբարների վերանորոգման և անխափան շահագործման ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ջրամբարների անվտանգ շահագործում Դրանց արդյունավետ օգտագործում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 121. Որոտանի հիդրոհանգույցի շինարարության շարունակում և ավարտում | Տարեկան 165 մլն խոր. մ ջրի փոխադրում Որոտան-Արփա թունելով և Սևանա լճի մակարդակի բարձրացում, ջրապահովվածություն | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2000-2002թթ. | |
| 122. Արթիկի ջրամբարի շինարարության շարունակում և ավարտում | Տարածաշրջանի ջրապահովվածության մակարդակի բարձրացում, սոցիալական խնդիրների լուծում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2000-2002թթ. | |
| 123. Խաչիկ գյուղի ջրագծի շինարարության շարունակում և ավարտում | Սահմանամերձ գոտու ամրապնդում, ջրապահովվածության վիճակի բարելավում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2000-2002թթ. | |
| 124. Ալդարա-Շվանիձորի ոռոգման համակարգի 1-ին փուլի շինարարության շարունակում և ավարտում | Սահմանամերձ գոտու ամրապնդում, ջրապահովվածության վիճակի բարելավում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2000-2002թթ. | |
| 125. Համաշխարհային բանկի վարկի հաշվին իրականացվող «ՀՀ ոռոգման համակարգերի վերականգնման ծրագրի» 1-ին փուլի ավարտում և նոր՝ ՀՀ ոռոգման համակարգի զարգացման ծրագիրը (2-րդ փուլի) ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ոռոգման համակարգի փլուզման կանխում և անխափան շահագործում, ոռոգման համակարգի զարգացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2000թ. նոյեմբեր | Համաշխարհային բանկ |
| 126. Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի վարկի հաշվին իրականացվող՝ հյուսիս-արևմտյան շրջանների գյուղատնտեսական ծառայությունների զարգացման ծրագրի ավարտում և նոր ծրագիրը (II փուլի) ՀՀ կառավարություն ներկայացնելը | Գյուղատնտեսության սպասարկող ոլորտի գործունեության բարելավում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2000թ. նոյեմբեր | Համաշխարհային բանկ |
| 127. Համաշխարհային բանկի վարկի հաշվին իրականացվող՝ գյուղատնտեսության բարեփոխումների աջակցության ծրագրի շարունակում և ավարտում | Գյուղատնտեսության ոլորտի գիտական, խորհրդատվական համակարգի բարելավում, ագրոբիզնեսին աջակցություն | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2000-2003թթ. | Համաշխարհային բանկ |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| VII. Բնապահպանություն | | | | |
| 128. Ջրային պաշարների կառավարման և օգտագործման հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ջրային ռեսուրսների կառավարման համակարգի բարելավում<br>Ջրային ռեսուրսների օգտագործման բնագավառում բարեփոխումների իրականացում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2001թ. առաջին եռամսյակ | Ջրային ռեսուրսների կառավարման համապարփակ ծրագրի ֆինանսավորման շրջանակներում |
| 129. «Ընդերքի մասին» նոր օրենսգրքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ընդերքի օգտագործման ոլորտում մասնավոր ներդրումների համար նպաստավոր պայմանների ստեղծում<br>Իրավական դաշտի կատարելագործում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2001թ. երրորդ եռամսյակ | |
| 130. ՀՀ հանքահումքային հենքի ռացիոնալ օգտագործման և պահպանության 2000-2010թթ. ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ հանքահումքային հենքի ռացիոնալ օգտագործման և պահպանության 2000-2010թթ. ծրագրի մշակում՝ ոլորտի զարգացման ռազմավարության հիմնահարցերի ու գերակայությունների որոշման (ճշգրտման) նպատակով | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | 2001թ. չորրորդ եռամսյակ | |
| 131. Օգտակար հանածոների պահուստային հանքավայրերի տեղեկատվական նյութերի կազմում | Արտերկրյա ներդրումների ներգրավման համար միջազգային ընդունված նորմերի շրջանակներում նորմալ տնտեսական նշանակության մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոների հանքավայրերի վերաբերյալ տեղեկատվության, գովազդային բուկլետների կազմում և հրատարակում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2001թ. չորրորդ եռամսյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 132. Անտառային նոր օրենսգրքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Օրենսգրքի կատարելագործում՝ առկա ներքին և արտաքին հակասությունների վերացման նպատակով | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2001թ. առաջին եռամսյակ | |
| 133. Բնական կենսապաշարների օգտագործման կարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Վայրի բույսերի և կենդանիների օգտագործման ու լիցենզավորման հետ կապված հարաբերությունների կանոնակարգում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2000թ. երրորդ եռամսյակ | |
| 134. Վայրի բույսերի և կենդանիների արտահանման և ներմուծման կարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Վայրի բույսերի և կենդանիների արտահանման և ներմուծման գործընթացների կանոնակարգում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 135. Անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հողերի հետագա դեգրադացիայի կանխարգելմանը, անապատացման ենթակա տարածքների վերականգնմանը նպատակաուղղված գործողությունների ծրագրի մշակում և այդ ծրագրի իրագործման համար անհրաժեշտ ներդրումների համար նպաստավոր պայմանների ստեղծում<br>ՄԱԿ-ի անապատացման դեմ պայքարի կոնվենցիայից բխող պարտավորությունների կատարում | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ շահագրգիռ նախարարություններ | 2001թ. երկրորդ եռամսյակ | ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի UNEP օժանդակությամբ |
| 136. Հայաստանում կապարացված բենզինի օգտագործումից հրաժարվելու ազգային ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների ծավալների կրճատման նպատակով մթնոլորտում կապարի պարունակության նվազեցում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2001թ. երկրորդ եռամսյակ | Դանիայի բնապահպանական գործակալության օժանդակությամբ |
| 137. «Թափոնների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Թափոնների օգտագործման, վնասազերծման, ոչնչացման, տեղադրման, կուտակման, ինչպես նաև ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրումների կանոնակարգում | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>այլ մարմիններ | 2001թ. չորրորդ եռամսյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 138. «Քիմիական նյութերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Քիմիական նյութերի գործածության (օգտագործում, արտադրություն, տեղափոխում և այլն) կառավարման կանոնակարգում | ՀՀ բնապահպանության նախարարություն այլ մարմիններ | 2002թ. | |
| 139. Բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների նկատմամբ վերահսկողության իրականացման կարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բնօգտագործման և առանձին տեսակների գծով բնապահպանական վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների նկատմամբ վերահսկողության իրականացման կարգի կիրարկման ապահովում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 140. Բնապահպանական օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման կարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «ՀՀ տարածքում գործող կազմակերպություններում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքին համապատասխան բնապահպանական օրենսդրությամբ սահմանված նորմերի և կանոնների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացակարգերի հստակեցում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2001թ. առաջին եռամսյակ | |
| 141. Շրջակա միջավայրին պատճառված վնասի փոխհատուցման հարցերը կանոնակարգող նորմատիվ ակտերի փաթեթը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Շրջակա միջավայրին պատճառված վնասի փոխհատուցման հարցերը կանոնակարգող նորմատիվ ակտերի փաթեթի մշակում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | 2001թ. չորրորդ եռամսյակ | ՀԲ օժանդակությամբ |
| VIII. Էներգետիկա | | | | |
| 142. Սյունիք-Կենտրոն էլեկտրահաղորդման գծի ուժեղացում (Ագարակ-2 ենթակայան) | Իրան-Հայաստան էլեկտրաէներգիայի փոխհոսքերի հուսալիության բարձրացում Էլեկտրաէներգիայի փոխհոսքերի հզորության մեծացում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2001թ. | Սարքավորումները՝ Հայաստան-Իրան էներգիայի առաքումների դիմաց: Շինմոնտաժային աշխատանքները՝ սեփական միջոցներով |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 143. Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցերի վերականգնում | Անհապաղ նորոգման աշխատանքների իրականացում<br>Էլեկտրական էներգիայի կորուստների նվազեցում<br>Էլեկտրաէներգետիկ համակարգի աշխատանքի հուսալիության բարձրացում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2003թ. | Համաշխարհային բանկի և Միջազգային համագործակցության ճապոնական բանկի համատեղ վարկային ծրագիր |
| 144. Էներգետիկայի բնագավառի անհետաձգելի միջոցառումների իրականացում (Քանաքեռի ՀԷԿ-ի վերականգնում) | Քանաքեռի ՀԷԿ-ի երկու ագրեգատների վերակառուցում և արդիականացում<br>Էլեկտրակայանի աշխատանքի արդյունավետության և հուսալիության բարձրացում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2002թ. | Գերմանական վերականգնման բանկի (KfW) վարկ և պետբյուջե |
| 145. Բարձր լարման ենթակայանների վերակառուցում (Կամո և Վանաձոր -2) | Կամո և Վանաձոր-2 220կՎ լարման ենթակայանների վերակառուցում և արդիականացում<br>Համակարգաստեղծ ցանցի աշխատանքի հուսալիության բարձրացում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2003թ. | Գերմանական վերականգնման բանկի (KfW) վարկ |
| 146. Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության աստիճանի բարձրացում | ՀԱԷԿ-ի շահագործման անվտանգության բարձրացում և 2000թ. պլանային նախազգուշական նորոգման անցկացում (ՊՆՆ-2000)<br>Ապահովիչ ամրանների նորացում (փոխարինում)<br>Կարևոր սպառիչների հովացման նոր համակարգերի ներդրում<br>Հակահրդեհային համակարգի սարքավորումների մոնտաժում<br>Յուղային անջատիչների փոխարինում էլեգազայինով<br>Անվտանգության աստիճանի բարձրացման միջնաժամկետ միջոցառումների ծրագրերի իրականացում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 13.07.-05.11.2000թ. (ՊՆՆ-2000)<br>31.12.2000թ.<br>2001-2002թ. | սեփական միջոցներ<br>սեփական միջոցներ և ԱՄՆ-ի էներգետիկայի դեպարտամենտի հատկացումներ<br>Եվրահամայնքի կողմից հատկացվող միջոցներ |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 147. Բնակչության և հանրային սպառողների գազամատակարարման վերականգնում | Բնակելի և հանրային սպառողների էներգաօգտագործման արդյունավետության բարձրացում<br>Մինչև տարվա վերջը 20 հազ. բաժանորդի գազամատակարարման վերականգնում<br>Գազի բնագավառի ընկերությունների աշխատանքի արդյունավետության բարձրացում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | սեփական միջոցներ, վարկեր և այլ աղբյուրներ |
| 148. Իրան-Հայաստան գազամուղի կառուցում | Գազամատակարարման հուսալիության բարձրացում, գազի բնագավառում մրցակցային միջավայրի ձևավորում<br>Հեռանկարում՝ Հայաստանի գազամատակարարման համակարգին գազի տարանցման հնարավորությունների ընձեռում | ՀՀ էներգետիկայի նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | շինարարության սկիզբը՝ 2001թ. | վարկային, մասնավոր և այլ միջոցներ |
| 149. Ջեռուցման համակարգի ֆինանսական առողջացման ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մինչև 2003 թվականը ջեռուցման համակարգի վերջնական ֆինանսական առողջացում | ՀՀ էներգետիկայի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 150. Կենտրոնացված ջերմամատակարարման հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կենտրոնացված ջերմամատակարարման վերականգնում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 151. Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարության ավարտի հարցի լուծում` հետագա մասնավորեցման նկատառումով | ՋԷԿ-երի հնացած սարքավորումների սերնդափոխության ապահովում` բարձր արդյունավետության էներգաբլոկի կառուցումով և շահագործումով<br>Մասնավորեցման գործընթացի կազմակերպում | ՀՀ էներգետիկայի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն | 2001թ. | ՎԶԵԲ-ի վարկային ծրագիր |
| 152. Երևանի ՋԷԿ-ում շոգեգազային էներգաբլոկի կառուցում | ՋԷԿ-ի հնացած սարքավորումների սերնդափոխության իրականացում<br>Բարձր էներգաարդյունավետությամբ էլեկտրական և ջերմային էներգիա արտադրող էներգաբլոկի կառուցում | ՀՀ էներգետիկայի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | աշխատանքների սկիզբը` 2001թ.<br>կառուցման ժամկետը` 18-20 ամիս | վարկեր, ուղղակի ներդրումներ |
| 153. «Հայաստան-Վրաստանի սահմանակետ» բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի կառուցում | Սահմանամերձ գոտու էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2000թ.<br>չորրորդ եռամսյակ | սեփական միջոցներ |
| 154. Մասնավոր ներդրումների ներգրավմամբ փոքր ՀԷԿ-երի կառուցման աշխատանքների ընթացքի վերաբերյալ ՀՀ վարչապետին հաշվետվություններ ներկայացնելը | Էներգետիկ անկախության աստիճանի բարձրացում<br>Անկախ արտադրողի ինստիտուտի զարգացման խրախուսում<br>Էլեկտրաէներգիայի շուկայի զարգացում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | յուրաքանչյուր կիսամյակ | մասնավոր ներդրումներ, առևտրային վարկեր |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 155. Էներգետիկայի այլընտրանքային աղբյուրների հետազոտում և օգտագործում ու կատարված աշխատանքների արդյունքները ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հողմաէներգետիկայի պաշարագիտական հետազոտություններ հյուսիսային, հյուսիս-արևելյան և կենտրոնական շրջաններում<br>Նույն բնույթի հետազոտություններ արևելյան շրջաններում (Զոդ)<br>Արևային ջրատաքացուցիչների շուկայի հետազոտում և ներդրում Հայաստանում: 15 ցուցադրական տեղակայանքների տեղադրում և շահագործում<br>Ազատ-1 հորատանցքի երկրաջերմային պոտենցիալի գնահատում՝ ջերմամատակարարման առումով | ՀՀ էներգետիկայի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | Նիդերլանդների Թագավորության կառավարության դրամաշնորհ<br>«Քեֆեսչյան» հիմնադրամ (ԱՄՆ) և «SolarEn International» ՍՊՀ<br>Նիդերլանդների Թագավորության կառավարության դրամաշնորհ<br>Ճապոնիայի կառավարության դրամաշնորհ |
| 156. Մեղրու ՀԷԿ-ի նախագծման ավարտ և ռազմավարական ներդրողի ներգրավում | Սեփական ռեսուրսների օգտագործմամբ էներգետիկ անվտանգության բարձրացում<br>Տարեկան շուրջ 460 մլն կՎտ. ժ էլեկտրաէներգիայի արտադրություն<br>Օրգանական վառելիքի ներկրվող ծավալների կրճատում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | սկիզբը՝ 2001թ.<br>կառուցման ժամկետը՝ 5,5 տարի | առևտրային վարկեր, ուղղակի ներդրումներ |
| 157. Բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման գործընթացի ավարտի ապահովում | Բաշխիչ ցանցերի աշխատանքի արդյունավետության բարձրացում<br>Ցանցերի վերականգնման նպատակով մասնավոր ներդրումների ներգրավում<br>Կարգավարման և հաշվառքային համակարգերի կատարելագործում<br>Համակարգի գործունեության ֆինանսատնտեսական առողջացում | Մասնավորեցման մրցութային հանձնաժողով<br>ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | ՀԲ կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օժանդակության 1-ին վարկ |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 158. Բաշխիչ ցանցերի մասնավորեցմամբ պայմանավորված` դրանց դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերակառուցման միջոցառումների ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բաշխիչ ցանցերի պարտքերի վերակառուցում | ՀՀ էներգետիկայի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 159. «Էներգախնայողության մասին» ՀՀ օրենքի լրամշակված նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Էներգախնայողության պետական քաղաքականության իրականացման իրավական հիմքերի սահմանում<br>Էներգախնայողության ասպարեզում տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունների կարգավորում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 160. «Հիդրոէներգետիկայի առաջընթաց զարգացման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հիդրոէներգետիկայի առաջընթաց զարգացումը խրախուսող մեխանիզմների ստեղծում<br>Ներդրումների առումով բնագավառի գրավչության բարձրացում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 161. «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը | էներգետիկ շուկայի հետագա ազատականացում<br>Շուկայական հարաբերությունների ամրապնդում<br>Ներդրումների ներգրավման խրախուսում | ՀՀ էներգետիկայի նախարարություն (ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի հետ համատեղ) | 2000թ. սեպտեմբեր | |
| 162. Էներգահամակարգի ֆինանսական առողջացման ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մինչև 2003 թվականը էներգահամակարգի վերջնական ֆինանսական առողջացում | ՀՀ էներգետիկայի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. օգոստոս | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| IX. Տրանսպորտ և կապ | | | | |
| 163. Բոլոր ավտոտրանսպորտային ընկերությունների (բացառությամբ զորային տիպի ավտոշարասյուների) մասնավորեցման գործընթացի ավարտի ապահովում և արդյունքները ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ավտոտրանսպորտային բնագավառում ամբողջությամբ անցում շուկայական հարաբերությունների | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. դեկտեմբեր | |
| 164. «Երկաթուղու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Համակարգի օրենսդրական կարգավորում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |
| 165. «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը | Համակարգի օրենսդրական կարգավորում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |
| 166. Օդային օրենսգրքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Համակարգի օրենսդրական կարգավորում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |
| 167. Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայան» ՊՓԲԸ-ի բեռնային համալիրի կարգավիճակի և բեռնաշրջանառության ավելացման միջոցառումները ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բեռնաշրջանառության ավելացում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. դեկտեմբեր | |
| 168. Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայան» ՊՓԲԸ-ի կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը | Օդանավակայանի աշխատանքի արդյունավետության բարձրացում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. օգոստոս | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 169. «Հայկական ավիաուղիներ» ավիաընկերության մրցութային մասնավորեցման ռազմավարությունը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ավիաընկերության արդյունավետ գործունեության ապահովում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |
| 170. Վճարովի ավտոճանապարհներ ունենալու, դրանք շահագործելու և պահպանելու կարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ֆինանսական աղբյուրների ստեղծում ճանապարհների և արհեստական կառույցների շահագործման համար | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |
| 171. Միջազգային ճանապարհային փոխադրումների (TIR) համակարգի ներդրման հետ կապված միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների կազմակերպման, զարգացման և կատարելագործման մասին առաջարկությունը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների համակարգի զարգացում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |
| 172. «ԱրմենՏել» ՀԶ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի գնման պայմանագրով նախատեսված ներդրումային ծրագրի իրականացման ընթացքի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման հսկողություն | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 173. «Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում Հայաստանի ազգային հեռուստատեսության ծրագրի սփռումն ապահովելու միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հեռուստատեսային ցանցի վերազինում և արդիականացում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 174. «Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում Հայաստանի ազգային ռադիոյի ծրագրի սփռումն ապահովելու միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ռադիոյի ցանցի վերազինում և արդիականացում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |
| 175. «Տեղեկատվայնացման, տեղեկատվության և տեղեկատվության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Տեղեկատվական համակարգում օրենսդրական դաշտի ապահովում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 176. Փոստային ծառայությունների և առաքումների ասպարեզում օտարերկրյա փորձի ուսումնասիրմամբ ոչ ավանդական փոստային ծառայությունների ընդլայնման, պայմանագրային ծառայությունների միջոցով փոստի ազգային համակարգի շահութաբեր գործունեության ապահովման վերաբերյալ առաջարկությունը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ոչ ավանդական փոստային ծառայությունների ընդլայնում, պայմանագրային ծառայությունների միջոցով փոստի ազգային համակարգի շահութաբերության բարձրացում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. օգոստոս | «Հայփոստ» ՊՓԲԸ Արժեքը կազմում է շուրջ 180 հազ. ԱՄՆ-ի դոլար |
| 177. Մայրուղիների վերականգնման վարկային ծրագրի իրականացում | Համաշխարհային բանկի վարկի միջոցներով մոտ 630 կմ միջպետական և հանրապետական ավտոմոբիլային ճանապարհների և Պուշկինի լեռնանցքի 1.8 կմ երկարությամբ թունելի վերանորոգման աշխատանքների իրականացում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. դեկտեմբեր | ՀԲ վարկ և ՀՀ կառավարության համաֆինանսավորում |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 178. Տրանսպորտային վարկային ծրագրի իրականացում | 300-350կմ միջպետական և հանրապետական ճանապարհների վերականգնում<br>Մի շարք կարևորագույն, ներկայումս վթարային վիճակում հայտնված կամուրջների վերականգնում<br>Երթևեկության անվտանգության միջոցառումների իրականացում<br>Հայկական երկաթուղու ենթակառուցվածքների (գծային տնտեսություն, կապ, էլեկտրամատակարարում) և շարժակազմի (ուղևորատար, բեռնատար վագոնների և լոկոմոտիվների) վերանորոգում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000-2004 թթ. | ՀԲ-ի վարկ և ՀՀ կառավարության համաֆինանսավորում |
| 179. Եղեգնաձոր-Երևան-Սևան-Դիլիջան-Վանաձոր-Ալավերդի-Այրում 366 կմ ավտոճանապարհի վերանորոգման և Սևանի 2257 մետր թունելի շինարարության ավարտի ծրագրի շուրջ Լինսի հիմնադրամի հետ բանակցությունների ավարտ | 366 կմ մայրուղու վերանորոգման և Սևանի 2257 մետր թունելի շինարարության ավարտ | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. | |
| 180. ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շրջանակներում ՏԱՍԻՍ-ի «Հեռահաղորդակցության ցանց Կովկասյան երկաթգծերի համար» ՍՍ-9901 ծրագրի իրականացում | Հայկական երկաթուղու կապի համակարգի բարելավման նպատակով օպտիկամանրաթելային մալուխի անցկացում Այրում-Երևան շուրջ 300 կմ երկարությամբ երկաթուղագծով | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | ԵՄ-ի դրամաշնորհ (5,6մլն ԱՄՆ-ի դոլար) |

X. Առողջապահություն

| | | | | |
|---|---|---|---|---|
| 181. Բացառապես անվճար բժշկական օգնություն և ծառայություններ իրականացնող հիվանդանոցային հաստատությունների ցանկի, մահճակալների թվի հստակեցում և դրանք ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սոցիալապես անապահով բնակչությանը բացառապես անվճար հիվանդանոցային բուժօգնության ցուցաբերում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2000թ. երրորդ եռամսյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 182. Մարզերում կենտրոնական տարածաշրջանային և մարզկենտրոնների պոլիկլինիկաների հագեցում ժամանակակից ախտորոշիչ սարքավորումներով և սանիտարական մեքենաներով | Մարզային ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգի բուժսպասարկման որակի բարձրացում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2000թ. | ՀԲ-ի վարկային ծրագիր |
| 183. ՀԲ-ի վարկային ծրագրերի շրջանակներում գյուղական 26 բժշկական ամբուլատորիաների վերակառուցում, վերանորոգում և վերազինում | Գյուղական բնակչության առողջության առաջնային պահպանման բարելավում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2000թ. | ՀԲ-ի վարկային ծրագիր |
| 184. Ընտանեկան բժշկության համակարգի ձևավորում | Բժշկական սպասարկման արդյունավետության բարձրացում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2000թ. | ՀԲ-ի վարկային ծրագիր |
| 185. Բնակչությանը մատուցվող բժշկական օգնության փոխհատուցման բազմաձևության ներդրում (պետական պատվեր, համավճար, ապահովագրություն, վճարովի ծառայություններ) | Բնակչությանը մատուցվող բժշկական օգնության փոխհատուցման բազմաձևության ապահովում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե և մասնավոր վճարումներ |
| 186. Բժշկական ապահովագրության ներդրման հայեցակարգի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սոցիալական արդարության սկզբունքների սերմանում և ռեսուրսների նպատակային օգտագործում ու բժշկական ծառայությունների արդյունավետության բարձրացում | ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական առողջապահական գործակալություն | 2000թ. երրորդ եռամսյակ | գտնվում է քննարկումների փուլում |
| 187. Առողջապահական հաստատությունների մասնավորեցման ռազմավարության հայեցակարգի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Արդյունավետ, սոցիալական և շուկայական սկզբունքների համակշռմամբ պայմանավորված առողջապահական ծառայություններ իրականացնող հաստատությունների կենսունակ ցանցի ստեղծում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2000թ. երրորդ եռամսյակ | Հայեցակարգային հիմնադրույթների ընդունումով կահմանվեն ֆինանսական ներդրումները |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 188. Առողջապահության բնագավառում կուտակված բյուջետային պարտքերի մարման ժամանակացույցի հաստատում | Առողջապահության բնագավառում կուտակված պարտքերի մարում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն | 2000թ. դեկտեմբեր | |
| XI. Սոցիալական ապահովություն | | | | |
| 189. «Քաղաքացիների սոցիալական ապահովության անհատական ծածկագրային համակարգի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Համակարգի արդյունավետ կառավարում, ապահովության սկզբունքների տեղայնացում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 190. «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և ««Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ծանր, վնասակար պայմաններում և երկարամյա ծառայության համար փոխհատուցումների վճարման հարցերի կանոնակարգում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 191. Պետական կենսաթոշակային ապահովության և պարտադիր կենսաթոշակային ապահովագրության օրենքների հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պարտադիր կենսաթոշակային ապահովագրության և պետական կենսաթոշակային ապահովության համակարգերի, այդ համակարգերում քաղաքացիների ընդգրկման սկզբունքների սահմանազատում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 192. «Հաշմանդամների վերականգնման մասին» ՀՀ օրենքի հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հաշմանդամների բժշկական, սոցիալական, մասնագիտական և հոգեբանական վերականգնման գործընթացի կանոնակարգում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 193. «Հաշմանդամների վերականգնման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հաշմանդամների բժշկական, սոցիալական, մասնագիտական և հոգեբանական վերականգնման գործընթացի կանոնակարգում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 194. Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման բարելավման և այդ նպատակով նոր ենթակառուցվածքի ստեղծման ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման բարելավում` նոր արդյունավետ ձևերի ներդրմամբ | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. երրորդ եռամսյակ | |
| 195. «Սոցիալական երաշխիք» պետական ծառայության մասին ՀՀ կառավարություն ներկայացնելը | Միայնակ ծերերին բնակարանը պետության հանձնելու դիմաց լրացուցիչ սոցիալական օգնության և սպասարկման տրամադրում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |
| 196. Բժշկասոցիալական փորձաքննության համակարգի կատարելագործման վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Փորձաքննության որակի բարելավում, օբյեկտիվության և թափանցիկության ապահովում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 197. «Սոցիալական աջակցության տրամադրման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սոցիալական աջակցության ոլորտում իրավահարաբերությունների կանոնակարգում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |
| 198. ՀՀ օրենսդրությամբ սահմանված սոցիալական արտոնությունների ցանկի և դրանց ուղղակի դրամական վճարումներով փոխարինման ժամանակացույցը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սոցիալական օգնության ծրագրերի արդյունավետության (նպատակայնության) բարձրացում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |
| 199. Աղքատության կրճատման ռազմավարության միջանկյալ ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ԱԿՌԾ ամփոփ փաստաթղթի պատրաստման համար կառուցվածքային մեխանիզմների մշակում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ այլ նախարարություններ | 2000թ. օգոստոս | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 200. Աղքատության կրճատման ռազմավարության ամփոփ ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Աղքատության կրճատում, տնտեսական աճի ապահովում, աշխատատեղերի ստեղծում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ այլ նախարարություններ | 2001թ. հոկտեմբեր | |
| 201. «Աղքատության ընտանեկան նպաստի նշանակման և վճարման կարգի մասին» որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական աջակցություն | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. դեկտեմբեր | |
| 202. «Աղքատության ընտանեկան նպաստի (սահմանային միավորի, բազային նպաստի, ընտանիքի յուրաքանչյուր անդամին տրվող հավելման չափի) մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական աջակցություն | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. դեկտեմբեր | |
| 203. «Սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների համակարգի կատարելագործման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սոցիալական աջակցության ոլորտի կառավարման համակարգի կատարելագործում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |
| 204. «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Արդյունավետ զբաղվածության, գործատուների հետ համագործակցության, ինչպես նաև աշխատաշուկայում գործազուրկների մրցունակության մեծացման, հաշմանդամների աշխատանքի վերականգնման, մասնագիտական ուսուցման և աշխատանքի տեղավորման, նոր աշխատատեղերի ստեղծման և այլ միջոցառումների իրականացման ապահովում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 205. «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բնակչության զբաղվածության մասին օրենսդրության կատարելագործում, աշխատանք փնտրող քաղաքացիներին գործազուրկի կարգավիճակ տալու, գործազրկության նպաստ նշանակելու, վաղաժամկետ կենսաթոշակի առաջարկ տալու և գործազուրկների մասնագիտական ուսուցման կազմակերպման աշխատանքների կանոնակարգում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |
| 206. «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Աշխատանքի պետական տեսչության խնդիրների գործառույթների, կառուցվածքի, իրավունքների, պարտականությունների ու պատասխանատվության և տեսչական ստուգումների ընթացակարգերի ու աշխատանքի կազմակերպման սկզբունքների սահմանում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 207. «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Աշխատանքային օրենսդրության միասնական քաղաքականության ապահովմամբ, աշխատանքային օրենսգրքի և աշխատանքի պաշտպանության կանոնների անվերապահ և ճշգրիտ կատարմամբ աշխատողների կյանքի և առողջության պահպանման, արտադրությունում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների կանխարգելման ապահովում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |
| 208. Ընտանիքի նկատմամբ իրականացվող պետական քաղաքականության հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ընտանեկան հարաբերությունների ձևախեղմանը հանգեցնող բացասական միտումների հաղթահարում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. առաջին եռամսյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 209. Տուն-ինտերնատներում (մանկատներում և ծերանոցներում) խնամվողներին սպասարկող անձնակազմի սահմանային թվաքանակների որոշման նորմատիվ ակտերի հաստատում | Խնամվողների սպասարկումը բարելավելու և նրանց հանգստի, ուսուցման ու ժամանցի հստակ կազմակերպում և սպասարկող անձնակազմի պահպանման ծախսերի նորմավորում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2001թ. | |
| 210. «Հայաստանի Հանրապետությունում կնոջ նկատմամբ ամեն տեսակի բռնության վերացման մասին» հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ընտանիքում և հասարակությունում կնոջ իրավունքների պաշտպանություն և նրանց նկատմամբ բռնարարքների վերացում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |
| 211. «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ապահովել աշխատանք փնտրող չզբաղված քաղաքացիների, այդ թվում՝ գործազուրկների ժամանակավոր զբաղվածություն | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2001թ. հունվար | |
| 212. Պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների համար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների վճարումների սահմանված չափերի մասին պետական կառավարման համապատասխան մարմիններին տեղեկությունների տրամադրում, փոխհամաձայնեցված չափերով ըստ ապահովադիրների վճարումների ժամանակացույցի կազմում, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և համապատասխան մարմինների կողմից դրանց համատեղ հաստատում, օրական վճարումների սահմանված և փաստացի չափերի մասին տեղեկությունների փոխանակման կարգի հաստատում | Պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների վճարումների չափերի կանխատեսում | ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ<br>ՀՀ նախարարություններ<br>ՀՀ գերատեսչություններ<br>ՀՀ մարզպետարաններ (Երևանի քաղաքապետարան) | յուրաքանչյուր եռամսյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| XII. Բնակչության միգրացիայի և փախստականների հիմնահարցեր. | | | | |
| 213. Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Բնակչության միգրացիայի բնագավառում գերակա խնդիրների, նրանց լուծման հիմնական ուղղությունների և մեխանիզմների, դրանց իրականացման անհրաժեշտ իրավաօրենսդրական փաստաթղթերի ցանկի սահմանում<br>Միգրացիոն բնույթի գործառույթների ռացիոնալ և արդյունավետ վարչական կառավարման համակարգով իրականացում, պետական մարմինների իրավասության շրջանակների և դրանց համագործակցության եղանակների հստակեցում | ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | 2000թ. օգոստոս | |
| 214. Ազգամիջյան բախումներից տուժած անձանց բնակարանային ապահովության ծրագրի քննարկում ՀՀ կառավարությունում | Փախստականների բնակարանային ապահովության իրավիճակի ճշտում, նրանց բնակարանային ապահովության սկզբունքների, ուղղությունների և դրանց իրականացման մեխանիզմների սահմանում<br>Փախստականների բնակարանային ապահովման հիմնահարցի լուծում | ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | 2000թ. օգոստոս | |
| 215. «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Արտագնա աշխատանքների հետ կապված հարաբերությունների կարգավորում, այդ աշխատանքների կազմակերպման հիմունքների, այն իրականացնող կազմակերպությունների ու պետական կառույցների իրավասությունների սահմանում, արտագնա աշխատանքի մեկնողների իրավունքների և օրինական շահերի պետական պաշտպանության ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | 2000թ. օգոստոս | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 216. Փախստականների կողմից ՀՀ քաղաքացիություն ընդունելու գործընթացի ակտիվացում և շարունակում | Փախստականներին հասարակության մեջ ինտեգրացման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | շարունա-կաբար | |
| XIII. Կրթություն և գիտություն | | | | |
| 217. 2001/2002 ուստարվանից 11-ամյա միջ-նակարգ (լրիվ) ընդհանուր կրթության անց-ման նպատակահարմարության հարցը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայաց-նելը | Հանրակրթական համակարգի վերակազ-մավորում հիմնարար գիտելիքների ապա-հովման և միջազգային նորմերին համապ-ատասխանեցման նպատակով | ՀՀ կրթության և գիտու-թյան նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |
| 218. 6-օրյա ուսումնական շաբաթի անցման նպատակահարմարության հարցը ՀՀ կա-ռավարության քննարկմանը ներկայացնելը | Աշակերտների օրական ուսումնական ծանրաբեռնվածության թեթևացում, ուսուցման արդյունավետության բարձրացում | ՀՀ կրթության և գիտու-թյան նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 219. Կրթության զարգացման պետական ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայաց-նելը | Ուսուցիչների աշխատավարձի զգալի բարձրացում, կրթական բոլոր հաստատու-թյունների համար հավասար պայմանների ստեղծում ու կրթօջախների բազմազանու-թյան ապահովում, կադրերի վերապատ-րաստման և վերապրոֆիլավորման ինստիտուտների ձևավորում՝ հիմնված միջնաժամկետ և երկարաժամկետ ծրա-գրերի վրա | ՀՀ կրթության և գիտու-թյան նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 220. Ուսումնական պլանի և առարկայա-կան ծրագրերի համապատասխանեցում պետական չափորոշիչներին | Հանրակրթության բովանդակության հա-մապատասխանեցում պետական կրթական քաղաքականությանը Վերակազմավորվող համակարգի համար գործող ծրագրային նյութի վերաբաշխում ըստ դասարանների | ՀՀ կրթության և գիտու-թյան նախարարություն | 2000թ. դեկտեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 221. Նոր ծրագրերին համապատասխան դասագրքերի ստեղծում | Վերակազմավորվող համակարգի ապահովում համապատասխան դասագրքերով | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2001թ. հունիս | ՀՀ պետական բյուջե «Հայաստանի դասագրքեր» հիմնադրամ |
| 222. Մանկավարժական կադրերի վերապատրաստման հանրապետական ցանցի ստեղծում | Ուսուցիչների վերապատրաստում նոր ծրագրերին համապատասխան Ուսուցիչների պատրաստության մակարդակի բարձրացում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2001թ. հունիս | ՀՀ պետական բյուջե Հայ Առաքելական Եկեղեցի |
| 223. Դպրոցների ռացիոնալացման ծրագրի իրականացում 3 կրթական գոտիներում (Վայոց ձորի, Կոտայքի մարզեր և Երևանի Էրեբունու համայնք) | Հանրակրթությանը հատկացվող բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացում Ուսուցիչների կենսամակարդակի բարձրացում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մարզպետարաններ | 2001թ. օգոստոս | |
| 224. Բարձրագույն և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների ինքնավարության ընդլայնումն ապահովող իրավական դաշտի ստեղծում | Պետական ուսումնական հաստատությունների ինքնավարության ընդլայնում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2001-2002 թթ. | |
| 225. Պետական պատվերի ձևավորման և տեղաբաշխման կարգի մշակում | Անձի կրթական պահանջմունքների և հասարակական պատվերի բավարարում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2001թ. | ՀՀ պետական բյուջե ուսման վարձավճար |
| 226. «Պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների զարգացման համար հավասար պայմանների ստեղծման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի կատարում Այլընտրանքային կրթական համակարգի կարգավորում և կայունացում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն լիցենզավորման և հավատարմագրման ծառայություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 227. Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական չափորոշիչների մշակում | «Կրթության մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածի կատարում, կրթության բովանդակության և համակարգի կառավարման հիմքերի ստեղծում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն լիցենզավորման և հավատարմագրման ծառայություն | 2000թ. երրորդ եռամսյակ | |
| 228. Կրթության վերջնական արդյունքի նկատմամբ պետական վերահսկողության ապահովում | «Կրթության մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի կատարում, ուսումնական հաստատությունների հավատարմագրում Շրջանավարտների պատրաստվածության մակարդակի բարձրացում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն լիցենզավորման և հավատարմագրման ծառայություն | 2001թ. | |
| 229. Համահայկական համալսարանի ստեղծման հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայ և օտարերկրյա լավագույն մասնագետների կարողությունների օգտագործում՝ կրթական բնագավառում բեկում մտցնելու համար, ազգային և համամարդկային խնդիրների շուրջ հայ մտավորականների համախմբման միջավայրի ձևավորում | Միջգերատեսչական հանձնաժողով | 2000թ. դեկտեմբեր | |
| 230. Գիտության ոլորտի բարելավման հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Գիտության ոլորտի զարգացումը խոչընդոտող հիմնախնդիրների լուծման ուղիների նախանշում, մասնավորապես գիտության կառավարման և ֆինանսավորման վերափոխման և կառուցվածքային օպտիմալացում, գիտական ներուժի զարգացման ռազմավարության շրջանակներում պետական հովանավորության արդյունավետ համակարգի ձևավորմանը զուգահեռ գիտության ֆինանսավորման մասնավոր աղբյուրների խթանում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա շահագրգիռ գիտական կոլեկտիվներ | 2000թ. դեկտեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 231. Գիտական հետազոտությունների, բարձր տեխնոլոգիական մշակումների գերակայությունների որոշում, գիտության թեմատիկ և հենքային ֆինանսավորման սկզբունքների մշակում | Գիտության կառավարման և ֆինանսավորման համակարգի բարելավում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | 2000թ. օգոստոս-հոկտեմբեր | ՀՀ պետական բյուջե ֆինանսավորման մասնավոր աղբյուրներ |
| 232. Հիմնարար և սոցիալ-քաղաքական գիտությունների ասպարեզում կատարվող հետազոտությունների կողմնորոշում դեպի հասարակության կարիքներից բխող կիրառական խնդիրները | Տնտեսության զարգացման խթանում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | 2000թ. դեկտեմբեր | ՀՀ պետական բյուջե ֆինանսավորման մասնավոր աղբյուրներ |
| 233. Բուհական հետազոտական և կրթական ծրագրերի ինտեգրացում, մագիստրոսական և ասպիրանտական ատենախոսական թեմատիկայի նպատակաուղղում դեպի տեխնոլոգիական նորաստեղծության՝ Հայաստանի համար արդիական խնդիրները | Գիտամանկավարժական կադրերի վերարտադրության ապահովում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2000-2001 թթ. ընթացքում | ՀՀ պետական բյուջե ֆինանսավորման մասնավոր աղբյուրներ |
| 234. Կրթության ոլորտի տեղեկատվական ապահովում | Միջբուհական համակարգչային ցանցի զարգացում<br>Ինտերնետային կապով համակարգչային սրահների ստեղծում՝ բոլոր պետական բուհերում, շուրջ 300 դպրոցներում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2000-2002 թթ. | ՀՀ պետական բյուջե միջազգային գիտակրթական հիմնադրամներ |
| 235. Հայաստանում սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում | Հայաստանում սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացի կազմակերպում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 236. Սփյուռքահայ կրթօջախների քարտեզագրում և տեղեկատվական բազայի ստեղծում | Միասնական կրթական տեղեկատվական դաշտի ձևավորում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| XIV. Մշակույթ, երիտասարդության հարցեր և սպորտ | | | | |
| 237. «Մշակույթի պահպանման և զարգացման հայեցակարգային հիմնադրույթների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մշակութային արժեքների պահպանման, տարածման, զարգացման և համաշխարհային հանրությանը պատշաճ ներկայացնելու համար պայմանների ստեղծում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 238. «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մշակութային արժեքների պահպանման, տարածման, զարգացման և համաշխարհային հանրությանը պատշաճ ներկայացնելու համար պայմանների ստեղծում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 239. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, պահպանության, հնագիտական պեղումների, ամրակայման, վերականգնման և օգտագործման կանոնակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մշակութային արժեքների պահպանման, տարածման, զարգացման և համաշխարհային հանրությանը պատշաճ ներկայացնելու համար պայմանների ստեղծում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն<br>ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման վարչություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |
| 240. «Երիտասարդական և մանկական հասարակական կազմակերպություններին պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Երիտասարդ մարդու սոցիալական կայացման, նրա ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության օգտագործելու համար պայմանների և երաշխիքների ստեղծում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 241. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների և ուղղությունների, պետության պարտավորությունների, ֆիզիկական կուլտուրային և սպորտին պետական աջակցություն ցուցաբերելու ձևերի սահմանում, զանգվածային ֆիզիկական կուլտուրայի և բարձրակարգ սպորտի զարգացման համար պայմանների ստեղծում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 242. Սփյուռքի հետ համագործակցության զարգացման միջոցառումների ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սփյուռքի հետ համագործակցության զարգացում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 243. Հայաստանում սփյուռքահայ երեխաների հանգստի կազմակերպման, Հայաստանում մշակութային ճամբարի ստեղծման նախապատրաստական աշխատանքների ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սփյուռքահայ մատաղ սերնդի դաստիարակության համար պայմանների ստեղծում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2000թ. օգոստոս | |

XV. Տեղեկատվություն և գրահրատարակչություն

| | | | | |
|---|---|---|---|---|
| 244. Միջազգային տեղեկատվական համակարգերում Հայաստանի մասին արդիական և մշտապես թարմացվող տեղեկությունների ապահովման նպատակով իրականացվող միջոցառումների ժամանակացույցը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Միջազգային հանրությանը Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ համառոտ տեղեկատվության ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչություն | 2000թ. օգոստոս | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 245. ՀՀ կառավարության գործունեության առավելագույն հրապարակայնություն ապահովելու, հանրությանն ընդունվող քաղաքականությանը ներկայացնելու, կենսական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ հրապարակային քննարկումներ կազմակերպելու հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ կառավարության գործունեության արդյունավետության բարձրացում | ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչություն | 2000թ. օգոստոս | |
| XVI. Քաղաքաշինություն և տարածքային կառավարում | | | | |
| 246. «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Տարածքային կառավարման մարմինների լիազորությունների, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հետ նրանց փոխհարաբերությունների հստակեցում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |
| 247. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը | Համայնքի ավագանու գործունեության, նրա պատասխանատվության բարձրացման նպատակով լիազորությունների իրականացման մեխանիզմների կանոնակարգում, ավագանու կանոնակարգի սահմանում, ավագանու կողմից համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մեխանիզմների կոնկրետացում<br>Ավագանու լիազորությունների դադարեցման օրենսդրական կարգավորում<br>Համայնքի ղեկավարին մարզպետի կողմից անվստահություն հայտնելու մեխանիզմի և ընթացակարգի հստակեցում<br>Համայնքային սեփականության գույքի օտարման կարգի հստակեցում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 248. «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը | Մարզերի և բնակավայրերի սահմանների նկարագրում<br>Բնակավայրերի կրկնվող, օտար, անբարեհունչ անվանումների փոփոխում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն | 2000թ. ընթացքում | |
| 249. Սահմանամերձ, բարձր լեռնային բնակավայրերի զարգացման նպատակային ծրագրերի իրականացումն ապահովող մարզային ծրագրերի մշակում | Նշված բնակավայրերի առջև ծառացած սոցիալական հարցերի լուծում, ժողովրդագրական իրավիճակի կայունացում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն | 2000թ. | |
| 250. Մինչև 2002 թվականը աղետի գոտու վերականգնման հաստատված ծրագրի իրականացումն ապահովելու վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը | Աղետի գոտու լիարժեք վերականգնում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | ՀՀ պետական բյուջե և ֆինանսավորման այլ աղբյուրներ |
| 251. ՀՀ տարածքը արտածին վտանգավոր երկրաբանական երևույթներից պաշտպանության ոլորտում կառավարման համակարգի հայեցակարգային ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հանրապետությունում այդպիսի երևույթների կառավարման համակարգի ստեղծում, կանխարգելման միջոցառումների հիմնավորման և իրականացման շնորհիվ անվտանգության ապահովում, միջոցների արդյունավետ օգտագործում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն | 2001թ. առաջին եռամսյակ | |
| 252. Քաղաքաշինական կադաստրի ձևավորում | Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, քաղաքացիներին, քաղաքաշինական գործունեության այլ սուբյեկտներին քաղաքաշինական օբյեկտների վերաբերյալ ճշգրիտ, օպերատիվ, մատչելի տեղեկատվությամբ ապահովում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն | 2002թ. | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 253. Պետական քաղաքաշինական կադաստրի տեղագրագեոդեզիական և քարտեզագրական ապահովում | Քաղաքաշինական կադաստրի իրականացման համար տեղագրագեոդեզիական և քարտեզագրական ճշգրիտ, մատչելի տեղեկատվությամբ ապահովում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն | 2002թ. | |
| 254. Սահմանամերձ բնակավայրերում ռմբակոծությունների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավման ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Քանդված կամ քանդման ենթակա մոտ 300 բնակելի տների ընտանիքների նոր բնակարաններով ապահովում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 255. Քանդման ենթակա վթարային բնակելի տների (առանց աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) բնակիչների բնակարանային խնդիրների լուծման վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը | Քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրների աստիճանական լուծում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 256. Պետության կամ համայնքների կարիքների համար հողամաս վերցնելու հետևանքով բնակտարածությունից զրկված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Պետության կամ համայնքների կարիքների համար հողամաս վերցնելու հետևանքով բնակտարածությունից զրկված ընտանիքների բնակարանային խնդիրների աստիճանական լուծում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն | 2000թ. օգոստոս. | |
| 257. Համատիրություններին պետական աջակցության տրամադրման ուղղությունները և միջոցառումները ՀՀ կառավարություն ներկայացնելը | Համատիրությունների զարգացում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն | 2000թ. չորրորդ եռամսյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 258. Կամուրջների և այլ ինժեներական կառուցվածքների տեխնիկական վիճակի ուսումնասիրություն դրանից բխող միջոցառումների ծրագիրը» ՀՀ կառավարություն ներկայացնելը | Վնասվածքների և վթարավտանգ օջախների բացահայտում և վերացում՝ հետագա անվտանգ շահագործումն ապահովելու համար | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն, Երևանի քաղաքապետարան | 2000թ. նոյեմբեր | |
| 259. Բնական աղետների և արտակարգ իրավիճակների հետևանքով շենքերին և շինություններին հասցված վնասի չափի գնահատման կարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Վնասների չափի գնահատման կանոնակարգում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. նոյեմբեր | |
| 260. Խմելու ջրի և կոյուղու համակարգի ֆինանսական առողջացման ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Մինչև 2003 թվականը խմելու ջրի և կոյուղու համակարգի վերջնական ֆինանսական առողջացում | ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |

XVII. Քաղաքացիական պաշտպանություն

| | | | | |
|---|---|---|---|---|
| 261. Բնակչության՝ անհատական պաշտպանության միջոցներով ապահովման կարգի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Արտակարգ իրավիճակներում բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման գործընթացի կանոնակարգում | ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն | 2000թ. օգոստոս | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 262. Բնակչության՝ պատսպարման կարգի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Արտակարգ իրավիճակներում բնակչության պատսպարման գործընթացի կանոնակարգում | ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն | 2000թ. օգոստոս | |
| XVIII. Իրավական դաշտի զարգացում | | | | |
| 263. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշնանային նստաշրջանում քննարկման ենթակա ՀՀ օրենքների նախագծերի (մասնավորապես՝ «Քաղաքացիական ծառայության մասին», «Հայաստանի Հանրապետության Նախագահի, ինչպես նաև օրենսդիր, գործադիր, դատական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների, կենտրոնական բանկի ղեկավար աշխատողների, կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի և անդամների գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Ներքին շուկայի պաշտպանության մասին», «Հակագնագցման (հակադեմփինգային) և փոխհատուցման միջոցառումների մասին», «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքների և Հողային նոր օրենսգրքի նախագծերի) քննարկումների ժամանակացույցի համաձայնեցում | Իրավական դաշտի կատարելագործում (համապատասխան նախագծերի ընդունում) | ՀՀ կառավարության աշխատակազմ | 2000թ. օգոստոս | |
| 264. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական դաշտի կատարելագործում (նախագծի ընդունում) | ՀՀ արդարադատության նախարարություն | 2000թ. օգոստոս | |
| 265. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական դաշտի կատարելագործում (նախագծի ընդունում) | ՀՀ արդարադատության նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովվածությունը |
|---|---|---|---|---|
| 266. «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական դաշտի կատարելագործում (նախագծի ընդունում) | ՀՀ արդարադատության նախարարություն | 2000թ. սեպտեմբեր | |
| 267. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական դաշտի կատարելագործում (նախագծի ընդունում) | ՀՀ արդարադատության նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 268. «Գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական դաշտի կատարելագործում (նախագծի ընդունում) | ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ) | 2000թ. հոկտեմբեր | |
| 269. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական դաշտի կատարելագործում (նախագծի ընդունում) | ՀՀ արդարադատության նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 270. «Պետական սեփականություն համարվող հողերի օտարման կարգի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական դաշտի կատարելագործում (նախագծի ընդունում) | ՀՀ արդարադատության նախարարություն | 2000թ. հոկտեմբեր | |
| 271. «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական դաշտի կատարելագործում (նախագծի ընդունում) | ՀՀ ազգային անվտանգության նախարարություն | 2000թ. դեկտեմբեր | |
| 272. «Սահմանապահ զորքերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական դաշտի կատարելագործում (նախագծի ընդունում) | ՀՀ ազգային անվտանգության նախարարություն | 2000թ. դեկտեմբեր | |
| 273. «Արժեքների անվտանգ փոխադրում իրականացնող կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական դաշտի կատարելագործում (նախագծի ընդունում) | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ) | 2000թ. չորրորդ եռամսյակ | |